

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի 2000/60/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(ՊՏ L 327, 22.12.2000թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

Թիվ էջ Ամսաթիվ

<u>M1</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 L 331 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 2455/2001/ԵՀ որոշմամբ	1	15.12.2001թ.
►<u>M2</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 81 թվականի մարտի 11-ի 2008/32/ԵՀ հրահանգով	60	20.03.2008թ. .
►<u>M3</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 348 թվականի դեկտեմբերի 16-ի 2008/105/ԵՀ հրահանգով	84	24.12.2008թ.
►<u>M4</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 L 140 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգով	114	5.06.2009թ.

▼B

**Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը
սահմանող՝**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի
2000/60/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով (4) սահմանված ընթացակարգի համաձայն և
ելնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 2000 թվականի հուլիսի 18-ին հաստատված
համատեղ տեքստից,

Քանի որ

- 1) ջուրն այլ ապրանքների նման կոմերցիոն արտադրանք չէ, այլ ավելի շուտ՝
ժառանգություն, որն ըստ էության ունի պահպանության, պաշտպանության և
համապատասխան վերաբերմունքի կարիք,
- 2) 1988 թվականին Ֆրանկֆուրտում կայացած Համայնքի ջրային քաղաքականության
նախարարական սեմինարի ընթացքում կայացված եզրակացություններով ընդգծվեց
էկոլոգիական որակին վերաբերող՝ Համայնքի օրենսդրություն ունենալու
անհրաժեշտությունը: 1988 թվականի հունիսի 28-ի իր բանաձևում (5) Խորհուրդը
խնդրել է Հանձնաժողովին ներկայացնել Համայնքի մակերևութային ջրերի
էկոլոգիական որակի բարելավմանն ուղղված առաջարկներ,
- 3) 1991 թվականին Հաագայում կայացած՝ Ստորերկրյա ջրերին նվիրված նախարարական

սեմինարի հոչակագրով ճանաչվեց քաղցրահամ ջրերի որակի ու քանակի երկարաժամկետ վատթարացումից խուսափելու նպատակով գործողությունների իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև կոչ արեց մշակելու մինչև 2000 թվականն իրականացվելիք գործողությունների ծրագիր՝ նպատակաուղղված քաղցրահամ ջրերի ռեսուրսների կայուն կառավարմանն ու պաշտպանությանը: 1992 թվականի փետրվարի 25-ի (6) և 1995 թվականի փետրվարի 20-ի (7) իր բանաձևերում Խորհուրդը, որպես քաղցրահամ ջրերի պահպանության համալիր քաղաքականության մաս, պահանջեց մշակել ստորերկրյա ջրերին ուղղված գործողությունների ծրագիր, ինչպես նաև վերանայել «Որոշակի վտանգավոր նյութերով աղտոտումից ստորերկրյա ջրերի պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի 80/68/ԵՏՀ հրահանգը(8),

- 4) Համայնքում ջրերը գտնվում են աճող ճնշումների տակ՝ կապված տարբեր նպատակներով օգտագործման համար լավ որակի և բավարար քանակի ջրի պահանջարկի շարունակական աճի հետ: 1995 թվականի նոյեմբերի 10-ին Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունն իր՝ «Շրջակա միջավայրը Եվրոպական միությունում-1995» զեկույցում ներկայացրեց շրջակա միջավայրի արդի վիճակի մասին զեկույց՝ հաստատելով Համայնքի ջրերի պահպանությանն ուղղված գործողությունների անհրաժեշտությունն ինչպես որակի, այնպես էլ քանակի տեսանկյունից,
- 5) 1995 թվականի դեկտեմբերի 18-ին Խորհուրդն ընդունեց եզրակացություններ, որոնցով մասնավորապես պահանջվում էր կազմել նոր շրջանակային հրահանգ, որով կսահմանվեր Եվրոպական միությունում կայուն ջրային քաղաքականության հիմնական սկզբունքները և կոչ կարվեր Հանձնաժողովին հանդես գալ առաջարկով,
- 6) 1996 թվականի փետրվարի 21-ին Հանձնաժողովն ընդունեց Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ուղղված՝ Եվրոպական համայնքի ջրային քաղաքականության մասին հաղորդագրություն, որով սահմանվում էին Համայնքի ջրային քաղաքականության սկզբունքները,
- 7) 1996 թվականի սեպտեմբերի 9-ին Հանձնաժողովը ներկայացրեց առաջարկ՝ «Ստորերկրյա ջրերի միասնական պահպանությանն ու կառավարմանն ուղղված գործողությունների ծրագրի մասին»(9) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի

որոշման համար: Այդ առաջարկում Հանձնաժողովն ընդգծեց քաղցրահամ ջրերի ջրառի կարգավորման, ինչպես նաև քաղցրահամ ջրերի որակի և քանակի դիտանցման ընթացակարգեր սահմանելու անհրաժեշտությունը,

- 8) 1995 թվականի մայիսի 29-ին Հանձնաժողովն ընդունեց Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ուղղված հաղորդագրություն՝ գերխոնավ տարածքների խելամիտ օգտագործման և պահպանման վերաբերյալ, որով ճանաչվեց դրանց կարևոր դերը ջրային ռեսուրսների պահպանության գործում,
- 9) անհրաժեշտ է մշակել ջրային ոլորտին ուղղված՝ Համայնքի միասնական քաղաքականություն,
- 10) 1996 թվականի հունիսի 25-ին Խորհուրդը, 1996 թվականի սեպտեմբերի 19-ին Տարածաշրջանային հարցերով կոմիտեն, 1996 թվականի սեպտեմբերի 26-ին Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեն և 1996 թվականի հոկտեմբերի 23-ին Եվրոպական պառլամենտը Հանձնաժողովից պահանջեցին հանդես գալ առաջարկով՝ Եվրոպական ջրային քաղաքականության շրջանակ սահմանող՝ Խորհրդի հրահանգի առնչությամբ,
- 11) ինչպես սահմանված է Պայմանագրի 174-րդ հոդվածով, շրջակա միջավայրին ուղղված Համայնքի քաղաքականությամբ պետք է խթանվի շրջակա միջավայրի որակի պաշտպանության, պահպանության և բարելավման, բնական ռեսուրսների խելամիտ ու ռացիոնալ օգտագործման նպատակների իրականացումը, և պետք է հիմնված լինի նախազգուշացման սկզբունքի, ինչպես նաև այնպիսի սկզբունքների վրա, որոնց համաձայն պետք է ձեռնարկվեն կանխարգելիչ միջոցներ, շրջակա միջավայրին հասցված վնասը պետք է առաջնահերթության կարգով վերացվի աղբյուրի մոտ, իսկ աղտոտողը պետք է վճարի,
- 12) Պայմանագրի 174-րդ հոդվածի համաձայն՝ շրջակա միջավայրին ուղղված քաղաքականության մշակման ընթացքում Համայնքը պետք է հաշվի առնի գոյություն ունեցող գիտական և տեխնիկական տվյալները, Համայնքի տարբեր տարածաշրջաններում շրջակա միջավայրի վիճակը, Համայնքի, որպես մի ամբողջություն, տնտեսական և սոցիալական զարգացումն ու տարածաշրջանների համաչափ զարգացումը, և գործողությունների իրականացման կամ չիրականացման

դեպքում՝ հնարավոր օգուտներն ու ծախսերը,

- 13) Համայնքում առկա են բազմազան պայմաններ և կարիքներ, որոնք տարբեր առանձնահատուկ լուծումներ են պահանջում: Այդ բազմազանությունն անհրաժեշտ է հաշվի առնել գետավազանի շրջանակներում ջրերի պահպանությունը և կայուն օգտագործումն ապահովող գործողությունները պլանավորելիս ու իրականացնելիս: Որոշումները պետք է կայացվեն հնարավորինս մոտ այն տարածքներին, որտեղ ջուրն ազդեցության է ենթարկվում կամ օգտագործվում: Առաջնահերթություն պետք է տրվի անդամ պետությունների իրավասությունների շրջանակում իրականացվող գործողություններին՝ տարածաշրջանային և տեղական պայմանների հետ համապատասխանեցված միջոցառումների ծրագրերի մշակման միջոցով,
- 14) սույն Հրահանգի հաջողությունը պայմանավորված է Համայնքի, անդամ պետությունների և տեղական մակարդակում սերտ համագործակցությամբ ու հետևողական գործողություններով, ինչպես նաև հանրությանը, նաև օգտագործողներին տեղեկատվությամբ, խորհրդատվությամբ ու նրանց մասնակցությամբ,
- 15) ջրամատակարարումն ընդհանուր նշանակության ծառայություն է, ինչպես սահմանված է Եվրոպայում ընդհանուր նշանակության ծառայությունների վերաբերյալ Հանձնաժողովի հաղորդագրությամբ (10),
- 16) անհրաժեշտ է իրականացնել ջրի պահպանության և կայուն կառավարման հետագա ինտեգրում Համայնքի այն քաղաքականություններում, որոնք ուղղված են էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության, տարածաշրջանային քաղաքականության ու զբոսաշրջության ոլորտներին: Սույն Հրահանգով պետք է հիմքեր ապահովվեն շարունակական երկխոսության և քաղաքականության ոլորտների հետագա ինտեգրման նպատակով ռազմավարությունների մշակման համար: Սույն Հրահանգով կարող է նաև կարևոր ներդրում կատարվել այլ ոլորտներում և, մասնավորապես, Եվրոպական տարածական զարգացման հեռանկարի (ԵՏԶՀ) բնագավառում, անդամ պետությունների միջև համագործակցության ձևավորման հարցում,

- 17) արդյունավետ և հետևողական ջրային քաղաքականությունը պետք է հաշվի առնի առափնյա վայրերին ու գետախորշերին կամ ծովածոցերին կամ ներքին ծովերին մոտ գտնվող ջրային էկոհամակարգերի խոցելիությունը, քանի որ այդ էկոհամակարգերի հավասարակշռությունը մեծապես կախված է դրանց մեջ հոսող ներքին ջրերի որակից: Գետավազաններում ջրի վիճակի պահպանումը տնտեսական օգուտ կապահովի՝ նպաստելով ձկների պոպուլյացիաների պահպանությանը՝ ներառյալ ձկների ավամերձ պոպուլյացիաները,
- 18) Համայնքի ջրային քաղաքականությունը պահանջում է թափանցիկ, արդյունավետ և հետևողական օրենսդրական դաշտի առկայություն: Համայնքը գործողությունների համար պետք է ընդհանուր սկզբունքներ ու շրջանակ ապահովի: Սույն Հրահանգը նախատեսում է այդպիսի շրջանակ, համակարգում, հնտեգրում, իսկ հետագայում նաև զարգացնում է Համայնքում ջրերի պահպանության ու կայուն օգտագործման համընդհանուր սկզբունքներն ու կառույցները՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան,
- 19) սույն Հրահանգի նպատակը Համայնքում ջրային միջավայրի պահպանումն ու բարելավումն է: Այդ նպատակը նախ և առաջ վերաբերում է ջրերի որակի խնդրին: Քանակի վերահսկումը ջրի լավ որակի ապահովման համար լրացուցիչ բաղադրիչ է, ուստի պետք է նախատեսվեն ջրի լավ որակ ապահովելու նպատակին ծառայող և քանակ ապահովող միջոցներ,
- 20) ստորերկրյա ջրային մարմնի քանակական վիճակը կարող է ազդեցություն ունենալ այդ ստորերկրյա ջրային մարմնի հետ առնչվող մակերևութային ջրերի ու ցամաքային էկոհամակարգերի էկոլոգիական որակի վրա,
- 21) Համայնքը և անդամ պետությունները միացել են տարբեր միջազգային համաձայնագրերի, որոնցով կարևոր պարտավորություններ են ստանձնել՝ ծովային ջրերն աղտոտումից պաշտպանելու առնչությամբ: Մասնավորապես, այդ համաձայնագրերի շարքում են՝ «Բալթիկ ծովի ավազանում ծովային միջավայրի պաշտպանության մասին» կոնվենցիան՝ ստորագրված 1992 թվականի ապրիլի 9-ին Հելսինկիում և հաստատված Խորհրդի 94/157/ԵՀ որոշմամբ (11), «Հյուսիսարևմտյան ատլանտյան տարածաշրջանի ծովային միջավայրի պաշտպանության մասին»

կոնվենցիան՝ ստորագրված 1992 թվականի սեպտեմբերի 22-ին Փարիզում և հաստատված Խորհրդի 98/249/ԵՀ որոշմամբ (12), «Միջերկրական ծովն աղտոտումից պաշտպանելու մասին» կոնվենցիան՝ ստորագրված 1976 թվականի փետրվարի 16-ին Բարսելոնում և հաստատված Խորհրդի 77/585/ԵՏՀ որոշմամբ (13), ինչպես նաև նշված կոնվենցիայի՝ «Միջերկրական ծովը ցամաքային աղբյուրներից աղտոտումից պաշտպանելու մասին» արձանագրությունը՝ ստորագրված 1980 թվականի մայիսի 17-ին Աթենքում և հաստատված Խորհրդի 83/101/ԵՏՀ որոշմամբ (14): Սույն Հրահանգով պետք է աջակցություն ցուցաբերվի Համայնքին ու անդամ պետություններին՝ իրենց պարտավորությունների կատարման գործում,

- 22) սույն Հրահանգը պետք է նպաստի ջրի մեջ վտանգավոր նյութերի արտահոսքերի աստիճանական կրճատմանը,
- 23) անհրաժեշտ են ընդհանուր սկզբունքներ, որոնք կհամակարգեն անդամ պետությունների ջանքերը՝ ուղղված Համայնքի ջրերի՝ որակական և քանակական տեսանկյունից պաշտպանության բարելավմանը, կայուն ջրօգտագործման, անդրսահմանային ջրերին առնչվող խնդիրների վրա հսկողության խթանմանը, ջրային էկոհամակարգերի ու դրանցից անմիջականորեն կախված՝ ցամաքային էկոհամակարգերի ու գերխոնավ տարածքների պահպանությանը, ինչպես նաև համայնքային ջրերի պոտենցիալ օգտագործումների պաշտպանությանն ու զարգացմանը,
- 24) ջրի լավ որակը կնպաստի բնակչությանը խմելու ջրի մատակարարմամբ ապահովելուն,
- 25) պետք է սահմանվեն ջրի վիճակի ընդհանուր սահմանումներ՝ կապված ջրի որակի, իսկ շրջակա միջավայրի պաշտպանության համատեքստում՝ նաև ջրի քանակի հետ Պետք է սահմանվեն բնապահպանական նպատակներ՝ Համայնքում մակերևութային ու ստորերկրյա ջրերի լավ վիճակ ապահովելու և Համայնքի մակարդակով ջրերի վիճակի վատթարացումը կանխելու պահանջն ապահովելու համար,
- 26) անդամ պետությունները պետք է ձգտեն իրականացնել ջրի առնվազն լավ վիճակ ապահովելու նպատակը՝ միջոցառումների միասնական ծրագրի շրջանակներում անհրաժեշտ միջոցներ սահմանելով և իրականացնելով՝ հաշվի առնելով Համայնքի՝ գոյություն ունեցող պահանջները: Եթե արդեն իսկ առկա է ջրի լավ վիճակ, այն

անհրաժեշտ է պահպանել: Ստորերկրյա ջրերի պարագայում, ի հավելումն լավ վիճակի ապահովելու պահանջների, անհրաժեշտ է բացահայտել և կանխել որևէ աղտոտիչի կոնցենտրացիայի էական և կայուն աճի ցանկացած միտում,

- 27) սույն Հրահանգի վերջնական նպատակը առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերի վերացումն ապահովելը և նպաստելն է, որ ծովային միջավայրում դրանց կոնցենտրացիաները բնականորեն գոյացող նյութերի համար մոտ լինեն ֆոնային արժեքներին,
- 28) մակերևութային ջրերն ու ստորերկրյա ջրերը սկզբունքորեն վերականգնվող բնական ռեսուրսներ են. մասնավորապես, ստորերկրյա ջրերի լավ վիճակի ապահովման խնդիրը պահանջում է հրատապ գործողություններ և պաշտպանական միջոցների կայուն երկարաժամկետ պլանավորում՝ հաշվի առնելով բնական պայմաններում դրանց գոյացման ու վերականգնման համար պահանջվող ժամանակահատվածը: Բարելավման այդ ժամանակահատվածը պետք է հաշվի առնվի նաև ստորերկրյա ջրերի լավ վիճակ ապահովելու և ստորերկրյա ջրերում որևէ աղտոտիչի կոնցենտրացիայի էական ու կայուն աճի միտումը փոփոխելու համար մշակվող միջոցների ժամանակացույցներում,
- 29) սույն Հրահանգով սահմանված նպատակներին հասնելու և այդ նպատակով միջոցառումների ծրագիր մշակելու համար անդամ պետությունները կարող են միջոցառումների ծրագիրն իրականացնել փուլ առ փուլ՝ ծրագրի իրականացման ծախսերը համապատասխանաբար բաշխելու համար,
- 30) սույն Հրահանգի լիարժեք ու հետևողական իրականացումն ապահովելու նպատակով՝ ժամկետի ցանկացած երկարաձգում պետք է կատարվի համապատասխան, ակնհայտ ու թափանցիկ չափորոշիչների հիման վրա և հիմնավորվի անդամ պետությունների կողմից՝ գետավազանային կառավարման պլաններում,
- 31) այն դեպքերում, երբ ջրային մարմնի վրա մարդկային գործունեության ազդեցությունը կամ ջրային մարմնի բնական պայմաններն այնպիսին են, որ լավ վիճակ ապահովելու համար պահանջվում են անհրատեսական կամ անհիմն ծախսեր, համապատասխան, ակնհայտ ու թափանցիկ չափորոշիչների հիման վրա պետք է սահմանվեն առավել մեղմ բնապահպանական պահանջներ, և պետք է ձեռնարկվեն բոլոր գործնական

քայլերը՝ ջրերի վիճակի հետագա վատթարացումը կանխելու համար,

- 32) կարող են լինել որոշակի հիմքեր և կոնկրետ պայմաններ, որոնց դեպքում ջրերի վիճակի հետագա վատթարացումը կանխելու կամ ջրերի լավ վիճակ ապահովելու պահանջները կարող են չկիրառվել, եթե դրա պատճառն անկանխատեսելի կամ բացառիկ հանգամանքները, մասնավորապես՝ ջրհեղեղներն ու երաշտներն են, կամ էլ դա պայմանավորված է հանրային գերակա շահով, մակերևութային ջրային մարմնի ֆիզիկական բնութագրիչների նոր փոփոխություններով կամ ստորերկրյա ջրային մարմինների մակարդակի տատանումներով՝ պայմանով, որ ձեռնարկվեն ջրային մարմնի վիճակի վրա բացասական ազդեցության մեղմացմանն ուղղված բոլոր գործնական քայլերը,
- 33) ջրերի լավ վիճակ ապահովելու նպատակը պետք է իրականացվի յուրաքանչյուր գետավազանի համար, որպեսզի միևնույն էկոլոգիական, հիդրոլոգիական և հիդրոերկրաբանական համակարգին պատկանող մակերևութային ու ստորերկրյա ջրերին առնչվող միջոցները համակարգվեն,
- 34) շրջակա միջավայրի պաշտպանության նպատակներով անհրաժեշտ է մակերևութային և ստորերկրյա ջրերի որակական ու քանակական գործոնների ավելի սերտ ինտեգրում՝ հաշվի առնելով հիդրոլոգիական ցիկլում ջրի բնական հոսքի պայմանները,
- 35) այն գետավազանում, որտեղ ջրօգտագործումը կարող է ունենալ անդրսահմանային ազդեցություններ, սույն Հրահանգով սահմանված բնապահպանական նպատակների իրագործման համար նախատեսված պահանջները, և մասնավորապես, բոլոր միջոցառումների ծրագրերը պետք է համակարգվեն ամբողջ գետավազանային տարածքի մասով: Համայնքի սահմաններից դուրս ձգվող գետավազանների համար անդամ պետությունները պետք է ձգտեն անդամ չհանդիսացող համապատասխան պետությունների հետ պատշաճ համակարգում ապահովել: Սույն Հրահանգը պետք է նպաստի ջրի պահպանությանը և կառավարմանը վերաբերող միջազգային կոնվենցիաներով, մասնավորապես՝ Միավորված Ազգերի Կազմակերպության «Անդրսահմանային ջրային հոսանքների և միջազգային լճերի պահպանության ու օգտագործման մասին» կոնվենցիայով (Խորհրդի 95/308/ԵՀ հրահանգով (15) հաստատված) և դրա կիրառության մասին հետագա համաձայնագրերով Համայնքի

ստանձնած պարտավորությունների կատարմանը,

- 36) անհրաժեշտ է իրականացնել գետավազանի բնութագրիչների և մարդկային գործունեության ազդեցությունների վերլուծություն, ինչպես նաև ջրօգտագործման տնտեսական վերլուծություն: Ջրի վիճակում նկատվող զարգացումները Համայնքում պետք է դիտանցվեն անդամ պետությունների կողմից՝ համակարգված և համադրելի կերպով: Այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է սույն Հրահանգով սահմանված նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր մշակելիս անդամ պետություններին ամուր հիմքեր տրամադրելու համար,
- 37) անդամ պետությունները պետք է որոշեն, թե որ ջրերն են օգտագործվում խմելու նպատակով ջրառի համար և ապահովեն դրանց համապատասխանությունը Մարդու սպառման համար նախատեսված ջրերի որակին վերաբերող՝ Խորհրդի 1980 թվականի հուլիսի 15-ի 80/778/ԵՏՀ հրահանգին (16),
- 38) անդամ պետությունների կողմից տնտեսական գործիքների օգտագործումը կարող է լինել տեղին՝ որպես միջոցառումների ծրագրի մի մաս: Ջրային ոլորտի ծառայությունների ծախսերի ծածկման սկզբունքը՝ ներառյալ բնապահպանական ու ռեսուրսների ծախսերը, որոնք առնչվում են ջրային միջավայրին հասցվող վնասին կամ բացասական ազդեցությանը, պետք է հաշվի առնվի՝ մասնավորապես, «վճարում է աղտոտողը» սկզբունքին համապատասխան: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել գետավազանային տարածքում ջրի առաջարկի և պահանջարկի երկարաժամկետ կանխատեսումների վրա հիմնված՝ ջրային ոլորտի ծառայությունների տնտեսական վերլուծություն,
- 39) անհրաժեշտ է կանխարգելել կամ կրճատել վթարների ազդեցությունը, որոնց ժամանակ ջրի անկանխատեսելի աղտոտում է տեղի ունեցել: Այդ խնդրի լուծմանն ուղղված միջոցառումները պետք է ընդգրկվեն միջոցառումների ծրագրերում,
- 40) աղտոտման կանխարգելման ու վերահսկողության տեսանկյունից Համայնքի ջրային քաղաքականությունը պետք է հիմնված լինի համալիր մոտեցման վրա՝ աղբյուրում աղտոտման վերահսկողություն իրականացնելով սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշներ և շրջակա միջավայրի որակի ստանդարտներ սահմանելու

միջոցով,

- 41) ջրի քանակի համար պետք է սահմանվեն ջրառի և ջրի ամբարման նկատմամբ վերահսկողության ընդհանուր սկզբունքներ՝ ազդեցության ենթարկված ջրային համակարգերի էկոլոգիական կայունությունն ապահովելու նպատակով,
- 42) Համայնքի օրենսդրության մեջ, որպես նվազագույն պահանջներ, պետք է սահմանվեն շրջակա միջավայրի որակի ընդհանուր ստանդարտներ և սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշներ՝ որոշակի խմբերի կամ ընտանիքների պատկանող աղտոտիչների համար: Համայնքի մակարդակով այդ ստանդարտների ընդունման համար անհրաժեշտ է դրույթներ ապահովել,
- 43) առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերի արտանետման, արտահոսքի կամ կորստի հետևանքով աղտոտումը պետք է վերացվի անհապաղ կամ աստիճանաբար: Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը պետք է, Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, համաձայնության գան առաջնահերթ գործողություններ պահանջող նյութերի և այդ նյութերով ջրի աղտոտման դեմ պայքարելու համար ձեռնարկվող հատուկ միջոցների շուրջ՝ հաշվի առնելով աղտոտման բոլոր էական աղբյուրները և որոշելով վերահսկողության միջոցների տնտեսապես արդյունավետ ու համարժեք մակարդակը, ինչպես նաև այդ գործողությունների համակցությունը,
- 44) առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերը որոշելիս պետք է հաշվի առնվի նախազգուշացման սկզբունքը՝ հիմք ընդունելով, մասնավորապես, արտադրանքի հնարավոր ցանկացած բացասական ազդեցության սահմանումը և ռիսկի գիտականորեն հիմնավորված գնահատումը,
- 45) անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերով մակերևութային ջրերի աղտոտումը վերացնելու, ինչպես նաև այլ նյութերով աղտոտումն աստիճանաբար կրճատելու ուղղությամբ՝ հակառակ դեպքում անդամ պետություններն ի վիճակի չեն լինի հասնելու մակերևութային ջրային մարմինների համար սահմանված նպատակներին,
- 46) գետավազանային կառավարման պլանների մշակման և թարմացման գործում

հասարակության, այդ թվում՝ ջրօգտագործողների մասնակցությունն ապահովելու համար, անհրաժեշտ է պատշաճ տեղեկատվություն տրամադրել պլանավորվող միջոցների մասին և հաշվետու լինել դրանց իրականացման ընթացքում արձանագրված առաջընթացի մասին՝ նպատակ ունենալով ներգրավելու հասարակությանը՝ նախքան անհրաժեշտ միջոցների վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը,

- 47) սույն Հրահանգը ջրի վիճակի բարելավման առաջընթացին խոչընդոտող երևույթներին դիմակայելու համար պետք է սահմանի մեխանիզմներ, երբ այդ երևույթները դուրս են մնում Համայնքի ջրային օրենսդրության շրջանակներից՝ նպատակ ունենալով այդ խոչընդոտները հաղթահարելու համար մշակել Համայնքի համապատասխան ռազմավարություններ,
- 48) Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի պետք է ներկայացնի թարմացված ծրագիր այն բոլոր նախաձեռնությունների համար, որոնք այն նախատեսում է առաջարկել ջրային ոլորտում,
- 49) պետք է սահմանվեն տեխնիկական մասնագրեր՝ Համայնքում սույն Հրահանգից բխող հետևողական մոտեցումներ ապահովելու համար: Ջրի վիճակի գնահատման չափորոշիչները առաջընթացի կարևոր քայլ են: Տեխնիկական զարգացումներին համապատասխանեցված որոշ տեխնիկական տարրեր և դիտանցման, նմուշառման և վերլուծության ստանդարտացված մեթոդները պետք է ընդունվեն՝ կոմիտեի սահմանած ընթացակարգին համապատասխան: Գետավազանային տարածքների բնութագրման և ջրի վիճակի գնահատման չափորոշիչները լիարժեք չափով հասկանալուն ու դրանց հետևողական կիրառմանը նպաստելու համար Հանձնաժողովը կարող է այդ չափորոշիչների կիրառման ուղեցույցներ ընդունել,
- 50) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան (17),
- 51) սույն Հրահանգի կիրարկման նպատակը ջրերի պահպանության այնպիսի մակարդակ ապահովելն է, որն առնվազն հավասարազոր է նախկինում ընդունված որոշ

իրավական ակտերով սահմանված մակարդակներին, որոնք պետք է սույն Հրահանգի դրույթների լիարժեք կիրարկումից հետո համապատասխանաբար ուժը կորցրած ճանաչվեն,

52) սույն Հրահանգի դրույթները փոխարինում են 76/464/ԵՏՀ հրահանգով (18) սահմանված՝ վտանգավոր նյութերով աղտոտման վերահսկման շրջանակին: Սույն Հրահանգի համապատասխան դրույթների լիարժեք կիրարկումից հետո այդ Հրահանգն ուժը կորցրած պետք է ճանաչվի,

53) պետք է ապահովվեն ջրերի պահպանությանը վերաբերող՝ գոյություն ունեցող բնապահպանական օրենսդրության լիարժեք կիրարկումն ու կատարումը: Անհրաժեշտ է Համայնքի ամբողջ տարածքում ապահովել սույն Հրահանգը կիրարկող ակտերի պատշաճ կիրառություն՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատժամիջոցների միջոցով: Նման պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգի նպատակը ներքին մակերևութային ջրերի, անդրսահմանային ջրերի, առափնյա ջրերի և ստորերկրյա ջրերի պահպանության շրջանակը ստեղծելն է, որը՝

ա) կանխում է հետագա վատթարացումը, պաշտպանում և բարելավում է ջրային էկոհամակարգերի վիճակը, իսկ ելնելով դրանց ջրային պահանջներից, նաև ջրային էկոհամակարգերից անմիջականորեն կախված ցամաքային էկոհամակարգերի և գերխոնավ տարածքների վիճակը.

բ) խթանում է կայուն ջրօգտագործումը՝ հիմնվելով առկա ջրային ռեսուրսների երկարաժամկետ պահպանության վրա.

գ) նպատակաուղղված է ջրային միջավայրի ընդլայնված պահպանությանն ու բարելավմանը մասնավորապես առաջնահերթ գործողություններ պահանջող նյութերի արտանետումների, արտահոսքերի և կորուստների աստիճանական կրճատման, ինչպես նաև առաջնահերթ միջոցառումներ պահանջող՝ վտանգավոր նյութերի արտանետումների, արտահոսքերի ու կորուստների անհապաղ կամ աստիճանական վերացմանն ուղղված հատուկ միջոցների իրականացման շնորհիվ.

դ) ապահովում է ստորերկրյա ջրերի աղտոտման աստիճանական կրճատումն ու կանխարգելում հետագա աղտոտումը.

ե) նպաստում է հեղեղումների և երաշտների ազդեցությունների մեղմացմանը՝

դրանով իսկ նպաստելով՝

— կայուն, հավասարաչափ և արդարացի ջրօգտագործման համար անհրաժեշտ՝ բավարար քանակությամբ լավ որակի մակերևութային ջրերի և ստորերկրյա ջրերի մատակարարմանը,

— ստորերկրյա ջրերի աղտոտման զգալի կրճատմանը,

— ցամաքային և ծովային ջրերի պահպանությանը և

— համապատասխան միջազգային համաձայնագրերի նպատակների իրականացմանը՝ ներառյալ այն նպատակները, որոնք ուղղված են ծովային միջավայրի աղտոտումը կանխարգելելուն և վերացնելուն,¹⁶⁽³⁾ հողվածի համաձայն Համայնքում իրականացվող գործողությունների միջոցով, առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերի արտանետումների, արտահոսքերի և կորուստների անհապաղ կամ աստիճանական վերացմանը՝ որպես վերջնական նպատակ՝ ծովային միջավայրում ապահովելով այնպիսի կոնցենտրացիաներ, որոնք բնականորեն գոյացող նյութերի համար մոտ են ֆոնային արժեքներին, իսկ անտրոպոգեն սինթետիկ նյութերի համար մոտ են զրոյին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. մակերևութային ջրեր՝ ներքին ջրեր՝ բացառությամբ ստորերկրյա ջրերի, տարանցիկ և առափնյա ջրեր, իսկ քիմիական վիճակի առնչությամբ ներառվում են նաև տարածքային ջրերը.
2. ստորերկրյա ջրեր՝ բոլոր այն ջրերը, որոնք երկրի մակերևութից ներքև գտնվող հագեցման գոտում են և անմիջական շփման մեջ են գտնվում հողերի կամ ենթահողերի հետ.
3. ներքին ջրեր՝ հողի մակերևութի վրա բոլոր անշարժ կամ հոսող ջրերը, ինչպես նաև այն հենակետից դեպի ասֆ գտնվող բոլոր ստորերկրյա ջրերը, որից չափվում է ցամաքային ջրերի լայնությունը.
4. գետ՝ ներքին ջրային մարմին, որը մեծամասամբ հոսում է երկրի մակերևութով, սակայն դրա հոսանքի որոշակի հատվածներում կարող է անցնել գետնի տակ.
5. լիճ՝ անշարժ ներքին մակերևութային ջրային մարմին.
6. տարանցիկ ջրեր՝ գետաբերանների շրջակայքում գտնվող մակերևութային ջրային այն մարմինները, որոնք, ասֆամերձ ջրերին մոտ լինելու պատճառով, բնույթով մասնակիորեն աղակալված են, սակայն էական ազդեցություն են կրում քաղցրահամ ջրերի հոսքերից.
7. առափնյա ջրեր՝ մակերևութային ջրեր դեպի ցամաք ձգվող այն գծում,, որի ցանկացած կետ, որը գտնվում է ծովի կողմում, տարածքային ջրերի լայնության չափման հիմնակետի մոտակա կետից գտնվում է մեկ ծովային մղոն հեռավորության վրա՝ անհրաժեշտության դեպքում ձգվելով մինչև տարանցիկ ջրերի արտաքին սահման.
8. արհեստական ջրային մարմին՝ մարդու գործունեության արդյունքում ստեղծված մակերևութային ջրային մարմին.
9. խիստ փոփոխված ջրային մարմին՝ մակերևութային ջրային մարմին, որը մարդու գործունեությամբ պայմանավորված ֆիզիկական փոփոխությունների արդյունքում

էականորեն փոխել է իր բնույթը, ինչպես նախատեսված է անդամ պետության կողմից՝ II հավելվածի դրույթներին համապատասխան.

10. մակերևութային ջրային մարմին՝ մակերևութային ջրերի ընդհատուն և էական տարր, ինչպիսին է լիճը, ջրամբարը, առուն, գետը կամ ջրանցքը, առվի, գետի, կամ ջրանցքի մի հատվածը, տարանցիկ ջրերը, կամ առափնյա ջրերի շղթան.

11. ջրատար հորիզոն՝ բավարար ծակոտկենություն և թողունակություն ունեցող լեռնային ենթամակերևութային շերտ կամ շերտեր կամ երկրաբանական այլ շերտ, որոնք թույլ են տալիս ստորերկրյա ջրերի զգալի հոսք կամ ստորերկրյա ջրերի զգալի քանակությամբ ջրառ.

12. ստորերկրյա ջրային մարմին՝ ստորերկրյա ջրերի որոշակի ծավալ տվյալ ջրատար հորիզոնում կամ հորիզոններում.

13. գետավազան՝ հողատարածք, որից բոլոր մակերևութային ջրերն առունների, գետերի, հնարավոր է նաև լճերի միջոցով հոսում են դեպի ծով՝ ունենալով միևնույն գետաբերանը, գետաբերանածոցն ու դելտան.

14. ենթաավազան՝ հողատարածք, որից բոլոր մակերևութային ջրերն առունների, գետերի, հնարավոր է նաև՝ լճերի միջոցով հոսում են դեպի ջրի հոսքի որոշակի կետ (սովորաբար լճերի կամ գետերի միախառնման կետ).

15. գետավազանային տարածք՝ մեկ կամ մի քանի հարակից գետավազաններից և նրանց առնչվող ստորերկրյա ջրերից ու առափնյա ջրերից կազմված ցամաքի և ծովի մակերես, որը, համաձայն 3(1) հոդվածի, սահմանվում է որպես գետավազանների կառավարման հիմնական միավոր.

16. իրավասու մարմին՝ 3(2) կամ 3(3) հոդվածով սահմանված մարմին կամ մարմիններ.

17. մակերևութային ջրերի վիճակ՝ մակերևութային ջրային մարմնի վիճակը բնութագրող ընդհանուր արտահայտություն, որը որոշվում է դրա էկոլոգիական և քիմիական ամենավատ վիճակից.

18. մակերևութային ջրերի լավ վիճակ՝ մակերևութային ջրային մարմնի կողմից ձեռք բերված վիճակ, երբ դրա էկոլոգիական և քիմիական վիճակը գնահատվում է առնվազն «լավ».

19. ստորերկրյա ջրերի վիճակ՝ ստորերկրյա ջրային մարմնի վիճակը բնութագրող ընդհանուր արտահայտություն, որը որոշվում է դրա քանակական և քիմիական վատ վիճակից.

20. ստորերկրյա ջրերի լավ վիճակ՝ ստորերկրյա ջրային մարմնի կողմից ձեռք բերված վիճակ, երբ դրա քանակական ու, քիմիական վիճակը գնահատվում է առնվազն «լավ».

21. էկոլոգիական վիճակ՝ մակերևութային ջրերի հետ առնչվող ջրային էկոհամակարգերի կառուցվածքի և գործունեության որակը բնութագրող արտահայտություն՝ V հավելվածին համապատասխան դասակարգված.

22. լավ էկոլոգիական վիճակ՝ մակերևութային ջրային մարմնի վիճակը՝ V հավելվածի համաձայն դասակարգված

23. էկոլոգիական լավ պոտենցիալ՝ խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմնի վիճակը՝ դասակարգված համաձայն V հավելվածի համապատասխան դրույթների.

24. մակերևութային ջրերի քիմիական լավ վիճակ՝ մակերևութային ջրերի մասով 4(1)(ա) հոդվածով սահմանված՝ բնապահպանական նպատակներին հասնելու համար պահանջվող քիմիական վիճակ, այսինքն՝ մակերևութային ջրային մարմնի կողմից ձեռք բերված այնպիսի քիմիական վիճակ, երբ աղտոտիչների կոնցենտրացիաները չեն գերազանցում IX հավելվածով և 16(7) հոդվածով, ինչպես նաև Համայնքի մակարդակով շրջակա միջավայրի որակի ստանդարտներ սահմանող Համայնքի համապատասխան այլ օրենսդրությամբ սահմանված՝ շրջակա միջավայրի որակի ստանդարտները.

25. ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակ՝ ստորերկրյա ջրային մարմնի քիմիական վիճակը, որը բավարարում է V հավելվածի 2.3.2 աղյուսակով սահմանված բոլոր պայմանները.

26. քանակական վիճակ՝ ստորերկրյա ջրային մարմնի վրա՝ ուղղակի և անուղղակի ջրառով պայմանավորված ազդեցության աստիճանը բնութագրող արտահայտություն. է

27. ստորերկրյա ջրերի առկա ռեսուրսներ՝ երկարաժամկետ կտրվածքով ստորերկրյա ջրային մարմնի ընդհանուր սնուցման տարեկան միջին ծավալը՝ հանած 4-րդ հոդվածով սահմանված՝ հարակից մակերևութային ջրերի էկոլոգիական որակի նպատակային սահմաններն ապահովելու, էկոլոգիական վիճակի էական վատթարացումից խուսափելու և

հարակից ցամաքային էկոհամակարգերին հասցվող զգալի վնասից խուսափելու համար պահանջվող տարեկան հոսքի ծավալը՝ երկարաժամկետ կտրվածքով.

28. քանակական լավ վիճակ՝ V հավելվածի 2.1.2 աղյուսակով սահմանված վիճակը.

29. վտանգավոր նյութեր՝ նյութեր կամ նյութերի խմբեր, որոնք թունավոր են, կայուն և օժտված են կենսակուտակման հատկանիշով, ինչպես նաև այլ նյութեր կամ նյութերի խմբեր, որոնք համարժեք վտանգ են ներկայացնում.

30. առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութեր՝ 16(2) հոդվածին համապատասխան որոշված և X հավելվածում ներկայացված նյութերը:

Այդ նյութերի շարքում կան «առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութեր», որոնք 16(3) և (6) հոդվածին համապատասխան, որոշված նյութեր են և որոնց համար պետք է ձեռնարկվեն միջոցառումներ՝ 16(1) և (8) հոդվածին համապատասխան.

31. աղտոտիչ՝ ցանկացած նյութ, որն ունակ է աղտոտում առաջացնելու, մասնավորապես՝ VIII հավելվածում նշված նյութերը.

32. դեպի ստորերկրյա ջրեր ուղղակի արտանետում՝ հողի կամ ենթահողերի միջով աղտոտիչների առանց ֆիլտրման արտահոսքը դեպի ստորերկրյա ջրեր.

33. աղտոտում՝ մարդու գործունեության արդյունքում օդի, ջրի կամ հողի մեջ նյութերի ուղղակի կամ անուղղակի ներմուծում, որը կարող է վնասակար լինել մարդու առողջության կամ ջրային էկոհամակարգերի որակի կամ ջրային էկոհամակարգերից անմիջական կախում ունեցող ցամաքային էկոհամակարգերի որակի համար, որի արդյունքում վնաս է հասցվում նյութական սեփականությանը, կամ որը խաթարում կամ խանգարում է ծառայությունների մատուցմանը և շրջակա միջավայրի մյուս օրինական կիրառություններին.

34. բնապահպանական նպատակներ՝ 4-րդ հոդվածով սահմանված նպատակները.

35. շրջակա միջավայրի որակի ստանդարտ՝ ջրում, հատակային նստվածքներում կամ բիոտայում կոնկրետ աղտոտիչի կամ աղտոտիչների խմբի կոնցենտրացիան, որը չպետք է գերազանցվի՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով.

36. համալիր մոտեցում՝ դեպի մակերևութային ջրեր արտանետումների և արտահոսքերի նկատմամբ վերահսկողություն՝ 10-րդ հոդվածով սահմանված մոտեցմանը համապատասխան.

37. մարդու սպառման համար նախատեսված ջուր՝ ունի նույն նշանակությունը, ինչ 98/83/ԵՀ հրահանգով փոփոխված 80/778/ԵՏՀ հրահանգով սահմանված նշանակությունը.

38. ջրային ոլորտի ծառայություններ՝ բոլոր այն ծառայությունները, որոնցով տնային տնտեսությունների, պետական հաստատությունների կամ ցանկացած տնտեսական գործունեության համար ապահովվում է հետևյալը՝

ա) մակերևութային կամ ստորերկրյա ջրառ, ջրի ամբարում, պահեստավորում, մաքրում և բաշխում,

բ) հետագայում դեպի մակերևութային ջրերն արտանետվող կեղտաջրերի հավաքման և մաքրման կայանքներ.

39. ջրօգտագործում՝ 5-րդ հոդվածով ու II հավելվածով սահմանված ցանկացած այլ գործունեության հետ համատեղ իրականացվող ջրային ոլորտի ծառայություններ, որոնք էական ազդեցություն են ունենում ջրի վիճակի վրա:

Սույն հասկացությունը կիրառվում է 1-ին հոդվածի նպատակներով, ինչպես նաև 5-րդ հոդվածի ու III հավելվածի (բ) կետի համաձայն իրականացված տնտեսական վերլուծության նպատակներով.

40. Սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշներ՝ որոշակի հատուկ պարամետրերով, կոնցենտրացիայով և (կամ) արտահոսքի մակարդակով արտահայտված զանգված, որը չի կարող գերազանցվել մեկ կամ մի քանի ժամկետների ընթացքում: Սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշները նույնպես կարող են սահմանվել նյութերի, մասնավորապես 16-րդ հոդվածում ներկայացված նյութերի որոշակի խմբերի, ընտանիքների կամ կատեգորիաների համար:

Նյութերի սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշները սովորաբար կիրառվում են այն կետում, երբ հաստատություններից արտահոսք է տեղի ունենում, և սահմանային չափանիշները սահմանելիս նոսրացումը հաշվի չի առնվում: Դեպի ջուր անուղղակի արտանետումների մասով տվյալ հաստատության համար սահմանային թույլատրելի

արտահոսքի չափանիշները որոշելիս կարող է հաշվի առնվել կեղտաջրերի մաքրման կայանների ազդեցությունը՝ պայմանով, որ ընդհանուր առմամբ երաշխավորվի շրջակա միջավայրի պաշտպանության համարժեք մակարդակ, և դա չի հանգեցնի շրջակա միջավայրի աղտոտման առավել բարձր մակարդակի:

41. արտահոսքի նկատմամբ վերահսկողություն՝ վերահսկողություն, որը պահանջում է արտահոսքի նկատմամբ որոշակի սահմանափակումների կիրառում, օրինակ՝ սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշների կամ, այլ դեպքերում, արտահոսքի կամ արտահոսքերի վրա ազդեցություն ունեցող շահագործման պայմանների ազդեցության, բնույթի կամ այլ բնութագրիչների վրա որոշակի սահմանափակումների կամ պայմանների սահմանում: Սույն Հրահանգում «արտահոսքի նկատմամբ վերահսկողություն» եզրույթի գործածությունը ցանկացած այլ հրահանգի դրույթների մասով ոչ մի դեպքում չի կարելի դիտել որպես այդ դրույթների նոր մեկնաբանություն:

Հոդված 3

Վարչական կառուցվածքների համակարգումը գետավազանային տարածքներում

1. Անդամ պետությունները պետք է որոշեն դրանց ազգային տարածքում ընկած առանձին գետավազանները և, ելնելով սույն Հրահանգի նպատակներից, պետք է հանձնեն դրանք առանձին գետավազանային տարածքների: Փոքր գետավազանները կարող են ընդգրկվել ավելի մեծ գետավազանների մեջ կամ էլ միավորվել հարակից փոքր գետավազանների հետ՝ այդպիսով, անհրաժեշտության դեպքում ձևավորելով առանձին գետավազանային տարածքներ: Եթե ստորերկրյա ջրերը լիովին չեն համապատասխանում տվյալ գետավազանին, դրանք պետք է որոշվեն և հանձնվեն ամենամոտ կամ ամենահարմար գետավազանային տարածքին: Առափնյա ջրերը պետք է որոշվեն և հանձնվեն ամենամոտ կամ ամենահարմար գետավազանային տարածքին կամ տարածքներին:

2. Անդամ պետություններն ապահովում են պատշաճ վարչական կառուցվածքներ և իրենց տարածքում գտնվող յուրաքանչյուր գետավազանային տարածքում սույն Հրահանգի նորմերի կիրառության համար սահմանում են համապատասխան իրավասու մարմին:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ մեկից ավելի անդամ պետության տարածք ընդգրկող գետավազանը հանձնվի միջազգային գետավազանային տարածքի: Ներգրավված անդամ պետությունների պահանջով, Հանձնաժողովը պետք է օժանդակի այդպիսի միջազգային գետավազանային տարածքներին հանձնմանը:

Յուրաքանչյուր անդամ պետությունն ապահովում է պատշաճ վարչական կառուցվածքներ և միջազգային գետավազանային տարածքի՝ իր պետության տարածքում գտնվող հատվածներում սույն Հրահանգի կանոնների կիրառության համար սահմանում է համապատասխան իրավասու մարմին:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական նպատակներին հասնելու սույն Հրահանգի պահանջները և, մասնավորապես, միջոցառումների բոլոր ծրագրերը համակարգվեն ամբողջ գետավազանային տարածքի համար: Միջազգային գետավազանային տարածքների համար համապատասխան անդամ պետությունները միասին ապահովում են այդ համակարգումը և կարող են այդ նպատակով օգտագործել միջազգային համաձայնագրերի ներքո գոյություն ունեցող կառույցները: Ներգրավված անդամ պետությունների պահանջով Հանձնաժողովը պետք է օժանդակի միջոցառումների ծրագրերի հաստատմանը:

5. Եթե գետավազանային տարածքը ձգվում է Համայնքի սահմաններից դուրս, ապա համապատասխան անդամ պետությունը կամ անդամ պետությունները պետք է ձգտեն պատշաճ համակարգում հաստատելու անդամ չհանդիսացող համապատասխան պետությունների հետ՝ նպատակ ունենալով իրականացնելու սույն Հրահանգի նպատակներն ամբողջ գետավազանային տարածքում: Անդամ պետությունները պետք է ապահովեն սույն Հրահանգի նորմերի կիրառումն իրենց տարածքում:

6. Անդամ պետությունները կարող են գոյություն ունեցող ազգային կամ միջազգային մարմինն նշանակել իրավասու մարմին՝ ելնելով սույն Հրահանգի նպատակներից:

7. Անդամ պետությունները պետք է իրավասու մարմին նշանակեն մինչև 24-րդ հոդվածում նշված ամսաթիվը:

8. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին տրամադրեն իրենց իրավասու մարմինների ցանկը, ինչպես նաև բոլոր այն միջազգային իրավասու մարմինների ցանկը, որում նրանք մասնակցում են, 24-րդ հոդվածում նշված ամսաթվից ոչ ուշ, քան վեց ամիս

հետո:| հավելվածով սահմանված տեղեկությունները տրամադրվում են յուրաքանչյուր իրավասու մարմնի:

9. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով տեղեկացնեն 8-րդ պարբերության համաձայն տրամադրված տեղեկություններում կատարված ցանկացած փոփոխության մասին՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

Հոդված 4

Բնապահպանական նպատակները

1. Գետավազանային կառավարման պլաններում ընդգրկված միջոցառումների ծրագրերն իրականացնելիս

ա) մակերևութային ջրերի համար՝

i) անդամ պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցներ՝ կանխելու այն բոլոր մակերևութային ջրային մարմինների վիճակի վատթարացումը, որոնց նկատմամբ կիրառվում են 6-րդ և 7-րդ պարբերությունները՝ չխախտելով 8-րդ պարբերությունը.

ii) անդամ պետությունները պահպանում, բարելավում և վերականգնում են բոլոր ստորերկրյա ջրային մարմինները՝ արհեստական և խիստ փոփոխված ջրային մարմինների նկատմամբ (iii) ենթապարբերության կիրառության համաձայն՝ նպատակ ունենալով սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի հետո ապահովելու ստորերկրյա ջրերի լավ վիճակ՝ համաձայն V հավելվածով սահմանված դրույթների, կիրառելով 4-րդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետի երկարաձգումները և 5-րդ, 6-րդ և 7-րդ պարբերությունները՝ չխախտելով 8-րդ պարբերությունը.

iii) անդամ պետությունները պահպանում և բարելավում են բոլոր արհեստական ու խիստ փոփոխված ջրային մարմինները՝ նպատակ ունենալով սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի հետո ապահովելու էկոլոգիական լավ պոտենցիալ և ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակ՝ համաձայն V հավելվածով սահմանված դրույթների, կիրառելով 4-րդ պարբերությանը համապատասխան սահմանված

ժամկետի երկարաձգումներն ու 5-րդ, 6-րդ և 7-րդ պարբերությունները՝ չխախտելով 8-րդ պարբերությունը.

iv) անդամ պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցներ՝ 16(1) և (8) հոդվածին համապատասխան՝ նպատակ ունենալով աստիճանաբար նվազեցնելու առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերով աղտոտումը և անմիջապես կամ աստիճանաբար նվազեցնելու առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերի արտահոսքերը, արտանետումները և կորուստները՝ չխախտելով շահագրգիռ կողմերի համար 1-ին հոդվածում նշված համապատասխան միջազգային համաձայնագրերը.

բ) ստորերկրյա ջրերի համար՝

i) անդամ պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցներ՝ աղտոտիչների ներհոսքը դեպի ստորերկրյա ջրեր կանխելու կամ սահմանափակելու և բոլոր ստորերկրյա ջրային մարմինների վիճակի վատթարացումը կանխելու համար՝ կիրառելով սույն հոդվածի 6-րդ և 7-րդ պարբերություններն ու չխախտելով սույն հոդվածի 8-րդ պարբերությունը, ինչպես նաև կիրառելով 11(3)(ժ) հոդվածը.

ii) անդամ պետությունները պահպանում, բարելավում և վերականգնում են բոլոր ստորերկրյա ջրային մարմինները, ապահովում են հավասարակշռությունը ստորերկրյա ջրային մարմնից ջրառի և դրա սնուցման միջև՝ նպատակ ունենալով սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի հետո ապահովելու ստորերկրյա ջրերի լավ վիճակ՝ համաձայն V հավելվածով սահմանված դրույթների, կիրառելով 4-րդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետ երկարաձգումները, կիրառելով 5-րդ, 6-րդ ու 7-րդ պարբերությունները և չխախտելով 8-րդ պարբերությունը, ինչպես նաև կիրառելով 11(3)(ժ) հոդվածը.

iii) անդամ պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցներ՝ մարդու գործունեության ազդեցության հետևանքով ցանկացած աղտոտիչի կոնցենտրացիայի ցանկացած էական և կայուն աճի միտմանը կտրուկ հակազդելու համար՝ նպատակ ունենալով աստիճանաբար կրճատելու ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Հակառակ միտումն ապահովելուն ուղղված միջոցները պետք է իրականացվեն 17-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ պարբերությունների համաձայն՝ հաշվի առնելով

Համայնքի համապատասխան օրենսդրությամբ սահմանված կիրառելի ստանդարտները, կիրառելով 6-րդ և 7-րդ պարբերություններն ու չխախտելով 8-րդ պարբերությունը.

գ) պահպանվող տարածքների համար՝

անդամ պետություններն ապահովում են ստանդարտների և նպատակների համապատասխանությունը՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի հետո, եթե այլ բան նախատեսված չէ Համայնքի օրենսդրությամբ, որի համաձայն ստեղծվել են առանձին պահպանվող տարածքները:

2. Եթե տվյալ ջրային մարմինն առնչվում են 1-ին պարբերության մեջ նշված մեկից ավելի նպատակներ, ապա կիրառվում է ամենախիստը:

3. Անդամ պետությունները կարող են մակերևութային ջրային մարմինը համարել արհեստական կամ խիստ փոփոխված, եթե՝

ա) էկոլոգիական լավ վիճակ ապահովելու համար անհրաժեշտ՝ մարմնի հիդրոմորֆոլոգիական բնութագրիչներում տեղի ունեցող փոփոխություններն էական բացասական ազդեցություն կունենան՝

i) ավելի ընդարձակ միջավայրի վրա.

ii) նավագնացության՝ այդ թվում՝ նավահանգստային կամ ժամանցային հաստատությունների վրա.

iii) այնպիսի գործողությունների վրա, որոնց նպատակով իրականացվում է ջրի ամբարում, ինչպես օրինակ՝ խմելու ջրի մատակարարում, էլեկտրաէներգիայի արտադրություն կամ ոռոգում.

iv) ջրերի կարգավորման, ջրհեղեղներից պաշտպանության և հողի դրենաժի վրա, կամ

v) մարդու կայուն զարգացման համար կարևոր այլ գործողությունների վրա.

բ) տեխնիկական իրագործելիության կամ անհամաչափ ծախսերի պատճառով իրատեսորեն անհնար է ջրային մարմնի արհեստական կամ փոփոխված բնութագրիչներով ապահովվող շահավետ նպատակներն իրագործել այլ միջոցներով,

որոնք շրջակա միջավայրի լավ վիճակ ապահովելու համար զգալիորեն ավելի լավ տարբերակ են:

Նման սահմանումը և դրա պատճառները պետք է հատուկ նշվեն գետավազանային կառավարման պլաններում՝ համաձայն 13-րդ հոդվածի պահանջների, և վերանայվեն յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

4. 1-ին պարբերության համաձայն սահմանված վերջնաժամկետները կարող են երկարաձգվել ջրային մարմինների համար սահմանված նպատակները փուլ առ փուլ իրականացնելու նպատակով՝ պայմանով, որ ազդեցության ենթարկված ջրային մարմնի վիճակը այլևս չի վատթարանա, երբ կբավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) անդամ պետությունները որոշում են, որ ջրային մարմնի վիճակի բոլոր անհրաժեշտ բարելավումներն իրատեսորեն հնարավոր չէ ապահովել այդ պարբերության մեջ սահմանված ժամանակահատվածներում՝ ելնելով հետևյալ պատճառներից առնվազն մեկից՝

i) պահանջվող բարելավումների ամբողջ ծավալը հնարավոր է ապահովել միայն փուլ առ փուլ՝ գերազանցելով սահմանված ժամանակահատվածը՝ ելնելով տեխնիկական իրագործելիության պատճառներից.

ii) սահմանված ժամանակահատվածում բարելավումների ավարտը կապված է անհամաչափ մեծ ծախսերի հետ.

iii) բնական պայմանները հնարավորություն չեն տալիս ժամանակին բարելավելու ջրային մարմնի վիճակը.

բ) վերջնաժամկետների երկարաձգումը և դրա պատճառները հատուկ նշված ու բացատրված են գետավազանային կառավարման պլանում՝ համաձայն 13-րդ հոդվածի պահանջի.

գ) երկարաձգումները պետք է սահմանափակվեն գետավազանային կառավարման պլանի առավելագույնը հաջորդ երկու թարմացումներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բնական պայմաններն այնպիսին, են, որ այդ ժամկետներում նպատակների իրագործումն անհնար է.

դ) գետավազանային կառավարման պլաններում սահմանված են 11-րդ հոդվածի համաձայն պահանջվող այն միջոցների ամփոփագիրը, որոնք նախատեսված են երկարաձգված ժամկետներում ջրային մարմնի վիճակը փուլ առ փուլ պահանջվող մակարդակին հասցնելու համար, այդ միջոցների իրականացման գործընթացն էականորեն հետաձգելու պատճառները, ինչպես նաև դրանց իրականացման համար ակնկալվող ժամանակացույցը: Այդ միջոցների իրականացման վերանայումը և ցանկացած լրացուցիչ միջոցների ամփոփումը ներառվում են թարմացված գետավազանային կառավարման պլաններում:

5. Անդամ պետությունների նպատակը կարող է լինել այնպիսի բնապահպանական նպատակների իրականացումը, որոնք ունեն առավել մեղմ բնույթ՝ ի տարբերություն այն նպատակների, որոնք 1-ին պարբերությամբ պահանջվում են կոնկրետ այն ջրային մարմինների համար, որոնց վրա, ինչպես սահմանված է 5(1) հոդվածին համապատասխան, մարդկային գործունեության ազդեցությունը կամ բնական պայմաններն այնպիսին են, որ սահմանված նպատակների իրականացումն անիրատեսական է կամ կապված է անհամաչափ մեծ ծախսերի հետ, ըստ այդմ, բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) այդպիսի մարդկային գործունեությամբ ապահովվող բնապահպանական և սոցիալ-տնտեսական կարիքները չեն կարող բավարարվել այլ միջոցներով, որոնք շրջակա միջավայրի լավ վիճակ ապահովելու համար զգալիորեն ավելի լավ տարբերակ են ու անհամաչափ մեծ ծախսեր չեն պահանջում:

բ) անդամ պետություններն ապահովում են հետևյալը՝

— մակերևութային ջրերի համար՝ հնարավորության սահմաններում էկոլոգիական և քիմիական գերազանց վիճակ՝ հաշվի առնելով նաև այն ազդեցությունները, որոնցից իրատեսորեն անհնար է խուսափել՝ ելնելով մարդու գործունեության կամ աղտոտման բնույթից:

— ստորերկրյա ջրերի համար՝ հնարավորին չափով նվազագույնի հասցնել փոփոխությունները ստորերկրյա ջրերի լավ վիճակում՝ հաշվի առնելով նաև այն ազդեցությունները, որոնցից իրատեսորեն անհնար է խուսափել՝ ելնելով մարդու գործունեության կամ աղտոտման բնույթից:

գ) ազդեցության ենթարկված ջրային մարմնի վիճակի հետագա ոչ մի վատթարացում,
դ) առավել մեղմ բնույթ ունեցող բնապահպանական նպատակների սահմանումը և դրա պատճառները հատուկ նշված են 13-րդ հոդվածի համաձայն պահանջված գետավազանային կառավարման պլանում, իսկ այդ նպատակները վերանայվում են յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

6. Ջրային մարմինների վիճակի ժամանակավոր վատթարացումը սույն Հրահանգի պահանջների խախտում չէ, եթե դա բնական կամ ֆորս մաժորային հանգամանքների հետևանք է, որոնք բացառիկ են, կամ դրանք կանխագուշակելի իրատեսորեն անհնար էր, մասնավորապես՝ ծայրահեղ ուժեղ ջրհեղեղները և շարունակական երաշտը, կամ վթարային իրավիճակները, որոնք իրականում անհնար էր կանխագուշակել, ըստ այդմ, բավարարվել են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) ձեռնարկված են բոլոր գործնական քայլերը՝ վիճակի հետագա վատթարացումը կանխելու և այդ հանգամանքների ազդեցությունը չկրող մյուս ջրային մարմիններում սույն Հրահանգի նպատակների իրականացմանը չխոչընդոտելու համար.

բ) գետավազանային կառավարման պլանում նշված են այն պայմանները, որոնց դեպքում հանգամանքները կարող են ճանաչվել բացառիկ կամ անկանխատեսելի՝ ներառյալ համապատասխան չափորոշիչներն ընդունելը.

գ) նման բացառիկ հանգամանքներում ձեռնարկվելիք միջոցներն ընդգրկված են միջոցառումների ծրագրում և չեն խոչընդոտի հանգամանքների վերացումից հետո ջրային մարմնի որակը վերականգնելը,

դ) բացառիկ կամ փաստացի անկանխատեսելի հանգամանքների ազդեցությունները վերանայվում են տարեկան կտրվածքով և, 4-րդ պարբերության մեջ նշված պատճառների առկայության դեպքում, ձեռնարկվում են բոլոր գործնական միջոցները՝ նպատակ ունենալով հնարավորինս արագ վերականգնելու ջրային մարմնի այն վիճակը, որն այն ուներ՝ մինչև այդ հանգամանքների ազդեցությունները կրելը.

ե) հանգամանքների ազդեցությունների և (ա) ու (բ) պարբերությունների համաձայն ձեռնարկված կամ ձեռնարկվելիք միջոցների ամփոփագրերը ներառված են գետավազանային կառավարման պլանի թարմացված հաջորդ տարբերակում:

7. Անդամ պետությունները չեն խախտի սույն Հրահանգի դրույթները, եթե

— ստորերկրյա ջրերի լավ վիճակ, էկոլոգիական լավ վիճակ կամ, անհրաժեշտության դեպքում, էկոլոգիական լավ պոտենցիալ չապահովելը կամ մակերևութային կամ ստորերկրյա ջրային մարմնի վիճակի վատթարացումը չկանխելը մակերևութային ջրային մարմնի ֆիզիկական բնութագրիչների նոր փոփոխությունների կամ ստորերկրյա ջրային մարմինների մակարդակի տատանումների հետևանք են.

— մակերևութային ջրային մարմնի գերազանց վիճակից դեպի լավ վիճակի հետընթացը չկանխելը մարդկային կայուն զարգացման նոր գործունեության հետևանք է.

ըստ այդմ, բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) ձեռնարկվում են բոլոր գործնական քայլերը՝ ջրային մարմնի վիճակի վրա բացասական ազդեցությունը մեղմելու համար.

բ) այդ փոփոխությունների կամ տատանումների պատճառները հատուկ սահմանված և բացատրված են 13-րդ հոդվածի համաձայն պահանջվող գետավազանային կառավարման պլանում, իսկ նպատակները վերանայվում են յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ.

գ) այդ փոփոխությունները կամ տատանումները պայմանավորված են հանրային գերակա շահով և (կամ) այդ փոփոխությունների կամ տատանումների արդյունքում մարդու առողջության, մարդու անվտանգության կամ կայուն զարգացման օգուտները գերակշռում են 1-ին պարբերության մեջ նշված նպատակների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և հանրության օգուտները.

դ) տեխնիկական իրագործելիության կամ անհամաչափ մեծ ծախսերի պատճառով իրատեսորեն անհնար է իրագործել ջրային մարմնի փոփոխություններով կամ տատանումներով ապահովվող շահավետ նպատակներն այլ միջոցներով, որոնք շրջակա միջավայրի լավ վիճակ ապահովելու համար զգալիորեն ավելի լավ տարբերակ են:

8. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ պարբերությունները կիրառելիս անդամ պետություններն ապահովում են, որ դրանց կիրառումը մշտապես չբացառի կամ չխոչընդոտի միևնույն գետավազանային տարածքում ընդգրկված այլ ջրային մարմինների նկատմամբ սույն

Հրահանգի նպատակների իրականացումը և համապատասխանի Համայնքի բնապահպանական օրենսդրությանը:

9. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ նոր դրույթների՝ ներառյալ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ պարբերությունները, կիրառումը երաշխավորի պաշտպանության առնվազն միևնույն մակարդակը, ինչն ապահովվում է Համայնքի օրենսդրությամբ:

Հոդված 5

Գետավազանային տարածքների բնութագրիչները, շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության ազդեցության ուսումնասիրությունը և ջրօգտագործման տնտեսական վերլուծությունը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ յուրաքանչյուր գետավազանային տարածքի կամ միջազգային գետավազանային տարածքի՝ իր պետության տարածքում գտնվող հատվածի համար իրականացվի՝

- բնութագրիչների վերլուծություն,
- մակերևութային ջրերի և ստորերկրյա ջրերի վիճակի վրա մարդու գործունեության ազդեցության ուսումնասիրություն և
- ջրօգտագործման տնտեսական վերլուծություն՝

1. II և III հավելվածներով սահմանված տեխնիկական մասնագրերին համապատասխան, և որպեսզի վերը նշված գործողություններն ավարտին հասցվեն սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան չորս տարի հետո:

2. 1-ին պարբերության մեջ նշված վերլուծություններն ու ուսումնասիրությունները պետք է վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 13 տարի անց, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

Հոդված 6

Պահպանվող տարածքների ռեգիստրը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն յուրաքանչյուր գետավազանային տարածքում գտնվող այն բոլոր տարածքների ռեգիստրի կամ ռեգիստրների ստեղծումը, որոնք Համայնքի կոնկրետ օրենսդրության շրջանակներում ճանաչվել են որպես հատուկ պահպանության կարիք ունեցող տարածքներ՝ դրանց մակերևութային և ստորերկրյա ջրերի պահպանության կամ անմիջականորեն ջրից կախում ունեցող բնակմիջավայրերի ու տեսակների պահպանության առումով: Դրանք պետք է ապահովեն, որ ռեգիստրի ստեղծումն ավարտվի ոչ ուշ, քան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց չորս տարի հետո:
2. Ռեգիստրը կամ ռեգիստրները պետք է ընդգրկեն 7(1) հոդվածի համաձայն որոշված բոլոր ջրային մարմիններն ու IV հավելվածում նշված բոլոր պահպանվող տարածքները:
3. Յուրաքանչյուր գետավազանային տարածքի համար պահպանվող տարածքների ռեգիստրը կամ ռեգիստրները վերանայվում են ու թարմացվում:

Հոդված 7

Խմելու նպատակով ջրառը

1. Անդամ պետությունները յուրաքանչյուր գետավազանային տարածքում պետք է որոշեն՝
 - բոլոր այն ջրային մարմինները, որոնք օգտագործվում են մարդու սպառման համար նախատեսված ջրառի համար և օրական մատակարարում են միջինն ավելի քան 10^{43} ջուր կամ ավելի քան 50 անձի ապահովում են ջրով.
 - այն ջրային մարմինները, որոնք պլանավորվում են հետագայում օգտագործվել այդ նույն նպատակներով:

Անդամ պետությունները պետք է, համաձայն V հավելվածի, դիտանցեն այն ջրային մարմինները, որոնք, համաձայն V հավելվածի, օրական մատակարարում են միջինը 100^{43} ջուր:

2. 1-ին պարբերությամբ որոշված յուրաքանչյուր ջրային մարմնի համար, ի լրումն սույն Հրահանգի պահանջներին համապատասխան 4-րդ հոդվածով սահմանված նպատակների

իրականացման, իսկ մակերևութային ջրային մարմինների համար՝ նաև 16-րդ հոդվածի համաձայն Համայնքի մակարդակով սահմանված որակի ստանդարտների բավարարման, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ջրերի մաքրման կիրառվող ռեժիմի ներքո և Համայնքի օրենսդրությանը համապատասխան՝ ստացված ջրերի որակը համապատասխանի 98/83/ԵՀ հրահանգով փոփոխված՝ 80/778/ԵՏՀ հրահանգի պահանջներին:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն ջրային մարմինների պաշտպանության անհրաժեշտ մակարդակ՝ նպատակ ունենալով խուսափելու դրանց որակի վատթարացումից, որպեսզի հնարավոր լինի կրճատել խմելու ջրի արտադրության համար անհրաժեշտ մաքրման ծավալները: Անդամ պետությունները կարող են պաշտպանական գոտիներ հաստատել այդ ջրային մարմինների համար:

Հոդված 8

Մակերևութային ջրերի վիճակի, ստորերկրյա ջրերի վիճակի և պահպանվող տարածքների դիտանցումը (մոնիթորինգը)

1. Անդամ պետություններն ապահովում են ջրերի վիճակի դիտանցման ծրագրերի ստեղծումը՝ յուրաքանչյուր գետավազանային տարածքում ջրերի վիճակի հետևողական և համապարփակ նկարագիրը տալու նպատակով.

– մակերևութային ջրերի համար նման ծրագրերն ընդգրկում են՝

i) հոսքի ծավալը և մակարդակը կամ արագությունը՝ այնքանով, որքանով դրանք առնչվում են էկոլոգիական ու քիմիական վիճակին և էկոլոգիական պոտենցիալին, ու

ii) էկոլոգիական ու քիմիական վիճակը և էկոլոգիական պոտենցիալը.

– ստորերկրյա ջրերի համար նման ծրագրերն ընդգրկում են քիմիական և քանակական վիճակի դիտանցում.

– պահպանվող տարածքների համար վերը նշված ծրագրերը լրացվում են Համայնքի օրենսդրության մեջ ներառված այն հատկորոշումներով, որոնց հիման վրա սահմանվել են այդ առանձին պահպանվող տարածքները:

2.Այս ծրագրերը պետք է իրականացվեն սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը վեց տարի հետո, եթե համապատասխան օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Նման դիտանցումը պետք է համապատասխանի V հավելվածի պահանջներին:

▼M2

3.Սահմանվում են ջրի վիճակի վերլուծության և դիտանցման տեխնիկական մասնագրեր ու ստանդարտացված մեթոդներ: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն՝ 21(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 9

Ջրային ոլորտի ծառայությունների ծախսերի ծածկումը

1. Անդամ պետությունները հաշվի են առնում ջրային ոլորտի ծառայությունների ծախսերի ծածկման սկզբունքը, այդ թվում՝ բնապահպանական և ռեսուրսների ծախսերը՝ հաշվի առնելով III հավելվածի համաձայն իրականացված տնտեսական վերլուծությունը և, մասնավորապես, «վճարում է աղտոտողը» սկզբունքին համապատասխան:

Անդամ պետությունները մինչև 2010 թվականն ապահովում են՝

- որ ջրի գնագոյացման քաղաքականությամբ ջրօգտագործողների համար նախատեսվում են համարժեք խրախուսանքներ՝ ջրային ռեսուրսներն արդյունավետորեն օգտագործելու և դրանով սույն Հրահանգի բնապահպանական նպատակների իրականացմանը նպաստելու համար.
- որ ջրօգտագործման տարբեր ձևերը, որոնք տարածվում են առնվազն արդյունաբերության ոլորտում, տնային տնտեսություններում և գյուղատնտեսության ոլորտում, համարժեք ներդրում ունեն ջրային ոլորտի ծառայությունների ծախսերի ծածկման մեջ՝ հիմնվելով III հավելվածի համաձայն իրականացված տնտեսական վերլուծության վրա և հաշվի առնելով «վճարում է աղտոտողը» սկզբունքը:

Անդամ պետությունները կարող են այդ դեպքերում հաշվի առնել ծախսերի ծածկման սոցիալական, բնապահպանական և տնտեսական ազդեցությունները, ինչպես նաև ազդեցություն կրող տարածաշրջանի կամ տարածաշրջանների աշխարհագրական և կլիմայական պայմանները:

2. Անդամ պետությունները գետավազանային կառավարման պլաններում ներկայացնում են 1-ին պարբերության իրականացման համար նախատեսված այն քայլերը, որոնք կնպաստեն սույն Հրահանգի բնապահպանական նպատակների իրականացմանը, ինչպես նաև ջրօգտագործման տարբեր ձևերի կողմից ջրային ոլորտի ծառայությունների ծախսերի ծածկման մեջ ունեցած ներդրումին:

3. Սույն հոդվածի ոչ մի դրույթ չպետք է կանխի սույն Հրահանգի նպատակների իրականացման համար նախատեսված կանխարգելիչ կամ վերականգնողական որևէ միջոցառման ֆինանսավորումը:

4. Անդամ պետությունները չեն խախտում սույն Հրահանգի դրույթները, եթե որոշում են, ընդունված պրակտիկայի համաձայն, չկիրառել 1-ին պարբերության երկրորդ նախադասության դրույթները և այդ նպատակով 2-րդ պարբերության համապատասխան դրույթները ջրօգտագործման որոշակի գործունեության նկատմամբ, եթե դա չի հակասում սույն Հրահանգի նպատակներին և չի խոչընդոտում այդ նպատակների իրականացումը: Անդամ պետությունները գետավազանային կառավարման պլաններում ներկայացնում են 1-ին պարբերության երկրորդ նախադասությունն ամբողջությամբ չկիրառելու պատճառները:

Հոդված 10

Աղտոտման կետային և ցրված աղբյուրների նկատմամբ համալիր մոտեցումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ դեպի մակերևութային ջրեր 2-րդ պարբերությամբ նշված բոլոր արտանետումները վերահսկվեն՝ սույն հոդվածով սահմանված համալիր մոտեցման համաձայն:

2. Անդամ պետություններն ապահովում են հետևյալի սահմանումը և (կամ) իրականացումը՝

ա) արտահոսքերի նկատմամբ վերահսկողությունը՝ հիմնվելով լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա, կամ

- բ) թույլատրելի սահմանային արտահոսքերի համապատասխան չափանիշները, կամ
- գ) ցրված աղբյուրներից ազդեցության դեպքում՝ վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում, նաև լավագույն բնապահպանական գործընթացները.

որոնք սահմանված են՝

- «Աղտոտման համատեղ կանխարգելման և վերահսկման մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգով (19),
- «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» Խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգով (20),
- «Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պահպանության մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ հրահանգով (21),
- սույն Հրահանգի 16-րդ հոդվածի համաձայն ընդունված հրահանգներով,
- IX հավելվածում նշված հրահանգներով,
- Համայնքի այլ համապատասխան օրենսդրությամբ,

սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 12 տարի հետո, եթե համապատասխան օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

3. Եթե սույն Հրահանգի, IX հավելվածում նշված հրահանգների կամ Համայնքի այլ համապատասխան օրենսդրության համաձայն սահմանված որակի նպատակային սահմանով կամ որակի ստանդարտով պահանջվում են առավել խիստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք կրիսեն 2-րդ պարբերության կիրառումից, համապատասխանաբար, արտահոսքի նկատմամբ սահմանվում է առավել խիստ վերահսկողություն:

Հոդված 11

Միջոցառումների ծրագիրը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է յուրաքանչյուր գետավազանային տարածքի կամ միջազգային գետավազանային տարածքի՝ իր պետության տարածքում

գտնվող հատվածի համար միջոցառումների ծրագիր՝ հաշվի առնելով 5-րդ հոդվածով պահանջվող վերլուծությունների արդյունքները՝ 4-րդ հոդվածով սահմանված նպատակների իրականացման համար: Միջոցառումների նման ծրագրերը կարող են հղում պարունակել ազգային մակարդակով ընդունված օրենսդրությունից բխող և անդամ պետության ամբողջ տարածքն ընդգրկող միջոցառումներին: Անդամ պետությունն անհրաժեշտության դեպքում կարող է ընդունել բոլոր գետավազանային տարածքներին և(կամ) միջազգային գետավազանի տարածքների՝ իր պետության տարածքում գտնվող հատվածների նկատմամբ կիրառվող միջոցառումներ:

2. Միջոցառումների յուրաքանչյուր ծրագիր ընդգրկում է 3-րդ պարբերությամբ սահմանված «հիմնական» միջոցառումները իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև «լրացուցիչ» միջոցառումներ:

3. «Հիմնական միջոցառումները» այն նվազագույն պահանջներն են, որոնք պետք է բավարարվեն, և որոնք ներառում են՝

ա) միջոցառումներ, որոնք պահանջվում են ջրերի պահպանման նպատակով Համայնքի օրենսդրությունն իրականացնելու համար՝ ներառյալ այն միջոցառումները, որոնք պահանջվում են 10-րդ հոդվածով և VI հավելվածի Ա մասով սահմանված օրենսդրությամբ.

բ) միջոցառումներ, որոնք համապատասխանում են 9-րդ հոդվածի նպատակներին.

գ) արդյունավետ և կայուն ջրօգտագործմանը նպաստող միջոցառումներ՝ 4-րդ հոդվածով սահմանված նպատակների իրականացումն ապահովելու նպատակով.

դ) 7-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար միջոցառումներ, այդ թվում՝ ջրի որակն ապահովելուն ուղղված միջոցառումներ՝ խմելու ջրի արտադրության համար անհրաժեշտ մաքրման ծավալները կրճատելու նպատակով.

ե) քաղցրահամ մակերևութային և ստորերկրյա ջրերի ջրառի ու քաղցրահամ մակերևութային ջրերի ամբարման նկատմամբ վերահսկողություն, այդ թվում՝ ջրառի գրանցամատյանի կամ գրանցամատյանների ստեղծում և ջրառի ու ամբարման նախնական թույլտվության պահանջի սահմանում: Վերահսկողության այդ միջոցները պարբերաբար վերանայվում են, իսկ անհրաժեշտության դեպքում, թարմացվում: Անդամ

պետությունները կարող են վերահսկողություն չկիրառել այն ջրառի կամ ամբարման նկատմամբ, որոնք էական ազդեցություն չունեն ջրի վիճակի վրա.

զ) վերահսկողություն՝ ներառյալ ստորերկրյա ջրային մարմինների արհեստական վերականգնման կամ ավելացման համար նախնական թույլտվության պահանջ: Օգտագործվող ջուրը կարող է վերցվել ցանկացած մակերևութային կամ ստորերկրյա ջրերից՝ պայմանով, որ տվյալ աղբյուրի օգտագործումը չի խոչընդոտում այդ աղբյուրի կամ վերականգնված կամ ավելացված ստորերկրյա ջրային մարմնի համար սահմանված բնապահպանական նպատակների իրականացումը: Վերահսկողության այդ մեթոդները պարբերաբար վերանայվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ թարմացվում.

է) կետային աղբյուրներից աղտոտում առաջացնող արտանետումների համար՝ նախնական կարգավորման միջոցառումների պահանջ, այն է՝ դեպի ջրեր աղտոտիչների ներթափանցման արգելում, կամ նախնական թույլտվության կամ գրանցման պահանջ՝ հիմնվելով ընդհանուր պարտադիր այն կանոնների վրա, որոնցով սահմանվում են համապատասխան աղտոտիչների արտահոսքի նկատմամբ վերահսկողություն՝ ներառյալ վերահսկողություն՝ 10-րդ և 16-րդ հոդվածներին համապատասխան: Վերահսկողության այդ միջոցները պարբերաբար վերանայվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ թարմացվում.

ը) աղտոտում առաջացնող ցրված աղբյուրների համար՝ աղտոտիչների ներթափանցումը կանխելու կամ վերահսկելու համար միջոցառումներ: Վերահսկողությունը կարող է լինել որպես նախնական կարգավորման պահանջ, այն է՝ դեպի ջրեր աղտոտիչների ներթափանցման արգելում, նախնական թույլտվություն կամ գրանցում՝ հիմնվելով ընդհանուր պարտադիր կանոնների վրա, եթե նման պահանջ նախատեսված չէ Համայնքի օրենսդրությամբ: Վերահսկողության այդ միջոցները պարբերաբար վերանայվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ թարմացվում.

թ) ջրի վիճակի վրա՝ 5-րդ հոդվածով և II հավելվածով սահմանված ցանկացած բացասական ազդեցության դեմ ուղղված միջոցառումներ՝ հատկապես ապահովելու համար, որ ջրային մարմինների հիդրոմորֆոլոգիական պայմանները համապատասխանեն արհեստական կամ խիստ փոփոխված ճանաչված ջրային մարմինների համար պահանջվող էկոլոգիական վիճակի կամ էկոլոգիական լավ

պոտենցիալի իրականացմանը: Այդ նպատակով վերահսկողությունը կարող է լինել որպես նախնական թույլտվություն կամ գրանցում՝ հիմնվելով ընդհանուր պարտադիր կանոնների վրա, եթե նման պահանջ սահմանված չէ Համայնքի օրենսդրությամբ: Վերահսկողության այդ միջոցները պարբերաբար վերանայվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ թարմացվում:

ժ) դեպի ստորերկրյա ջրեր աղտոտիչների ուղղակի արտանետումների արգելում՝ համաձայն հետևյալ դրույթների՝

Անդամ պետությունները կարող են թույլ տալ կենսաջերմային նպատակներով օգտագործվող ջրի կրկնակի ներմղում միևնույն ջրային հորիզոն:

Նրանք նաև կարող են թույլատրել հետևյալը՝ դրա համար սահմանելով պայմաններ՝

- այնպիսի ջրի ներմղում, որը պարունակում է ածխաջրածինների հայտնաբերման և արդյունահանման կամ հանքարդյունաբերական աշխատանքների հետևանքով գոյացած նյութեր, ինչպես նաև տեխնիկական նպատակներով ջրի ներմղում այնպիսի երկրաբանական ֆորմացիաներ, որոնցից արդյունահանվել են ածխաջրածիններ կամ այլ նյութեր, կամ ջրի ներմղում այնպիսի երկրաբանական ֆորմացիաներ, որոնք բնական պատճառներով այլևս պիտանի չեն այլ նպատակների համար: Նման ներմղումները չպետք է պարունակեն վերը նշված աշխատանքների արդյունքում գոյացող նյութերից բացի այլ նյութեր:

- հանքերից և քարհանքերից կամ շինարարության, կամ քաղաքացիական ինժեներատեխնիկական աշխատանքների հետևանքով պոմպով դուրս մղվող ստորերկրյա ջրերի ներմղում:

- պահեստավորման նպատակներով բնական գազի կամ հեղուկացված նավթային գազի ներմղում երկրաբանական ֆորմացիաներ, որոնք բնական պատճառներով այլևս պիտանի չեն այլ նպատակների համար:

▼M4

- պահեստավորման նպատակներով ածխաթթու գազի ներմղում երկրաբանական այնպիսի ֆորմացիաներ, որոնք բնական պատճառներով այլևս պիտանի չեն այլ նպատակների համար՝ պայմանով, որ նման ներմղումն իրականացվում է «Ածխաթթու

գազի երկրաբանական պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 2009/31/ԵՀ հրահանգին (22) համապատասխան, կամ որը բացառվում է այդ հրահանգի գործողության շրջանակից՝ հրահանգի 2(2) հոդվածի համաձայն.

▼B

– պահեստավորման նպատակներով բնական գազի կամ հեղուկացված նավթային գազի ներմուծում այլ երկրաբանական ֆորմացիաներ, եթե կա գազամատակարարման անվտանգության ապահովման խիստ կարիք, և եթե ներմուծը նախատեսված է ստացվող ստորերկրյա ջրերի որակի վատթարացման ներկա կամ հետագա որևէ վտանգ կանխելու համար.

– շինարարության, քաղաքացիական ինժեներատեխնիկական և կառուցապատման աշխատանքներ և նման այլ գործունեություն գետնի վրա կամ գետնի տակ, որը շփվում է ստորերկրյա ջրերի հետ: Այդ նպատակներով, անդամ պետությունները կարող են որոշել, որ նման գործունեությունը պետք է դիտվի որպես թույլատրված գործունեություն՝ պայմանով, որ այն իրականացվում է անդամ պետությունների կողմից նման գործունեության համար մշակված ընդհանուր պարտադիր կանոններին համապատասխան.

– գիտական նպատակներով նյութերի փոքր քանակությամբ արտանետումներ՝ ջրային մարմինների բնութագրման, պահպանման կամ վերականգնման համար՝ համապատասխան նպատակների համար անհրաժեշտ խիստ սահմանափակ քանակությամբ՝

պայմանով, որ նման արտանետումները չեն խոչընդոտում ստորերկրյա ջրային այդ մարմնի համար սահմանված բնապահպանական նպատակների իրականացումը.

Ժա) 16-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված գործողության համաձայն միջոցառումներ՝ այն նյութերով մակերևութային ջրերի աղտոտումը վերացնելու համար, որոնք նշված են 16(2) հոդվածի համաձայն սահմանված առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկում և այնպիսի նյութերով աղտոտումն աստիճանաբար նվազեցնելու համար, որոնք թույլ չէին տա անդամ պետություններին իրականացնելու մակերևութային ջրային մարմինների համար 4-րդ հոդվածով սահմանված նպատակները.

Ժբ) ցանկացած միջոցառում՝ տեխնիկական կառուցվածքներից աղտոտիչների զգալի կորուստները կանխելու համար և, օրինակ՝ ջրհեղեղների հետևանքով առաջացած վթարային աղտոտման հետևանքները կանխելու և (կամ) նվազեցնելու համար՝ ներառյալ նման երևույթների հայտնաբերման կամ դրանց մասին նախազգուշացման համակարգերի միջոցով, այդ թվում՝ այնպիսի վթարների դեպքում, որոնք հնարավոր չէր կանխատեսել, բոլոր համապատասխան միջոցառումները՝ ջրային էկոհամակարգերին սպառնացող վտանգը նվազեցնելու համար:

4. «Լրացուցիչ» միջոցառումները այն միջոցառումներն են, որոնք նախատեսվում են և իրականացվում՝ ի հավելումն հիմնական միջոցառումների՝ 4-րդ հոդվածով սահմանված նպատակների իրականացման համար: VI հավելվածի Բ մասը պարունակում է նման միջոցառումների ոչ ամբողջական ցանկը:

Անդամ պետությունները կարող են ընդունել այլ լրացուցիչ միջոցառումներ՝ սույն Հրահանգով կարգավորվող ջրերի լրացուցիչ պահպանում կամ բարելավում նախատեսելու համար՝ ներառյալ 1-ին հոդվածում նշված համապատասխան միջազգային համաձայնագրերի իրականացումը:

5. Եթե դիտանցման կամ այլ տվյալներ վկայում են, որ ջրային մարմնի համար 4-րդ հոդվածով սահմանված նպատակները հավանաբար չեն կարող իրականացվել, անդամ պետությունն ապահովում է, որ՝

- ուսումնասիրվեն հնարավոր ծախողման պատճառները.
- հարկ եղած դեպքում, ուսումնասիրվեն և վերանայվեն համապատասխան թույլտվություններն ու արտոնագրերը.
- հարկ եղած դեպքում, վերանայվեն և համապատասխանաբար փոփոխվեն դիտանցման ծրագրերը, և
- սահմանվեն այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցառումներ՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, V հավելվածով սահմանված ընթացակարգերի համաձայն շրջակա միջավայրի որակի առավել խիստ ստանդարտների սահմանումը:

Եթե այդ պատճառները բնական կամ ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են, որոնք բացառիկ են և իրատեսորեն չէին կարող կանխատեսվել, ինչպիսիք են, մասնավորապես, ծայրահեղ ուժեղ ջրհեղեղները կամ երկարատև երաշտը, անդամ պետությունը կարող է որոշել, որ լրացուցիչ միջոցառումներն անհրազործելի են՝ 4(6) հոդվածի համաձայն:

6. 3-րդ պարբերության համաձայն՝ միջոցառումներն իրականացնելիս անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան քայլեր՝ ծովային ջրերի աղտոտումը չավելացնելու նպատակով: Չհակասելով գործող օրենսդրությանը՝ 3-րդ պարբերության համաձայն ձեռնարկված միջոցառումների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնել մակերևութային ջրերի աղտոտման ավելացմանը: Այդ պահանջը չի կիրառվում այն դեպքերում, երբ այն կարող է ամբողջ շրջակա միջավայրի աղտոտման ավելացման պատճառ դառնալ:

7. Միջոցառումների ծրագրերը ստեղծվում են սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը ինը տարի հետո, և բոլոր միջոցառումներն իրականացվում են այդ ամսաթվից ամենաուշը 12 տարի հետո:

Միջոցառումների ծրագրերը պետք է վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի հետո, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ: Ցանկացած նոր կամ վերանայված միջոցառում, որը սահմանվում է թարմացված ծրագրով, իրականացվում է միջոցառման սահմանումից հետո երեք տարվա ընթացքում:

Հոդված 12

Խնդիրներ, որոնք չեն կարող լուծվել անդամ պետությունների մակարդակով

1. Եթե որևէ անդամ պետություն բացահայտում է այնպիսի խնդիր, որն ազդեցություն ունի իր պետության տարածքի ջրերի կառավարման վրա, և այդ խնդիրը չի կարող լուծվել այդ անդամ պետության կողմից, ապա այն կարող է այդ խնդրի մասին զեկուցել Հանձնաժողովին կամ ցանկացած այլ համապատասխան անդամ պետության՝ առաջարկելով խնդրի լուծման տարբերակներ:

2. Հանձնաժողովն անդամ պետություններից ստացված ցանկացած զեկույցին կամ առաջարկություններին պատասխանում է վեց ամսվա ընթացքում:

Հոդված 13

Գետավազանային կառավարման պլանները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ գետավազանային կառավարման պլան կազմվի ամբողջությամբ իրենց պետության տարածքում գտնվող յուրաքանչյուր գետավազանային տարածքի համար:

2. Ամբողջությամբ Համայնքի տարածքում գտնվող միջազգային գետավազանային տարածքի դեպքում անդամ պետություններն ապահովում են համակարգում՝ ընդհանուր գետավազանային կառավարման միջազգային պլան ստեղծելու նպատակով: Եթե գետավազանային կառավարման միջազգային նման պլան չի ստեղծվում, անդամ պետությունները, սույն Հրահանգի նպատակներն իրականացնելու համար, ստեղծում են գետավազանային կառավարման այնպիսի պլաններ, որոնք առնվազն ընդգրկում են միջազգային գետավազանի այն հատվածները, որոնք գտնվում են իրենց պետության տարածքում:

3. Այն դեպքում, երբ միջազգային գետավազանի տարածքն անցնում է Համայնքի սահմանները, անդամ պետությունները պետք է փորձեն ստեղծել գետավազանային կառավարման ընդհանուր պլան, իսկ եթե դա հնարավոր չէ, պլանն ընդգրկում է առնվազն միջազգային գետավազանային տարածքի այն հատվածը, որը գտնվում է տվյալ անդամ պետության տարածքում:

4. Գետավազանային կառավարման պլանն ընդգրկում է VII հավելվածում նշված տեղեկությունները:

5. Գետավազանային կառավարման պլանները կարող են լրացվել առավել մանրամասն ծրագրերով և ենթատարածքների, որևէ ոլորտի, խնդրի կամ ջրի որևէ տեսակի համար կառավարման պլաններով, որոնք նախատեսված են ջրերի կառավարման որոշակի հայեցակետերի համար: Այդ միջոցառումների իրականացումը չի ազատում անդամ

պետություններին սույն Հրահանգի մնացած մասով սահմանված իրենց պարտավորություններից:

6. Գետավազանային կառավարման պլանները հրապարակվում են սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը ինը տարի հետո:

7. Գետավազանային կառավարման պլանները պետք է վերանայվեն և թարմացվեն՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի հետո, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

Հոդված 14

Հանրային տեղեկատվությունը և խորհրդատվությունը

1. Անդամ պետությունները խրախուսում են բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը սույն Հրահանգի իրականացմանը, մասնավորապես գետավազանային կառավարման պլանների ստեղծմանը, վերանայմանը և թարմացմանը: Անդամ պետություններն ապահովում են, որ յուրաքանչյուր գետավազանային տարածքի համար իրենք հրապարակեն և մեկնաբանությունների համար հանրությանը, այդ թվում՝ քրոգտագործողներին, հասանելի դարձնեն հետևյալը՝

ա) պլանի ստեղծման ժամանակացույցը և աշխատանքային ծրագիրը, այդ թվում՝ ձեռնարկվելիք խորհրդատվական միջոցառումների մասին հաշվետվություն՝ պլանում ներառված ժամկետի սկզբից առնվազն երեք տարի առաջ.

բ) ջրերի կառավարմանն առնչվող՝ գետավազանում հայտնաբերված էական խնդիրների ընթացիկ նկարագրությունը՝ պլանում ներառված ժամկետի սկզբից առնվազն երկու տարի առաջ.

գ) գետավազանային կառավարման պլանի նախագծի պատճենները՝ պլանում ներառված ժամկետի սկզբից առնվազն մեկ տարի առաջ:

Համապատասխան պահանջի դեպքում տրամադրվում են այն հիմնական փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք օգտագործվել են գետավազանային կառավարման պլանի նախագծի մշակման համար:

2. Անդամ պետությունները տրամադրում են առնվազն վեց ամիս՝ այդ փաստաթղթերը գրավոր մեկնաբանելու համար՝ ակտիվ մասնակցություն և խորհրդատվություն ապահովելու նպատակով:

3. 1-ին և 2-րդ պարբերությունները հավասարապես կիրառվում են թարմացված գետավազանային կառավարման պլանների նկատմամբ:

Հոդված 15

Հաշվետվությունները ներկայացնելը

1. Անդամ պետությունները գետավազանային կառավարման պլանների և հետագա բոլոր թարմացումների պատճեններն ուղարկում են Հանձնաժողով և ցանկացած շահագրգիռ անդամ պետություն՝ դրանց հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում՝

ա) ամբողջությամբ անդամ պետության տարածքում գտնվող գետավազանային տարածքների համար՝ գետավազանային կառավարման բոլոր պլանները, որոնք ընդգրկում են այդ ազգային տարածքը և հրապարակվել են 13-րդ հոդվածի համաձայն.

բ) միջազգային գետավազանային տարածքների համար՝ գետավազանային կառավարման պլանների առվազն այն մասը, որն ընդգրկում է անդամ պետության տարածքը:

2. Անդամ պետությունները ներկայացնում են ամփոփ հաշվետվություններ՝

– 5-րդ հոդվածի համաձայն պահանջվող վերլուծությունների մասին, և

– 8-րդ հոդվածով նախատեսված դիտանցման ծրագրերի մասին,

որոնք մշակվել են գետավազանային կառավարման առաջին ծրագրի նպատակներով՝ դրանց ավարտից հետո երեք ամսվա ընթացքում:

3. Անդամ պետությունները գետավազանային կառավարման յուրաքանչյուր պլանի հրապարակումից կամ, 13-րդ հոդվածի համաձայն թարմացումից հետո ներկայացնում են միջոցառումների նախատեսված ծրագրի իրականացման առաջընթացի մասին ընթացիկ զեկույց:

Ջրերի աղտոտումը կանխելուն ուղղված ռազմավարությունները

1. Եվրոպական պառլամենտը և Խորհուրդն ընդունում են հատուկ միջոցներ՝ առանձին այն աղտոտիչներով կամ աղտոտիչների այն խմբերով ջրերի աղտոտման դեմ, որոնք էական վտանգ են ներկայացնում ջրային միջավայրի համար կամ դրա միջոցով՝ ներառյալ խմելու ջրի ջրառի համար օգտագործվող ջրերին սպառնացող վտանգները: Այդ աղտոտիչների դեպքում միջոցներն ուղղված են դրանց աստիճանական կրճատմանը, իսկ ինչպես սահմանված է 2(30) հոդվածով, առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերի դեպքում՝ դրանց արտանետումների, արտահոսքերի և կորուստների վերացմանը կամ փուլ առ փուլ կրճատմանը: Նման միջոցներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկների հիման վրա՝ Պայմանագրով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

2. Հանձնաժողովը ներկայացնում է առաջարկ՝ սահմանելով առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր այն նյութերի ցանկը, որոնք էական վտանգ են ներկայացնում ջրային միջավայրի համար կամ դրա միջոցով: Նյութերի նկատմամբ միջոցառումներ են ձեռնարկվում առաջնահերթության սկզբունքով՝ ելնելով այն վտանգից, որ դրանք ներկայացնում են ջրային միջավայրին կամ դրա միջոցով, և որոշվել են՝

ա) Խորհրդի թիվ 793/93 կանոնակարգի (ԵՏՀ) ⁽²³⁾, Խորհրդի 91/414/ԵՏՀ հրահանգի ⁽²⁴⁾ և Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 98/8/ԵՀ հրահանգի ⁽²⁵⁾ համաձայն կատարված ռիսկի գնահատմամբ, կամ

բ) ռիսկի գործոնի վրա հիմնված թիրախային գնահատմամբ (հիմնվելով թիվ 793/93 կանոնակարգի (ԵՏՀ) մեթոդաբանության վրա)՝ կենտրոնանալով միայն ջրային էկոհամակարգի թունավորման և ջրային միջավայրի միջոցով մարդու թունավորման վրա:

2. Անհրաժեշտության դեպքում, 4-րդ պարբերությամբ սահմանված ժամանակացույցին համապատասխանելու նպատակով, նյութերի նկատմամբ միջոցառումներ են ձեռնարկվում առաջնահերթության սկզբունքով՝ ելնելով այն ջրային միջավայրին կամ դրա միջոցով սպառնացող վտանգից, որը որոշվել է ռիսկի գործոնի հիման վրա գնահատման

պարզեցված ընթացակարգով՝ հիմնվելով գիտական սկզբունքների վրա և մասնավորապես հաշվի առնելով՝

- վկայությունը տվյալ նյութին բնորոշ վտանգի մասին և, մասնավորապես, էկոհամակարգի համար կամ ջրային ազդեցության ուղիներով մարդու համար թունավոր լինելու մասին, և
- շրջակա միջավայրի լայնածավալ աղտոտման մասին վկայությունը՝ հիմնվելով դիտանցման արդյունքների վրա և
- այլ ապացուցված գործոններ, որոնք կարող են վկայել շրջակա միջավայրի լայնածավալ աղտոտման հնարավորությունը, ինչպես օրինակ՝ տվյալ նյութի արտադրության կամ օգտագործման ծավալն ու օգտագործման եղանակները:

3. Հանձնաժողովի առաջարկում նաև նշվում են առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերը: Այդ դեպքում Հանձնաժողովը հաշվի է առնում վտանգավոր նյութերի այն ցանկը, որը նշված է վտանգավոր նյութերի մասին Համայնքի օրենսդրությունում կամ համապատասխան միջազգային համաձայնագրերում:

4. Հանձնաժողովը վերանայում է առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ընդունված ցանկը սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը չորս տարի հետո, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ, և ներկայացնում է համապատասխան առաջարկներ:

5. Առաջարկը մշակելիս Հանձնաժողովը հաշվի է առնում Թունավորման, էկոհամակարգի թունավորման և շրջակա միջավայրի հարցերով գիտական կոմիտեի, անդամ պետությունների, Եվրոպական պառլամենտի, Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության, Համայնքի հետազոտական ծրագրերի, այն միջազգային կազմակերպությունների, որոնց անդամն է Համայնքը, Եվրոպական բիզնես կազմակերպությունների, այդ թվում՝ այն կազմակերպությունների, որոնք ներկայացնում են փոքր և միջին բիզնեսը, Եվրոպական բնապահպանական կազմակերպությունների առաջարկությունները և իրեն ներկայացվող մյուս համապատասխան տեղեկությունները:

6. Առաջնահերթ միջոցառումներ պահանջող վտանգավոր նյութերի համար Հանձնաժողովը առաջարկներ է ներկայացնում հետևյալի վերահսկողության համար՝

- համապատասխան նյութերի արտանետումների, արտահոսքերի և կորուստների աստիճանական կրճատման և, մասնավորապես,
- 3-րդ պարբերությամբ սահմանված նյութերի արտանետումների, արտահոսքերի և կորստի վերացման կամ աստիճանական կրճատման համար՝ ներառյալ համապատասխան ժամանակացույց՝ դա իրականացնելու համար: Ժամանակացույցը չպետք է գերազանցի 20 տարին՝ սկսած Եվրոպական պառլամենտի և Խորհրդի կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն առաջարկներն ընդունելու ժամկետից:

Այդ դեպքում Հանձնաժողովը կետային և ցրված աղբյուրների համար սահմանում է համապատասխան տնտեսապես արդյունավետ ու համարժեք մակարդակ, ինչպես նաև արտադրանքի ու գործընթացի վերահսկողության համադրություն, և գործընթացի վերահսկողության համար հաշվի է առնում Համայնքում կիրառվող թույլատրելի սահմանային արտահոսքի միասնական չափանիշները: Անհրաժեշտության դեպքում սահմանվում են Համայնքի մակարդակով գործողություններ գործընթացի վերահսկողության համար՝ ըստ բնագավառների: Եթե արտադրանքի վերահսկողությունն ընդգրկում է 91/441/ԵՏՀ և 98/8/ԵՀ հրահանգների համաձայն տրված համապատասխան թույլտվությունների վերանայում, ապա նման վերանայումներն իրականացվում են այդ հրահանգների դրույթների համաձայն: Վերահսկողության յուրաքանչյուր առաջարկում նշվում է դրանց վերանայման, թարմացման և արդյունավետության գնահատման միջոցառումները:

7. Հանձնաժողովն առաջարկներ է ներկայացնում մակերևութային ջրերում, նստվածքներում և բիոտայում առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի կոնցենտրացիաների նկատմամբ կիրառվող որակի ստանդարտների մասին:

8. Հանձնաժողովն առաջարկներ է ներկայացնում՝ 6-րդ և 7-րդ պարբերությունների համաձայն և առնվազն կետային աղբյուրների համար արտահոսքի նկատմամբ վերահսկողության ու շրջակա միջավայրի որակի ստանդարտների համար՝ համապատասխան նյութն առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկի մեջ ներառելուց հետո երկու տարվա ընթացքում: Առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի առաջին ցանկում ներառված նյութերի համար սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո վեց տարի հետո Համայնքի մակարդակով համաձայնագրի բացակայության դեպքում

անդամ պետությունները սահմանում են շրջակա միջավայրի որակի ստանդարտներ՝ այդ նյութերով աղտոտված բոլոր մակերևութային ջրերի համար, ինչպես նաև նման արտանետումների հիմնական աղբյուրների վերահսկողություն՝ հաշվի առնելով, մասնավորապես, արտանետումների կրճատման բոլոր տեխնիկական հնարավորությունները: Առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկում հետագայում ներառված նյութերի համար, Համայնքի մակարդակով համաձայնագրի բացակայության դեպքում, անդամ պետությունները նման գործողություն են ձեռնարկում նյութը ցանկի մեջ ներառելուց հետո հինգ տարի հետո:

9. Հանձնաժողովը կարող է մշակել ռազմավարություններ ցանկացած այլ աղտոտիչի կամ աղտոտիչների խմբի միջոցով ջրերի աղտոտման դեմ, այդ թվում՝ այն աղտոտման դեմ, որը վթարների հետևանք է:

10. 6-րդ և 7-րդ հոդվածների համաձայն առաջարկները մշակելիս Հանձնաժողովը նաև վերանայում է IX հավելվածում թվարկված հրահանգները: Մինչև 8-րդ պարբերությամբ սահմանված վերջնաժամկետը՝ Հանձնաժողովն առաջարկում է IX հավելվածում նշված վերահսկողության միջոցների վերանայում բոլոր այն նյութերի համար, որոնք ներառվել են առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկում, և ներկայացնում է բոլոր համապատասխան միջոցառումները, այդ թվում՝ մյուս նյութերի համար IX հավելվածի համաձայն սահմանված վերահսկողության միջոցառումները հնարավոր չեղյալ համարելը:

IX հավելվածի համաձայն սահմանված վերահսկողության բոլոր միջոցառումները, որոնց համար առաջարկվում են վերանայումներ, չեղյալ են համարվում այդ վերանայումներն ուժի մեջ մտնելուց առաջ:

11. 2-րդ և 3-րդ պարբերությունների մեջ նշված նյութերի առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկը, որն առաջարկում է Հանձնաժողովը, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի կողմից ընդունվելուց հետո դառնում է սույն Հրահանգի X հավելվածը: Ցանկի վերանայումը, որը նշված է 4-րդ պարբերությունում, իրականացվում է նույն ընթացակարգով:

Հոդված 17

Ստորերկրյա ջրերի աղտոտումը կանխելու և վերահսկելու ռազմավարությունները

1. Եվրոպական պառլամենտը և Խորհուրդն ընդունում են հատուկ միջոցներ՝ ստորերկրյա ջրերի աղտոտումը կանխելու և վերահսկելու նպատակով: Նման միջոցներն ուղղված են ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակ ապահովելու նպատակին՝ 4(1)(բ) հոդվածին համապատասխան և ընդունվում են՝ գործելով սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից Պայմանագրով սահմանված ընթացակարգերի համաձայն ներկայացված առաջարկի հիման վրա:

2. Միջոցներ առաջարկելիս Հանձնաժողովը հաշվի է առնում 5-րդ հոդվածի և 2-րդ հավելվածի համաձայն իրականացված վերլուծությունը: Տվյալների առկայության դեպքում նման միջոցներն առաջարկվում են ավելի շուտ և ընդգրկում են՝

ա) չափորոշիչներ՝ ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակի գնահատման համար՝ II(2.2) հավելվածի և V(2.3.2) ու (2.4.5) հավելվածների համաձայն.

բ) չափորոշիչներ կոնցենտրացիաների էական ու շարունակական աճի միտումների բացահայտման և միտումները կանխելուն ուղղված՝ V(2.4.4) հավելվածի համաձայն օգտագործվող ելակետային կետերը սահմանելու համար:

3. 1-ին պարբերության կիրառումից բխող միջոցառումներն ընդգրկվում են 11-րդ հոդվածի համաձայն պահանջվող միջոցառումների ծրագրում:

4. Համայնքի մակարդակով 2-րդ պարբերության համաձայն ընդունված չափորոշիչների բացակայության դեպքում անդամ պետությունները սահմանում են համապատասխան չափորոշիչներ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը հինգ տարի հետո:

5. Ազգային մակարդակով 4-րդ պարբերության համաձայն ընդունված չափորոշիչների բացակայության դեպքում միտման կանխման համար ելակետային կետ է համարվում որակի ստանդարտների մակարդակի առավելագույնը 75%-ը, որոնք սահմանված են ստորերկրյա ջրերի նկատմամբ կիրառվող Համայնքի գործող օրենսդրությամբ:

Հանձնաժողովի զեկույցը

1. Հանձնաժողովը զեկույց է հրապարակում սույն Հրահանգի իրականացման մասին սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 12 տարի հետո, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ, և այն ներկայացնում են Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

Զեկույցն ընդգրկում է հետևյալը՝

ա) սույն Հրահանգի կիրարկման առաջընթացի վերանայում.

բ) Համայնքի մակերևութային և ստորերկրյա ջրերի վիճակի վերանայում՝ համագործակցելով Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության հետ.

գ) 15-րդ հոդվածի համաձայն ներկայացված՝ գետավազանային կառավարման պլանների ուսումնասիրություն՝ ներառյալ հետագա պլանների բարելավման առաջարկությունները.

դ) անդամ պետությունների կողմից 12-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողով ներկայացված յուրաքանչյուր զեկույցի կամ առաջարկության պատասխանի ամփոփագիր.

ե) 16-րդ հոդվածի համաձայն մշակված առաջարկների, վերահսկողության միջոցառումների կամ ռազմավարությունների ամփոփագիր.

զ) կիրարկման մասին նախկին զեկույցների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի կողմից ներկայացված մեկնաբանությունների պատասխանների ամփոփագիր:

3. Հանձնաժողովը նաև հրապարակում է իրականացման առաջընթացի մասին զեկույց՝ հիմնվելով 15(2) հոդվածի համաձայն անդամ պետությունների կողմից ներկայացված ամփոփ զեկույցների վրա և 5-րդ և 8-րդ հոդվածներում նշված ժամկետներից ամենաուշը երկու տարի հետո այն ներկայացնում է Եվրոպական պառլամենտ ու անդամ պետություններ:

4. Հանձնաժողովը, 1-ին պարբերության համաձայն յուրաքանչյուր զեկույցի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում Հրահանգի կիրարկման առաջընթացի մասին զեկույց է հրապարակում՝ անդամ պետությունների կողմից 15(3) հոդվածի համաձայն

ներկայացված ընթացիկ զեկույցների հիման վրա: Այդ զեկույցը ներկայացվում է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

5. Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, զեկույցները ներկայացնելու շրջանի ընթացքում գումարում է համաժողով, որին մասնակցում են Համայնքի ջրային քաղաքականության շահագրգիռ կողմերը յուրաքանչյուր անդամ պետությունից՝ կիրարկման մասին Հանձնաժողովի զեկույցների վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու և փորձի փոխանակման նպատակով:

Մասնակիցների թվում պետք է լինեն իրավասու մարմինների, Եվրոպական պառլամենտի, հասարակական կազմակերպությունների, սոցիալական ու տնտեսական գործընկերների և սպառողների միությունների ներկայացուցիչներ, գիտական աշխատողներ և այլ փորձագետներ:

Հոդված 19

Համայնքի հետագա միջոցառումների ծրագրերը

1. Տարին մեկ անգամ Հանձնաժողովը, տեղեկությունների տրամադրման նպատակով, 21-րդ հոդվածում նշված Կոմիտե է ներկայացնում ջրային օրենսդրության վրա ազդեցություն ունեցող միջոցառումների մոտավոր ծրագիր, որը Հանձնաժողովը մտադրվում է առաջարկել մոտ ապագայում, այդ թվում՝ 16-րդ հոդվածի համաձայն մշակված առաջարկներից, վերահսկողության միջոցառումներից և ռազմավարություններից բխող ցանկացած ծրագիր: Հանձնաժողովը միջոցառումների առաջին նման ծրագիրը ներկայացնում է սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը երկու տարի հետո:

2. Հանձնաժողովը սույն Հրահանգը կվերանայի սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց ամենաուշը 19 տարի հետո և կառաջարկի ցանկացած անհրաժեշտ փոփոխություն:

▼M2

Հոդված 20

Հրահանգի տեխնիկական համապատասխանեցումը

1. I ու III հավելվածները և V հավելվածի 1.3.6 բաժինը կարող են համապատասխանեցվել գիտական և տեխնիկական առաջընթացին՝ հաշվի առնելով գետավազանային

կառավարման պլանների վերանայման և թարմացման ժամկետները, ինչպես նշված է 13-րդ հոդվածում: Այդ միջոցառումները, որոնք նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում են 21(3) հոդվածում նշված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը կարող է ընդունել ուղեցույցներ II և V հավելվածների իրականացման վերաբերյալ՝ 21(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Տվյալների, այդ թվում՝ վիճակագրական և քարտեզագրական տվյալների փոխանցման և մշակման նպատակով տեխնիկական ձևաչափերը 1-ին պարբերության նպատակով կարող են ընդունվել՝ 21(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 21

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին օժանդակում է կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 22

Ուժը կորցրած ճանաչված իրավական ակտերը և անցումային դրույթները

1. Հետևյալ իրավական ակտերն ուժը կորցրած են ճանաչվում սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց յոթ տարի հետո՝

- «Անդամ պետություններում խմելու ջրի ջրառի համար նախատեսված մակերևութային ջրերի պահանջվող որակի մասին» 1975 թվականի հունիսի 16-ի 75/440/ԵՏՀ հրահանգ (26.)

- Համայնքում քաղցրահամ մակերևութային ջրերի որակի մասին տեղեկությունների փոխանակման ընդհանուր ընթացակարգ սահմանող՝ Խորհրդի 1977 թվականի դեկտեմբերի 12-ի 77/795/ԵՏՀ որոշում (27.)

- «Անդամ պետություններում խմելու ջրի ջրառի համար նախատեսված մակերևութային ջրերի չափման մեթոդների և նմուշառման ու վերլուծության հաճախականության մասին» Խորհրդի 1979 թվականի հոկտեմբերի 9-ի 79/869/ԵՏՀ հրահանգ (28):

2. Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց 13 տարի հետո հետևյալ իրավական ակտերն ուժը կորցրած են ճանաչվում՝

- «Ձկների պահպանման նպատակով պաշտպանության կամ բարելավման կարիք ունեցող քաղցրահամ ջրերի որակի մասին» Խորհրդի 1978 թվականի հուլիսի 18-ի 78/659/ԵՏՀ հրահանգ

- «Խեցեմորթներով ու կակղամորթներով հարուստ ջրերի պահանջվող որակի մասին» Խորհրդի 1979 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 79/923/ԵՏՀ հրահանգ

- «Որոշ վտանգավոր նյութերով աղտոտումից ստորերկրյա ջրերի պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի 80/68/ԵՏՀ հրահանգ

- 76/464 ԵՏՀ հրահանգը՝ բացառությամբ 6-րդ հոդվածի, ուժը կորցրած է ճանաչվում սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Հետևյալ անցումային դրույթները կիրառվում են 76/464/ԵՏՀ հրահանգի նկատմամբ՝

ա) սույն Հրահանգի 16-րդ հոդվածի համաձայն ընդունված առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկը փոխարինում է 1982 թվականի հունիսի 22-ին Հանձնաժողովի կողմից Խորհրդին ուղղված հաղորդագրության մեջ առաջնահերթության սկզբունքով նշված նյութերի ցանկին.

բ) 76/464/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածի նպատակներով՝ անդամ պետությունները կարող են կիրառել սույն Հրահանգով սահմանված սկզբունքներն աղտոտման

խնդիրների և դրանք առաջացնող նյութերի հայտնաբերման, որակի ստանդարտների սահմանման ու միջոցների ընդունման համար:

4. 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական նպատակները և IX հավելվածով ու 16(7) հոդվածի համաձայն սահմանված որակի ստանդարտները, ինչպես նաև այն ստանդարտները, որոնք սահմանվել են անդամ պետությունների կողմից V հավելվածի համաձայն առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկում չընդգրկված նյութերի համար և 16(8) հոդվածի համաձայն առաջնահերթ միջոցառումներ պահանջող այն նյութերի համար, որոնց համար չեն սահմանվել Համայնքի ստանդարտները, համարվում են շրջակա միջավայրի որակի ստանդարտներ՝ 96/61/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 10-րդ կետի և 10-րդ հոդվածի նպատակներով:

5. Եթե 16-րդ հոդվածի համաձայն ընդունված առաջնահերթ միջոցառումներ պահանջող նյութերի ցանկում ընդգրկված նյութը ներառված չէ սույն Հրահանգի VIII հավելվածում կամ 96/61/ԵՀ հրահանգի III հավելվածում, ապա այն ավելացվում է:

6. Մակերևութային ջրային մարմինների համար սույն Հրահանգով պահանջվող գետավազանային կառավարման առաջին պլանի համաձայն սահմանված բնապահպանական նպատակներով, որպես նվազագույն պահանջ, գործողության մեջ են մտնում որակի այնպիսի խիստ ստանդարտներ, ինչպիսիք են այն ստանդարտները, որոնք պահանջվում են՝ 76/464/ԵՏՀ հրահանգը կիրարկելու համար:

Հոդված 23

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ:

Հոդված 24

Կիրարկումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական ակտեր՝ ամենաուշը մինչև 2003 թվականի դեկտեմբերի 22-ը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում ազգային իրավունքի հիմնադրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովն այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 25

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակվելու օրվանից:

Հոդված 26

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես պահանջվում է 3(8) հոդվածով, անդամ պետությունները տրամադրում են հետևյալ տեղեկություններն իրենց պետության յուրաքանչյուր գետավազանային տարածքի, ինչպես նաև միջազգային գետավազանային տարածքի՝ իրենց պետության տարածքում գտնվող հատվածի բոլոր իրավասու մարմինների վերաբերյալ՝

i) *իրավասու մարմնի անունը և հասցեն*. 3(2) հոդվածով սահմանված մարմնի պաշտոնական անունը և հասցեն.

ii) *գետավազանային տարածքի աշխարհագրական ծածկույթը*. գետավազանային տարածքի հիմնական գետերի անունները՝ գետավազանային տարածքի սահմանների մանրամասն նկարագրության հետ: Այդ տեղեկությունները, հնարավորության սահմաններում, պետք է մատչելի լինեն աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GIS) ներմուծելու և(կամ) Հանձնաժողովի աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GISCO) ներմուծելու համար.

iii) *իրավասու մարմնի իրավական կարգավիճակը*. իրավասու մարմնի իրավական կարգավիճակի նկարագրություն և, անհրաժեշտության դեպքում, դրա կանոնադրության, հիմնադիր պայմանագրի կամ համարժեք իրավական փաստաթղթի ամփոփ նկարագիրը կամ պատճենը.

iv) *պարտականությունները*. յուրաքանչյուր իրավասու մարմնի իրավական և վարչական պարտականությունների ու գետավազանային տարածքում դրա դերի նկարագիրը.

v) *անդամակցությունը*. Եթե իրավասու մարմինը գործում է որպես համակարգող մարմին մյուս իրավասու մարմինների համար, ապա պահանջվում է այդ մարմինների ցանկը՝ համակարգումն ապահովելու համար սահմանված ինստիտուցիոնալ հարաբերությունների ամփոփ նկարագրի հետ.

vi) *միջազգային հարաբերությունները*. Եթե գետավազանային տարածքն ընդգրկում է մեկից ավելի անդամ պետությունների տարածքներ կամ անդամ չհանդիսացող պետությունների տարածքներ, ապա պահանջվում է ինստիտուցիոնալ

հարաբերությունների ամփոփ նկարագիր՝ համագործակցության ապահովման նպատակով:

1 ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԸ

1.1. Մակերևութային ջրային մարմինների տեսակների բնութագիրը

Անդամ պետությունները որոշում են մակերևութային ջրային մարմինների տեղանքն ու սահմանները և կազմում են բոլոր նման մարմինների նախնական բնութագիրը՝ հետևյալ մեթոդաբանությանը համապատասխան: Այդ նախնական բնութագրման նպատակով՝ անդամ պետությունները կարող են խմբավորել մակերևութային ջրային մարմինները:

i) Գետավազանային տարածքի մակերևութային ջրային մարմինները որոշվում են ըստ մակերևութային ջրերի հետևյալ տեսակների՝ գետեր, լճեր, տարանցիկ ջրեր կամ առափնյա ջրեր, կամ որպես արհեստական մակերևութային ջրային մարմիններ կամ խիստ փոփոխված մակերևութային ջրային մարմիններ:

ii) Յուրաքանչյուր մակերևութային ջրի տեսակի համար գետավազանային տարածքի համապատասխան մակերևութային ջրային մարմինները տարբերակվում են ըստ տեսակների: Այդ տեսակներն այն տեսակներն են, որոնք սահմանվել են՝ օգտագործելով 1.2 բաժնում նշված «Ա համակարգը» կամ «Բ համակարգը»:

iii) Եթե օգտագործվում է Ա համակարգը, ապա գետավազանային տարածքի մակերևութային ջրային մարմինները նախ տարբերակվում են՝ ըստ համապատասխան էկոտարածաշրջանների՝ 1.2 բաժնում նշված աշխարհագրական տարածքներին համապատասխան և ներկայացվում են XI հավելվածի համապատասխան քարտեզում: Այնուհետև յուրաքանչյուր էկոտարածաշրջանի ջրային մարմինները դասակարգվում են ըստ մակերևութային ջրային մարմինների՝ Ա համակարգի աղյուսակներում նշված բնութագրիչներին համապատասխան:

iv) Եթե օգտագործվում է Բ համակարգը, ապա անդամ պետությունները պետք է ապահովեն տարբերակման նույն աստիճան, որը կապահովվեր Ա համակարգն օգտագործելու դեպքում: Համապատասխանաբար, գետավազանային տարածքի մակերևութային ջրային մարմինները տարբերակվում են ըստ տեսակների՝ օգտագործելով պարտադիր բնութագրիչների արժեքները և այնպիսի ոչ պարտադիր բնութագրիչներ կամ բնութագրիչների համադրություններ, որոնք անհրաժեշտ են՝

այդ տեսակին բնորոշ կենսաբանական բնականոն պայմանների առկայությունն ապահովելու համար:

v) Արհեստական և խիստ փոփոխված մակերևութային ջրային մարմինների դեպքում տարբերակումն իրականացվում է այն բնութագրիչների համաձայն, որոնք մակերևութային ջրերի տեսակներից առավել նման են տվյալ խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմնին:

vi) Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում Ա համակարգի համաձայն տարբերակված տեսակների աշխարհագրական դիրքը բնութագրող քարտեզ կամ քարտեզներ (GIS ձևաչափով):

1.2. Էկոտարածաշրջանները և մակերևութային ջրային մարմինների տեսակները

1.2.1. Գետերը

Համակարգ Ա

Ֆիքսված տիպաբանություն	Բնութագրիչներ
Էկոտարածաշրջան	XI հավելվածի Ա քարտեզում ներկայացված էկոտարածաշրջանները
Տեսակը	Բարձրության տիպաբանություն բարձրադիր՝ > 800 մ միջին՝ 200-800 մ ցածրադիր՝ <200 մ Ջրհավաք ավազանային տարածքի վրա հիմնված մասշտաբի տիպաբանություն փոքր՝ 10- 100 կմ ² միջին՝ > 100-1 000 կմ ² մեծ՝ > 1 000- 10 000 կմ ²

շատ մեծ՝ > 10 000 կմ²
Երկրաբանական կազմ
կրաքարային
սիլիկատային
օրգանական

Համակարգ F

Այլընտրանքային բնութագրում	Ֆիզիկական և քիմիական գործոններ, որոնք սահմանում են գետի կամ գետի մի մասի բնութագիրը և, հետևաբար, կենսաբանական պոպուլյացիաների կառուցվածքն ու կազմը
Պարտադիր գործոններ	բարձրությունը լայնությունը երկայնությունը երկրաբանական կազմը մասշտաբը
Ոչ պարտադիր գործոններ	հեռավորությունը ջրաղբյուրից հոսքի էներգիան (հոսքի և թեքության գործառույթը) ջրի միջին լայնությունը ջրի միջին խորությունը ջրի միջին թեքությունը հիմնական գետի հունի ձևը գետի ծախսի (հոսքի) կատեգորիան

հովտի ձևը
 պինդ մարմինների տեղաշարժը
 թթուները չեզոքացնելու կարողությունը
 ենթաշերտի կազմը
 քլորիդը
 օդի ջերմաստիճանի տատանումները
 օդի միջին ջերմաստիճանը
 տեղումները

1.2.2. Լճերը

Համակարգ Ա

Ֆիզսված տիպաբանություն	Բնութագրիչներ
Էկոտարածաշրջան	XI հավելվածի Ա քարտեզում ներկայացված էկոտարածաշրջանները
Տեսակը	Բարձրության դասակարգում բարձրադիր՝ > 800 մ միջին՝ 200-800 մ ցածրադիր՝ <200 մ Խորության տիպաբանություն՝ ըստ միջին խորության <3 մ 3-15 մ > 15 մ Մասշտաբի տիպաբանություն՝ հիմնված տարածքի

	<p>մակերեսի վրա</p> <p>0,5- 1 կմ²</p> <p>1-10 կմ²</p> <p>10-100 կմ²</p> <p>> 100 կմ²</p> <p>Երկրաբանական կազմը</p> <p>կրաքարային</p> <p>սիլիկատային</p> <p>օրգանական</p>
--	---

Համակարգ Բ

Այլընտրանքային բնութագրում	Ֆիզիկական և քիմիական գործոններ, որոնք սահմանում են լճի բնութագիրը և, հետևաբար, կենսաբանական պոպուլյացիաների կառուցվածքը և կազմը
Պարտադիր գործոններ	<p>բարձրությունը</p> <p>լայնությունը</p> <p>երկայնությունը</p> <p>խորությունը</p> <p>Երկրաբանական կազմը</p> <p>մասշտաբը</p>
Ոչ պարտադիր գործոններ	<p>ջրի միջին խորությունը</p> <p>լճի ձևը</p>

մաքրման կայաններում կեղտաջրերի վերամշակման տևողությունը

օդի միջին ջերմաստիճանը

օդի ջերմաստիճանի տատանումները

խառը բնութագրեր (օրինակ՝ մոնոմիկտիկ, դիմիկտիկ, պոլիմիկտիկ)

թթուները չեզոքացնելու կարողությունը

աննդանյութերի ֆոնային վիճակը

ենթաշերտի կազմը

ջրի մակարդակի տատանումները

1.2.3. Տարանցիկ ջրերը

Համակարգ Ա

Ֆիքսված տիպաբանություն	Բնութագրիչներ
Էկոտարածաշրջան	<p>Հետևյալը նկարագրված է XI հավելվածի Բ քարտեզում՝</p> <p>Բալթիկ ծով</p> <p>Բարենցի ծով</p> <p>Նորվեգական ծով</p> <p>Հյուսիսային ծով</p> <p>Հյուսիսային ատլանտյան օվկիանոս</p> <p>Միջերկրական ծով</p>
Տեսակը	<p>Հիմնվելով միջին տարեկան աղայնության վրա՝</p> <p><0,5%: քաղցրահամ ջուր</p>

	<p>0,5-ից մինչև <5%՝ օլիգոհալին</p> <p>5-ից մինչև <18%՝ մեզոհալին</p> <p>18-ից մինչև <30%՝ պոլիհալին</p> <p>30-ից մինչև <40%՝ էվհալին</p> <p>հիմնվելով միջին մակընթացության-տեղատվության ամպլիտուդի վրա՝</p> <p><2 մ միկրոողողում</p> <p>2-ից 4 մ՝ մեզոողողում</p> <p>>4 մ՝ մակրոողողում</p>
--	--

Համակարգ P

Այլընտրանքային բնութագրում	Ֆիզիկական և քիմիական գործոններ, որոնք սահմանում են տարանցիկ ջրերի բնութագիրը և, հետևաբար, կենսաբանական պոպուլյացիաների կառուցվածքն ու կազմը
Ոչ պարտադիր գործոններ	<p>լայնությունը</p> <p>երկայնությունը</p> <p>մակընթացության-տեղատվության ամպլիտուդը</p> <p>աղայնությունը</p>
Ոչ պարտադիր գործոններ	<p>խորությունը</p> <p>ներկա արագությունը</p> <p>ալիքներից անպաշտպանվածությունը</p> <p>մաքրման կայաններում կեղտաջրերի վերամշակման</p>

տևողությունը
 ջրի միջին ջերմաստիճանը
 խառը բնութագիրը
 պղտորությունը
 ենթաշերտի կազմը
 ձևը
 ջրի ջերմաստիճանային տատանումները

1.2.4. Առափնյա ջրերը

Համակարգ Ա

Ֆիզիկաժ տիպաբանություն	Բնութագրիչներ
Էկոտարածաշրջան	Հետևյալը նկարագրված է XI հավելվածի Բ քարտեզում՝ Բալթիկ ծով Բարենցի ծով Նորվեգական ծով Հյուսիսային ծով Հյուսիսային ատլանտյան օվկիանոս Միջերկրական ծով
Տեսակը	Հիմնվելով միջին տարեկան աղայնության վրա՝ <0,5‰: քաղցրահամ ջուր 0.5-ից մինչև <5‰՝ օլիգոհալին 5-ից մինչև <18‰՝ մեզոհալին

	<p>18-ից մինչև 30%՝ պոլիհալին</p> <p>30-ից մինչև <40%՝ էվհալին</p> <p>հիմնվելով միջին խորության վրա՝</p> <p>ծանձաղ ջրեր <30 մ</p> <p>միջին խորության ջրեր՝ 30-200 մ</p> <p>խորը ջրեր >200 մ</p>
--	--

Համակարգ F

Այլընտրանքային բնութագրում	Ֆիզիկական և քիմիական գործոններ, որոնք պայմանավորում են տարանցիկ ջրերի բնութագիրը և, հետևաբար, կենսաբանական պոպուլյացիաների կառուցվածքն ու կազմը
Պարտադիր գործոններ	<p>լայնությունը</p> <p>երկայնությունը</p> <p>մակընթացության-տեղատվության ամպլիտուդը</p> <p>աղայնությունը</p>
Ոչ պարտադիր գործոններ	<p>ներկա արագությունը</p> <p>ալիքներից անպաշտպանվածությունը</p> <p>ջրի միջին ջերմաստիճանը</p> <p>խառը բնութագիրը</p> <p>պղտորությունը</p> <p>ներփակված ծովածոցում ջրերի պահպանման ժամկետը</p> <p>ենթաշերտի կազմը</p>

1.3. Մակերևութային ջրային մարմինների համար տիպային բնականոն պայմանների սահմանումը

i) 1.1 բաժնին համապատասխան բնութագրված մակերևութային ջրային մարմնի յուրաքանչյուր տեսակի համար տիպային հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկաքիմիական պայմանները սահմանվում են՝ ներկայացնելով այդ մակերևութային ջրային մարմնի համար V հավելվածի 1.1 կետում նշված հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկաքիմիական որակի տարրերի արժեքները էկոլոգիական լավ վիճակում, ինչպես սահմանված է V հավելվածի 1.2 կետի համապատասխան աղյուսակում: Տիպային կենսաբանական բնականոն պայմանները սահմանվում են՝ ներկայացնելով այդ մակերևութային ջրային մարմնի համար V հավելվածի 1.1 կետում նշված կենսաբանական որակի տարրերի արժեքները էկոլոգիական լավ վիճակում, ինչպես սահմանված է V հավելվածի 1.2 կետի համապատասխան աղյուսակում:

ii) Սույն բաժնով սահմանված ընթացակարգերը խիստ փոփոխված կամ արհեստական մակերևութային ջրային մարմինների նկատմամբ կիրառելիս էկոլոգիական գերազանց վիճակին հղումները համարվում են հղումներ V հավելվածի 1.2.5 աղյուսակով սահմանված էկոլոգիական առավելագույն պոտենցիալին: Ջրային մարմնի համար առավելագույն էկոլոգիական պոտենցիալը վերանայվում է յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

iii) (i) և (ii) կետերի նպատակով՝ տիպային պայմանները և տիպային կենսաբանական բնականոն պայմանները կարող են հիմնված լինել տարածական սկզբունքի վրա կամ մոդելավորման վրա կամ կարող են սահմանվել այս երկու մեթոդի համադրությամբ: Եթե հնարավոր չէ օգտագործել այդ մեթոդները, անդամ պետությունները կարող են հիմնվել փորձագետների եզրակացությունների վրա՝ այդ պայմանները սահմանելու համար: Էկոլոգիական գերազանց վիճակ սահմանելիս, կապված որոշակի սինթետիկ աղտոտիչների կոնցենտրացիաների հետ, աղտոտիչների հայտնաբերման սահմաններ են համարվում այն սահմանները, որոնք կարող են ապահովվել

հասանելի տեխնոլոգիաներին համապատասխան այն ժամանակ, երբ պետք է սահմանվեն տիպային պայմանները:

iv) Տարածական սկզբունքի վրա հիմնված տիպային կենսաբանական բնականոն պայմանների համար անդամ պետությունները մշակում են հղումների շրջանակ՝ մակերևութային ջրային մարմնի յուրաքանչյուր տեսակի համար: Շրջանակում ընդգրկվում են գերազանց վիճակում գտնվող տարածքներ՝ բնականոն պայմանների արժեքների նկատմամբ վստահության բավարար մակարդակ ապահովելու համար՝ հաշվի առնելով այդ մակերևութային ջրային մարմնի համար էկոլոգիական գերազանց վիճակին համապատասխանող որակի տարրերի արժեքների փոփոխականությունը և այն մոդելավորման մեթոդները, որոնք պետք է կիրառվեն (v) պարբերության համաձայն:

v) Մոդելավորման վրա հիմնված տիպային կենսաբանական բնականոն պայմանները կարող են սահմանվել՝ օգտագործելով կանխատեսման մոդելներ կամ վիճակագրական կանխատեսման մեթոդներ: Մեթոդների համար օգտագործվում են պատմական, պալեոլոգիական ու այլ հասանելի տվյալներ, այդ մեթոդներն ապահովում են բնականոն պայմանների արժեքների նկատմամբ վստահության բավարար մակարդակ՝ յուրաքանչյուր մակերևութային ջրային մարմնի հետ՝ սահմանված պայմանների համադրելիությունը և համապատասխանությունը երաշխավորելու համար:

vi) Եթե հնարավոր չէ սահմանել հուսալի տիպային բնականոն պայմաններ մակերևութային ջրային մարմնի որևէ տեսակի որակական տարրի համար՝ այդ տարրին բնորոշ բնական փոփոխականության բարձր աստիճանի, այլ ոչ թե սեզոնային փոփոխականության հետևանքով, ապա այդ տարրը կարող է բացառվել այդ մակերևութային ջրի տեսակի համար էկոլոգիական վիճակի գնահատումից: Նման հանգամանքներում անդամ պետությունները գետավազանի կառավարման պլանում ներկայացնում են այդ տարրը բացառելու պատճառները:

1.4. Ճնշումների բացահայտումը

Անդամ պետությունները տեղեկություններ են հավաքում և պահպանում յուրաքանչյուր գետավազանային տարածքում մակերևութային ջրային մարմինների նկատմամբ

գործադրվող էական անտրոպոգեն ճնշումների ձևի ու չափի՝ մասնավորապես հետևյալի մասին:

Քաղաքային, արդյունաբերական, գյուղատնտեսական ու այլ օբյեկտների և այդ ոլորտների գործունեության հետևանքով, մասնավորապես VIII հավելվածում թվարկված նյութերից կետային աղտոտման էական աղբյուրի գնահատում և բացահայտում՝ ստորև նշված աղբյուրների համաձայն հավաքված տեղեկությունների հիման վրա՝

i) 91/271/ԵՏՀ հրահանգի 15-րդ և 17-րդ հոդվածներ,

ii) 91/61/ԵՀ հրահանգի 9-րդ և 15-րդ հոդվածներ (31),

և գետավազանային կառավարման նախնական պլանի նպատակներով՝

iii) 76/464/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդված, և

iv) 75/440/ԵՀ, 76/160/ԵՏՀ (32), 78/659/ԵՏՀ և 79/923/ԵՏՀ (33) հրահանգներ:

Քաղաքային, արդյունաբերական, գյուղատնտեսական ու այլ օբյեկտների և այդ ոլորտների գործունեության հետևանքով, մասնավորապես VIII հավելվածում թվարկված նյութերից ցրված աղտոտման էական աղբյուրի գնահատում և բացահայտում՝ ստորև նշված աղբյուրների համաձայն հավաքված տեղեկությունների հիման վրա՝

i) 91/676/ԵՏՀ հրահանգի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներ (34),

ii) 91/414/ԵՏՀ հրահանգի 7-րդ և 17-րդ հոդվածներ,

iii) 98/8/ԵՀ հրահանգ,

և գետավազանային կառավարման առաջին պլանի նպատակներով՝

iv) 75/440/ԵՏՀ, 76/160/ԵՏՀ, 76/464/ԵՏՀ, 78/659/ԵՏՀ և 79/923/ԵՏՀ հրահանգներ:

Քաղաքային, արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ տնտեսություններում օգտագործման նպատակով էական ծավալի ջրառի, այդ թվում՝ սեզոնային տատանումների և ընդհանուր տարեկան պահանջարկի, ինչպես նաև բաշխման համակարգերում ջրի կորուստի ցուցանիշների գնահատում և բացահայտում:

Հոսքի ընդհանուր բնութագրի և ջրային բալանսի վրա ջրի հոսքի, այդ թվում՝ ջրի փոխադրման և ջրի հունի փոփոխման հետ կապված էական կարգավորումների ազդեցության գնահատում և բացահայտում:

Ջրային մարմիններում էական կառուցվածքային (մորֆոլոգիական) փոփոխությունների բացահայտում:

Մակերևութային ջրերի վիճակի վրա այլ էական նշանակության անտրոպոգեն ազդեցությունների գնահատում և բացահայտում:

Հողօգտագործման սխեմաների գնահատում՝ ներառյալ քաղաքային, արդյունաբերական և գյուղատնտեսական հիմնական տարածքների, անհրաժեշտության դեպքում նաև՝ ձկնարդյունաբերական տարածքների և անտառների բացահայտում:

1.5. Ազդեցության գնահատումը

Անդամ պետությունները գնահատում են վերը նշված ճնշումների նկատմամբ մակերևութային ջրային մարմինների խոցելիությունը:

Անդամ պետությունները վերը նշված գործողությունների արդյունքում հավաքված տեղեկությունները և այդ առնչությամբ ցանկացած այլ տեղեկություն՝ ներառյալ շրջակա միջավայրի դիտանցման առկա տվյալները, օգտագործում են, որպեսզի գնահատեն գետավազանային տարածքում գտնվող մակերևութային ջրային մարմինների՝ 4-րդ հոդվածով սահմանված և այդ մարմիններին ներկայացված շրջակա միջավայրի որակի նպատակային ցուցանիշները չապահովելու հավանականությունը:

Այդպիսի գնահատմանն աջակցելու համար անդամ պետությունները կարող են կիրառել մոդելավորման մեթոդներ:

Շրջակա միջավայրի որակի նպատակային ցուցանիշները չապահովելու առումով ռիսկային համարվող ջրային մարմինների համար, անհրաժեշտության դեպքում, իրականացվում է առավել մանրամասն բնութագրում՝ 8-րդ հոդվածի համաձայն պահանջվող դիտանցման ծրագրերը և 11-րդ հոդվածի համաձայն պահանջվող միջոցառումների ծրագրերն օպտիմալացնելու նպատակով:

2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԸ

2.1. Նախնական բնութագրումը

Անդամ պետություններն իրականացնում են բոլոր ստորերկրյա ջրային մարմինների նախնական բնութագրում՝ դրանց օգտագործումը և 4-րդ հոդվածով սահմանված նպատակները չիրականացնելու առումով՝ յուրաքանչյուր ստորերկրյա ջրային մարմնի ռիսկի աստիճանը գնահատելու համար:

Անդամ պետությունները կարող են խմբավորել ստորերկրյա ջրային մարմինները՝ այդ նախնական բնութագրման նպատակով: Այդ վերլուծությունը կարող է օգտագործել հիդրոլոգիական, երկրաբանական, հողագիտական, հողօգտագործման, արտանետումների, ջրառի և առկա այլ տվյալներ, սակայն պետք է բացահայտի հետևյալը՝

- ստորերկրյա ջրային մարմնի կամ մարմինների գտնվելու վայրը և սահմանները.
- ճնշումները, որոնց ենթարկվում է ստորերկրյա ջրային մարմինը կամ մարմինները՝ ներառյալ՝
 - ցրված աղտոտման աղբյուրները.
 - կետային աղտոտման աղբյուրները.
 - ջրառը.
 - արհեստական վերականգնումը.
- ջրիավաք ավազանի վերին շերտի ընդհանուր բնութագրիչը, որտեղից վերականգնվում է ստորերկրյա ջրային մարմինը.
- այն ստորերկրյա ջրային մարմինները, որոնց համար կան ուղղակիորեն կապակցված մակերևութային ջրային կամ ցամաքային էկոհամակարգեր:

2.2. Առավել մանրամասն բնութագրումը

Նախնական բնութագրումից հետո անդամ պետություններն առավել մանրամասնորեն են բնութագրում ռիսկային ճանաչված ստորերկրյա ջրային մարմինները կամ մարմինների խմբերը՝ նպատակ ունենալով առավել ճշգրիտ գնահատելու այդ ռիսկի նշանակությունը և բացահայտել 11-րդ հոդվածի համաձայն պահանջվող ցանկացած միջոց:

Ուստի, այդ բնութագրումը համապատասխան տեղեկություններ է ներառում մարդկային գործունեության ազդեցության, անհրաժեշտության դեպքում՝ նաև հետևյալի մասին՝

— ստորերկրյա ջրային մարմնի երկրաբանական բնութագրերը՝ ներառյալ երկրաբանական միավորների տարածվածությունը և տիպը.

— ստորերկրյա ջրային մարմնի հիդրոերկրաբանական բնութագրերը՝ ներառյալ հիդրավլիկական կապը, ծակոտկենությունը և սահմանափակությունը.

— այն ջրհավաք ավազանի մակերևութային նստվածքների և հողերի բնութագրերը, որտեղից ստորերկրյա ջրային մարմինը վերականգնվում է՝ ներառյալ դրանց հաստությունը, ծակոտկենությունը, հիդրավլիկական հաղորդականությունը, նստվածքների և հողերի կլանման հատկությունները.

— ստորերկրյա ջրային մարմնում ստորերկրյա ջրերի շերտավորման բնութագրերը.

— այն հարակից մակերևութային համակարգերի նաև ցամաքային էկոհամակարգերի և մակերևութային ջրային մարմինների գույքագրումը, որոնց հետ ստորերկրյա ջրային մարմինը գտնվում է դինամիկ կապի մեջ.

— ստորերկրյա ջրային մարմնի և հարակից մակերևութային համակարգերի միջև ջրափոխանակության ուղղությունների ու ծավալների հաշվարկումը.

— համընդհանուր վերականգնման երկարաժամկետ միջին տարեկան ծավալը հաշվարկելու համար բավարար տվյալները.

— ստորերկրյա ջրերի քիմիական բաղադրության բնութագրումը՝ ներառյալ մարդկային գործունեության դերի նկարագրությունը: Ստորերկրյա ջրային մարմինների բնական ֆոնային մակարդակները սահմանելիս անդամ պետությունները կարող են օգտվել ստորերկրյա ջրերի բնութագրման տիպաբանություններից:

2.3. Ստորերկրյա ջրերի վրա մարդկային գործունեության ազդեցության ուսումնասիրությունը

Ստորերկրյա ջրային մարմինների համար, որոնք հատում են երկու կամ ավելի անդամ պետությունների սահմանները կամ որոնք 2.1 պարբերությանը համապատասխան

իրականացված նախնական բնութագրմամբ, 4-րդ հոդվածում նշված նպատակները չիրականացնելու առումով համարվել են ռիսկային, անհրաժեշտության դեպքում, պետք է հավաքագրել և պահպանել հետևյալ տեղեկությունները՝

ա) ստորերկրյա ջրային մարմնում ջրառի համար օգտագործվող կետերի տեղը՝ բացառությամբ այն կետերի, որոնցից՝

— ջրառի միջին ծավալը օրական կտրվածքով չի գերազանցում 10 մ^3 , կամ

— մարդու սպառման համար նախատեսված ջրառի միջին ծավալը օրական կտրվածքով չի գերազանցում 10 մ^3 կամ սպասարկում է առավելագույնը 50 անձի,

բ) այդպիսի կետերից ջրառի միջին տարեկան ծավալը,

գ) ստորերկրյա ջրային մարմնից վերցված ջրի քիմիական բաղադրությունը,

դ) ստորերկրյա ջրային մարմնի այն կետերի տեղը, ուր ուղղակիորեն ջուր է արտահոսում,

ե) այդպիսի կետերում արտանետումների ծավալը,

զ) դեպի ստորերկրյա ջրային մարմին արտանետումների քիմիական բաղադրությունը,

է) հողօգտագործումն այն ջրհավաք ավազանում կամ ավազաններում, որոնցից ստորերկրյա ջրային մարմինը վերականգնվում է՝ ներառյալ աղտոտիչների ճնշումը և անտրոպոգեն փոփոխությունները վերականգնման բնութագրիչների վրա, ինչպես օրինակ՝ տեղումների և հոսքի ուղղորդում հողի մեկուսացման, արհեստական վերականգնման, պատվարների կամ դրենաժի միջոցով:

2.4. Ստորերկրյա ջրերի մակարդակների փոփոխությունների ազդեցության ուսումնասիրությունը

Անդամ պետությունները բացահայտում են նաև այն ստորերկրյա ջրային մարմինները, որոնց համար 4-րդ հոդվածի համաձայն պետք է սահմանել ավելի մեղմ պահանջներ՝ ջրային մարմնի վիճակի ազդեցությունները հետևյալի վրա հաշվի առնելու արդյունքում՝

ի) մակերևութային ջրեր և հարակից ցամաքային էկոհամակարգեր,

ii) ջրերի կարգավորում, ջրհեղեղներից պաշտպանություն և դրենաժ,

iii) մարդկային զարգացում:

2.5. Ստորերկրյա ջրերի որակի վրա աղտոտման ազդեցության ուսումնասիրությունը

Անդամ պետությունները բացահայտում են այն ստորերկրյա ջրային մարմինները, որոնց համար, 4(5) հոդվածի համաձայն, պետք է սահմանվեն առավել մեղմ պահանջներ, եթե մարդկային գործունեության ազդեցության արդյունքում, ինչպես սահմանված է 5(1) հոդվածին համապատասխան, ստորերկրյա ջրային մարմինն այնքան աղտոտված է, որ ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակի ապահովելն անիրատեսական է կամ կապված է անհամաչափ մեծ ծախսերի հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական վերլուծությունը պետք է պարունակի անհրաժեշտ մանրամասնության բավարար տեղեկություններ (հաշվի առնելով համապատասխան տվյալների հավաքագրման հետ կապված ծախսերը), որպեսզի հնարավոր լինի՝

ա) կատարել համապատասխան հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են՝ ջրային ոլորտի ծառայությունների ծախսերի ծածկման սկզբունքը 9-րդ հոդվածի համաձայն հաշվի առնելու համար՝ հիմք ընդունելով գետավազանային տարածքում ջրի առաջարկի ու պահանջարկի վերաբերյալ երկարաժամկետ կանխատեսումները, անհրաժեշտության դեպքում նաև՝

— ջրային ոլորտի ծառայությունների ծավալի, գների ու ծախսերի հաշվարկները, և

— համապատասխան ներդրումների հաշվարկներ՝ ներառյալ այդպիսի ներդրումների կանխատեսումները.

բ) եզրակացության հանգել 11-րդ հոդվածի համաձայն միջոցառումների ծրագրում ընդգրկվելիք՝ ջրօգտագործմանն առնչվող՝ ծախսերի տեսակետից առավել արդյունավետ գործողությունների շուրջ՝ հիմք ընդունելով այդ գործողությունների հնարավոր ծախսերի հաշվարկները:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՊԱՇՏՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

1. 6-րդ հոդվածով պահանջվող՝ պաշտպանվող տարածքների գրանցամատյանում ընդգրկվում են պաշտպանվող տարածքների հետևյալ տեսակները՝

i) մարդու սպառման համար օգտագործվող ջրառի համար նախատեսված տարածքներ՝ համաձայն 7-րդ հոդվածի.

ii) տնտեսության համար էական նշանակություն ունեցող ջրային տեսակների պաշտպանության համար նախատեսված տարածքներ.

iii) ռեկրեացիոն նպատակների համար նախատեսված ջրային մարմիններ, այդ թվում՝ 76/160/ԵՏՀ հրահանգով սահմանված տարածքներ, որոնք ունեն լողալու համար նախատեսված ջրեր.

iv) սննդանյութերի նկատմամբ զգայուն տարածքներ, այդ թվում՝ 91/676/ԵՏՀ հրահանգով խոցելի, իսկ 91/271/ԵՏՀ հրահանգով՝ զգայուն գոտիներ համարվող տարածքներ, և

v) բնական միջավայրերի կամ տեսակների պահպանության համար նախատեսված տարածքներ, եթե ջրերի վիճակի պահպանումը կամ բարելավումը կարևոր գործոն են դրանց պահպանության համար՝ ներառյալ 92/43/ԵՏՀ (35) և 79/409/ԵՏՀ (36) հրահանգների համաձայն նախատեսված Natura 2000 տարածքները:

2. Որպես գետավազանային կառավարման պլանի մաս պահանջվող գրանցամատյանի ամփոփումը ներառում է յուրաքանչյուր պաշտպանվող տարածքի տեղը նշող քարտեզներ և Համայնքի, ազգային կամ տեղական օրենսդրության նկարագրությունը՝ համաձայն որի դրանք սահմանվել են:

ՀԱՎԵԼՎԱԾ V

1. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՎԻՃԱԿԸ

1.1. Էկոլոգիական վիճակի դասակարգմանը ներկայացվող որակի տարրերը

1.1.1. Գետերը

1.1.2. Լճերը

1.1.3. Տարանցիկ ջրերը

1.1.4. Առափնյա ջրերը

1.1.5. Արհեստական և խիստ փոփոխված մակերևութային ջրային մարմինները

1.2. Էկոլոգիական վիճակի դասակարգումների նորմատիվ սահմանումները

1.2.1. Էկոլոգիական գերազանց, լավ և բավարար վիճակի սահմանումները գետերի համար

1.2.2. Էկոլոգիական գերազանց, լավ և բավարար վիճակի սահմանումները լճերի համար

1.2.3. Էկոլոգիական գերազանց, լավ և բավարար վիճակի սահմանումները տարանցիկ ջրերի համար

1.2.4. Էկոլոգիական գերազանց, լավ և բավարար վիճակի սահմանումներն առափնյա ջրերի համար

1.2.5. Առավելագույն, լավ և բավարար էկոլոգիական պոտենցիալի սահմանումները՝ խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմինների համար

1.2.6. Անդամ պետությունների կողմից քիմիական որակի ստանդարտներ սահմանելու կարգը

1.3. Մակերևութային ջրերի էկոլոգիական վիճակի և քիմիական վիճակի դիտանցումը

1.3.1. Վերահսկողական դիտանցման նախագծումը

1.3.2. Գործառնական դիտանցման նախագծումը

1.3.3. Հետազոտական դիտանցման նախագծումը

1.3.4. Դիտանցման հաճախականությունը

1.3.5. Պաշտպանվող տարածքների համար ներկայացվող լրացուցիչ դիտանցման պահանջները

1.3.6. Որակի տարրերի դիտանցման ստանդարտները

1.4. Էկոլոգիական վիճակի դասակարգումն ու ներկայացումը

1.4.1. Կենսաբանական դիտանցման արդյունքների համեմատելիությունը

1.4.2. Դիտանցման արդյունքների ներկայացումը և էկոլոգիական վիճակի ու էկոլոգիական պոտենցիալի դասակարգումը

1.4.3. Դիտանցման արդյունքների ներկայացումը և քիմիական վիճակի դասակարգումը

2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԸ

2.1. Ստորերկրյա ջրերի քանակական վիճակը

2.1.1. Քանակական վիճակի դասակարգմանը ներկայացվող պարամետրերը

2.1.2. Քանակական վիճակի սահմանումը

2.2. Ստորերկրյա ջրերի քանակական վիճակի դիտանցումը

2.2.1. Ստորերկրյա ջրերի մակարդակի դիտանցման ցանցը

2.2.2. Դիտանցման տեղանքների խտությունը

2.2.3. Դիտանցման հաճախականությունը

2.2.4. Ստորերկրյա ջրերի քանակական վիճակի մեկնաբանումն ու ներկայացումը

2.3. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակը

2.3.1. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի որոշմանը ներկայացվող պարամետրերը

2.3.2. Ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակի սահմանումը

2.4. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի դիտանցումը

2.4.1. Ստորերկրյա ջրերի դիտանցման ցանցը

2.4.2. Վերահսկողական դիտանցումը

2.4.3. Գործառնական դիտանցումը

2.4.4. Աղտոտիչներում նկատվող միտումների բացահայտումը

2.4.5. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի մեկնաբանումն ու ներկայացումը

2.5. Ստորերկրյա ջրերի վիճակի ներկայացումը

1. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՎԻՃԱԿԸ

1.1. Էկոլոգիական վիճակի դասակարգմանը ներկայացվող որակի տարրերը

1.1.1. Գետերը

Կենսաբանական տարրերը

Ջրային բուսականության կազմը և առատությունը

Բենթոսային անողնաշարավորների ֆաունայի կազմը և առատությունը

Ձկների ֆաունայի կազմը, առատությունը և տարիքային կառուցվածքը

Կենսաբանական տարրերին աջակցող հիդրոմորֆոլոգիական տարրերը

Հիդրոլոգիական ռեժիմը

Ջրի հոսքի ծավալը և դինամիկան

Կապը ստորերկրյա ջրային մարմինների հետ

Գետի շարունակականությունը

Կառուցվածքային (մորֆոլոգիական) պայմանները

Գետի խորության և լայնության տատանումը

Գետի հունի կառուցվածքը և հատակը

Առափնյա գոտու կառուցվածքը

Կենսաբանական տարրերին աջակցող քիմիական և ֆիզիկաքիմիական տարրերը

Ընդհանուր դրույթներ

Ջերմային պայմանները

Թթվաձնով հագեցվածության պայմանները

Աղայնությունը

Թթվայնության վիճակը

Սննդանյութերի պայմանները

Հատուկ աղտոտիչները

Աղտոտում բոլոր խիստ վտանգավոր նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին արտանետվող նյութեր

Աղտոտում այլ նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին զգալի քանակությամբ արտանետվող նյութեր

1.1.2. Լճերը

Կենսաբանական տարրերը

Ֆիտոպլանկտոնի կազմը, առատությունը և կենսազանգվածը

Այլ ջրային բուսականության կազմը և առատությունը

Բենթոսային անողնաշարավորների ֆաունայի կազմը և առատությունը

Ձկների ֆաունայի կազմը, առատությունը և տարիքային կառուցվածքը

Կենսաբանական տարրերին աջակցող հիդրոմորֆոլոգիական տարրերը

Հիդրոլոգիական ռեժիմը

Ջրի հոսքի ծավալը և դինամիկան

Մաքրման կայաններում կեղտաջրերի վերամշակման տևողությունը

Կապը ստորերկրյա ջրային մարմնի հետ

Կառուցվածքային (մորֆոլոգիական) պայմանները

Լճի խորության տատանումը

Լճի հունի ծավալը, կառուցվածքը և հատակը

Լճափի կառուցվածքը

Կենսաբանական տարրերին աջակցող քիմիական և ֆիզիկաքիմիական տարրերը

Ընդհանուր դրույթներ

Թափանցիկությունը

Ջերմային պայմանները

Թթվաձնով հագեցվածության պայմանները

Աղայնությունը

Թթվայնության վիճակը

Սննդանյութերի պայմանները

Հատուկ աղտոտիչները

Աղտոտում բոլոր խիստ վտանգավոր նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին արտանետվող նյութեր

Աղտոտում այլ նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին զգալի քանակությամբ արտանետվող նյութեր

1.1.3. Տարանցիկ ջրերը

Կենսաբանական տարրերը

Ֆիտոպլանկտոնի կազմը, առատությունը և կենսազանգվածը

Այլ ջրային բուսականության կազմը և առատությունը

Բենթոսային անողնաշարավորների ֆաունայի կազմը և առատությունը

Ձկների ֆաունայի կազմը և առատությունը

Կենսաբանական տարրերին աջակցող հիդրոմորֆոլոգիական տարրերը

Կառուցվածքային (մորֆոլոգիական) պայմանները

Խորության տատանումը

Հունի ծավալը, կառուցվածքը և հատակը

Մակընթացության-տեղատվության ամպլիտուդի գոտու կառուցվածքը

Մակընթացության-տեղատվության ամպլիտուդի ռեժիմը

Քաղցրահամ ջրերի հոսքը

Ալիքներից անպաշտպանվածությունը

Կենսաբանական տարրերին աջակցող քիմիական և ֆիզիկաքիմիական տարրերը

Ընդհանուր դրույթներ

Թափանցիկությունը

Ջերմային պայմանները

Թթվածնով հագեցվածության պայմանները

Աղայնությունը

Սննդանյութերի պայմանները

Հատուկ աղտոտիչները

Աղտոտում բոլոր խիստ վտանգավոր նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին արտանետվող նյութեր

Աղտոտում այլ նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին զգալի քանակությամբ արտանետվող նյութեր

1.1.4. Առափնյա ջրերը

Կենսաբանական տարրերը

Ֆիտոպլանկտոնի կազմը, առատությունը և կենսազանգվածը

Այլ ջրային ֆլորայի կազմը և առատությունը

Բենթոսային անողնաշարավորների ֆաունայի կազմը և առատությունը

Կենսաբանական տարրերին աջակցող հիդրոմորֆոլոգիական տարրերը

Կառուցվածքային (մորֆոլոգիական) պայմանները

Խորության տատանումը

Առափնյա հունի կառուցվածքը և հատակը

Մակընթացության-տեղատվության ամպլիտուդի գոտու կառուցվածքը

Մակընթացության-տեղատվության ամպլիտուդի ռեժիմը

Գերիշխող հոսանքների ուղղությունը

Ալիքներից անպաշտպանվածությունը

Կենսաբանական տարրերին աջակցող քիմիական և ֆիզիկաքիմիական տարրերը

Ընդհանուր դրույթներ

Թափանցիկությունը

Ջերմային պայմանները

Թթվաձնով հագեցվածության պայմանները

Աղայնությունը

Սննդանյութերի պայմանները

Հատուկ աղտոտիչները

Աղտոտում բոլոր խիստ վտանգավոր նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին արտանետվող նյութեր

Աղտոտում այլ նյութերից, որոնք բացահայտվել են որպես ջրային մարմին զգալի քանակությամբ արտանետվող նյութեր

1.1.5. Արհեստական և խիստ փոփոխված մակերևութային ջրային մարմինները

Արհեստական և խիստ փոփոխված մակերևութային ջրային մարմինների նկատմամբ կիրառվող որակի տարրերը պետք է լինեն այն տարրերը, որոնք մակերևութային ջրերի վերը նշված չորս կատեգորիաներից առավել մոտ են տվյալ խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմնի համար:

1.2. Էկոլոգիական վիճակի դասակարգումների նորմատիվ սահմանումները

Աղյուսակ 1.2. Գետերի, լճերի, փարանցիկ ջրերի և առափնյա ջրերի ընդհանուր սահմանումը

Տարր	Գերազանց վիճակ	Լավ վիճակ	Բավարար վիճակ
<p>Ընդհանուր դրույթներ</p>	<p>Մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի ֆիզիկաքիմիական և հիդրոմորֆոլոգիական որակի տարրերի արժեքներում գրանցվում է անտրոպոգեն փոփոխությունների բացակայություն կամ շատ ցածր մակարդակ, որը սովորաբար տվյալ տիպի ջրային մարմիններում նկատվում է չխախտված պայմաններում:</p> <p>Մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի կենսաբանական որակի տարրերի արժեքներն արտացոլում են այնպիսի տվյալներ, որոնք տվյալ տիպի մարմիններում սովորաբար նկատվում են չխախտված պայմաններում: Բացի դրանից այդ արժեքները ցույց են տալիս խախտումների բացակայություն կամ շատ ցածր մակարդակ:</p>	<p>Մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի կենսաբանական որակի տարրերի արժեքները ցույց են տալիս մարդկային գործունեության արդյունքում առաջացող խախտման ցածր մակարդակ, սակայն դրանք մի փոքր զիջում են չխախտված պայմաններում գտնվող մակերևութային ջրային մարմնի տիպին բնորոշ արժեքներին:</p>	<p>Մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի կենսաբանական որակի տարրերի արժեքները որոշակի չափով զիջում են չխախտված պայմաններում գտնվող մակերևութային ջրային մարմնի տիպին բնորոշ արժեքներին: Արժեքները ցույց են տալիս մարդկային գործունեության հետևանքով առաջացող խախտման լուրջ նշաններ, և դրանցում նկատվում են առավել էական խախտումներ՝ լավ վիճակում գտնվող մարմինների պայմանների համեմատ:</p>

Դրանք համարվում են տիպային պայմաններ և համախմբեր:		
--	--	--

Բավարարից ցածր վիճակում գտնվող ջրերը դասակարգվում են որպես անբավարար կամ վատ:

Մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի կենսաբանական որակի տարրերի արժեքներում էական փոփոխություններ ունեցող ջրային մարմինները, որոնցում համապատասխան կենսաբանական համախմբերը զգալիորեն զիջում են չխախտված պայմաններում գտնվող մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպին հատուկ կենսաբանական համախմբերին, դասակարգվում են որպես անբավարար:

Մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի կենսաբանական որակի տարրերի արժեքներում լուրջ փոփոխություններ ունեցող ջրային մարմինները, որոնցում չխախտված պայմաններում գտնվող մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպին հատուկ համապատասխան կենսաբանական համախմբերի զգալի մասը բացակայում է, դասակարգվում են որպես վատ:

1.2.1. Էկոլոգիական գերազանց, լավ և բավարար վիճակի սահմանումները գետերի համար

Կենսաբանական որակի տարրերը

Տարր	Գերազանց վիճակ	Լավ վիճակ	Բավարար վիճակ
Ֆիտոպլանկտոն	<p>Ֆիտոպլանկտոնի տաքսոնոմիական կազմն ամբողջովին կամ գրեթե ամբողջովին համապատասխանում է չխախտված պայմաններին:</p> <p>Ֆիտոպլանկտոնի միջին առատությունն ամբողջովին համապատասխանում է տիպային ֆիզիկաքիմիական պայմաններին և այնպիսին չէ, որ էապես փոփոխի տիպային թափանցիկության պայմանները:</p> <p>Նկատվում են պլանկտոնային ծաղկման երևույթներ տիպային ֆիզիկաքիմիական պայմաններին համապատասխան հաճախականությամբ և</p>	<p>Տիպային համախմբերի համեմատ՝ պլանկտոնային տաքսոնների կազմի և առատության մեջ կան աննշան փոփոխություններ: Նման փոփոխությունների հետևանքով չի նկատվում ջրիմուռների արագացված աճ, որի պատճառով տեղի են ունենում ջրային մարմնում առկա օրգանիզմների բալանսի կամ ջրի կամ նստվածքի ֆիզիկաքիմիական որակի անցանկալի խախտումներ:</p> <p>Մի փոքր կարող է աճել տիպային պլանկտոնային ծաղկման հաճախականությունն ու ինտենսիվությունը:</p>	<p>Պլանկտոնային տաքսոնների կազմը որոշակի չափով տարբերվում է տիպային համախմբերից:</p> <p>Առատությունը որոշակի չափով խախտված է և կարող է լինել այնպիսին, որ առաջացնի կենսաբանական ու ֆիզիկաքիմիական որակի այլ տարրերի արժեքների էական անցանկալի խախտում:</p> <p>Որոշակի չափով կարող է աճել տիպային պլանկտոնային ծաղկման հաճախականությունն ու ինտենսիվությունը: Ամռան ամիսների ընթացքում կարող են նկատվել կայուն ծաղկման երևույթներ:</p>

	ինտենսիվությամբ:		
<p>Մակրոֆիտներ և ֆիտոբենթոսի</p> <p>u</p>	<p>Տաքսոնոմիական կազմն ամբողջովին կամ գրեթե ամբողջովին համապատասխանում է չխախտված պայմաններին:</p> <p>Մակրոֆիտների և ֆիտոբենթոսի միջին առատության մեջ բացահայտ փոփոխություններ չկան:</p>	<p>Տիպային համախմբերի համեմատ մակրոֆիտների ու ֆիտոբենթոսի տաքսոնների կազմի և առատության մեջ կան աննշան փոփոխություններ: Նման փոփոխությունների հետևանքով չի նկատվում ֆիտոբենթոսի կամ բուսական կյանքի առավել բարձր ձևերի արագացված աճ, որի հետևանքով տեղի են ունենում ջրային մարմնում առկա օրգանիզմների բալանսի կամ ջրի կամ նստվածքի ֆիզիկաքիմիական որակի անցանկալի խախտումներ:</p> <p>Ֆիտոբենթոսի համախումբն անտրոպոգեն գործունեության հետևանքով առաջացող բակտերիալ խմբերի կողմից բացասական ազդեցությունների չի ենթարկվում:</p>	<p>Մակրոֆիտների և ֆիտոբենթոսի տաքսոնների կազմը որոշակի չափով տարբերվում է տիպային համախմբերից և էականորեն առավել խախտված է լավ վիճակում գտնվողների համեմատ:</p> <p>Մակրոֆիտների և ֆիտոբենթոսի միջին առատության մեջ նկատվում են որոշակի փոփոխություններ:</p> <p>Ֆիտոբենթոսի համախումբը կարող է խախտվել, իսկ որոշակի տարածքներում՝ փոխարինվել անտրոպոգեն գործունեության հետևանքով առաջացող բակտերիալ խմբերով:</p>
<p>Բենթոսային անողնաշար</p>	<p>Տաքսոնոմիական կազմն ու առատությունն ամբողջովին կամ</p>	<p>Տիպային համախմբերի համեմատ անողնաշարավորների տաքսոնների կազմի</p>	<p>Անողնաշարավորների տաքսոնների կազմը և առատությունը որոշակի չափով</p>

<p>ավորներ</p>	<p>գրեթե ամբողջովին համապատասխանում են չխախտված պայմաններին:</p> <p>Խախտման նկատմամբ զգայուն տաքսոնների հարաբերակցությունը ոչ զգայուն տաքսոններին չխախտված մակարդակներից խաթարման որևէ նշան ցույց չի տալիս:</p> <p>Անողնաշարավորների տաքսոնների բազմազանության մակարդակը չխախտված մակարդակներից խաթարման որևէ նշան ցույց չի տալիս:</p>	<p>և առատության մեջ կան աննշան փոփոխություններ:</p> <p>Խախտման նկատմամբ զգայուն տաքսոնների հարաբերակցությունը ոչ զգայուն տաքսոններին ցույց է տալիս աննշան խաթարումներ տիպային մակարդակներից:</p> <p>Անողնաշարավորների տաքսոնների բազմազանության մակարդակը ցույց է տալիս աննշան խաթարումներ տիպային մակարդակներից:</p>	<p>տարբերվում են տիպային համախմբերից:</p> <p>Բացակայում են տիպային համախմբերի հիմնական տաքսոնոմիական խմբերը:</p> <p>Խախտման նկատմամբ զգայուն տաքսոնների հարաբերակցությունը ոչ զգայուն տաքսոններին, ինչպես նաև բազմազանության մակարդակը զգալիորեն ցածր են տիպային մակարդակից և լավ վիճակի պայմաններից:</p>
<p>Ձկների ֆաունա</p>	<p>Տեսակների կազմը և առատությունն ամբողջովին կամ համարյա ամբողջովին համապատասխանում են չխախտված պայմաններին:</p> <p>Առկա են խախտման նկատմամբ</p>	<p>Տիպային համախմբերի համեմատ տեսակների կազմը և առատությունը ենթարկվում են թեթև փոփոխությունների, որոնք վերագրվում են ֆիզիկաքիմիական և հիդրոմորֆոլոգիական որակի տարրերի վրա</p>	<p>Տիպային համախմբերի համեմատ ձկնատեսակների կազմը և առատությունը որոշակի չափով տարբերվում են: Դա վերագրվում է ֆիզիկաքիմիական կամ հիդրոմորֆոլոգիական որակի տարրերի</p>

	<p>զգայուն բոլոր տիպային տեսակները:</p> <p>Ձկների խմբերի տարիքային կառուցվածքները ցույց են տալիս անտրոպոգեն խախտումների թույլ նշաններ և չեն մատնանշում որևէ կոնկրետ տեսակի վերարտադրության կամ զարգացման խաթարում:</p>	<p>անտրոպոգեն ազդեցություններին:</p> <p>Ձկների խմբերի տարիքային կառուցվածքները ցույց են տալիս խախտման նշաններ, որոնք վերագրվում են ֆիզիկաքիմիական կամ հիդրոմորֆոլոգիական որակի տարրերի վրա անտրոպոգեն ազդեցություններին, իսկ մի քանի դեպքերում մատնանշում են կոնկրետ տեսակների վերարտադրության կամ զարգացման խաթարում այն աստիճան, որ որոշակի տարիքային խմբեր կարող են վերանալ:</p>	<p>վրա անտրոպոգեն ազդեցություններին:</p> <p>Ձկների խմբերի տարիքային կառուցվածքը ցույց է տալիս անտրոպոգեն խախտումների լուրջ նշաններ այն աստիճան, որ տիպային տեսակների որոշակի մասը բացակայում է կամ առկա է շատ քիչ քանակությամբ:</p>
--	--	---	---

Հիդրոմորֆոլոգիական որակի տարրերը

Տարր	Գերազանց վիճակ	Լավ վիճակ	Բավարար վիճակ
Հիդրոլոգիական ռեժիմը	Հոսքի ծավալը և դինամիկան, ինչպես նաև դրա կապը ստորերկրյա ջրերի հետ ամբողջովին կամ գրեթե ամբողջովին	Կենսաբանական որակի տարրերի համար վերևում սահմանված արժեքներն ապահովելուն	Կենսաբանական որակի տարրերի համար վերևում սահմանված արժեքներն ապահովելուն

	արտահայտում են չխախտված պայմաններ:	համապատասխան պայմաններ:	համապատասխան պայմաններ:
Գետի շարունակականությունը	Գետի շարունակականությունը խախտված չէ անտրոպոգեն գործունեության հետևանքով և թույլ է տալիս ջրային օրգանիզմների անխախտ միգրացիա և նստվածքների տեղաշարժ:	Կենսաբանական որակի տարրերի համար վերևում սահմանված արժեքներն ապահովելուն համապատասխան պայմաններ:	Կենսաբանական որակի տարրերի համար վերևում սահմանված արժեքներն ապահովելուն համապատասխան պայմաններ:
Կառուցվածքային (մորֆոլոգիական) պայմանները	Ջրանցքի կառուցվածքը, լայնության ու խորության տատանումները, հոսքի արագությունը, հատակի պայմանները և առափնյա գոտիների կառուցվածքն ու պայմաններն ամբողջովին կամ գրեթե ամբողջովին համապատասխանում են չխախտված պայմաններին:	Կենսաբանական որակի տարրերի համար վերևում սահմանված արժեքներն ապահովելուն համապատասխան պայմաններ:	Կենսաբանական որակի տարրերի համար վերևում սահմանված արժեքներն ապահովելուն համապատասխան պայմաններ:

Ֆիզիկաքիմիական որակի տարրերը (1)

Տարր	Գերազանց վիճակ	Լավ վիճակ	Բավարար վիճակ
Կենսաբանական				
Ֆիտոպլանկտոն	6 ամիս	6 ամիս	6 ամիս	6 ամիս
Այլ ջրային բուսականություն	3 տարի	3 տարի	3 տարի	3 տարի
Մակրոանոդնաշարավորներ	3 տարի	3 տարի	3 տարի	3 տարի
Ձկներ	3 տարի	3 տարի	3 տարի	
Հիդրոմորֆոլոգիական				
Շարունակականություն	6 տարի			
Հիդրոլոգիա	շարունակական	1 ամիս		
Մորֆոլոգիա	6 տարի	6 տարի	6 տարի	6 տարի
Ֆիզիկաքիմիական				

Ջերմային պայմաններ	3 ամիս	3 ամիս	3 ամիս	3 ամիս
Թթվաձնային հագեցվածություն	3 ամիս	3 ամիս	3 ամիս	3 ամիս
Աղայնություն	3 ամիս	3 ամիս	3 ամիս	
Սննդանյութերի վիճակ	3 ամիս	3 ամիս	3 ամիս	3 ամիս
Թթվայնության վիճակ	3 ամիս	3 ամիս		
Այլ աղտոտիչներ	3 ամիս	3 ամիս	3 ամիս	3 ամիս
Խիստ վտանգավոր աղտոտիչներ	1 ամիս	1 ամիս	1 ամիս	1 ամիս

1.3.5. Պաշտպանվող տարածքների համար ներկայացվող լրացուցիչ դիտանցման պահանջները

Վերևում պահանջվող դիտանցման ծրագրերը լրացվում են հետևյալ պահանջները բավարարելու համար՝

Խմելու ջրի ջրառի կետերը

7-րդ հոդվածով նախատեսված՝ օրվա կտրվածքով միջինում ավելի, քան 100 մ³ ջուր մատակարարող մակերևութային ջրային մարմինները սահմանվում են որպես դիտանցման տեղանքներ և ենթարկվում են այնպիսի լրացուցիչ դիտանցման, որը կարող է անհրաժեշտ լինել՝ այդ հոդվածի պահանջները բավարարելու համար: Այդպիսի մարմիններում դիտանցում է իրականացվում արտանետվող խիստ վտանգավոր նյութերի և զգալի քանակությամբ արտանետվող բոլոր այլ նյութերի մասով, որոնք կարող են ազդել ջրային մարմնի վիճակի վրա և որոնք վերահսկվում են՝ համաձայն «Խմելու ջրի մասին» հրահանգի դրույթների: Դիտանցումն իրականացվում է ստորև սահմանված հաճախականություններով՝

Սպասարկվող համայնքը	Հաճախականություն
<10 000	տարեկան 4 անգամ

10 00030 000	տարեկան 8 անգամ
>30 000	տարեկան 12 անգամ

Բնակմիջավայրի և տեսակների պաշտպանության տարածքները

Այդ տարածքներում առկա ջրային մարմինները ներառվում են վերը նշված գործառնական դիտանցման ծրագրում, եթե, ազդեցության գնահատման ու վերահսկողական դիտանցման հիման վրա, դրանք համարվում են ռիսկային մարմիններ՝ 4-րդ հոդվածով սահմանված դրանց բնապահպանական նպատակները չիրականացնելու առումով:

Դիտանցումն իրականացվում է այդ մարմինների վրա համապատասխան բոլոր էական ճնշումների ծավալն ու ազդեցությունը և, անհրաժեշտության դեպքում, միջոցառումների ծրագրերի արդյունքում այդպիսի մարմինների վիճակում փոփոխությունները գնահատելու համար: Դիտանցումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև տարածքները բավարարում են դրանց նկատմամբ կիրառվող օրենսդրության՝ ջրերին առնչվող պահանջները և իրականացնում են 4-րդ հոդվածով սահմանված նպատակները:

1.3.6. Որակի տարրերի դիտանցման ստանդարտները

Տիպային պարամետրերի դիտանցման համար կիրառվող մեթոդները պետք է համապատասխանեն ստորև նշված միջազգային ստանդարտներին կամ նման այլ ազգային կամ միջազգային ստանդարտներին, որը կապահովի համարժեք գիտական որակի ու համեմատելիության մասին տվյալների տրամադրում:

Մակրոանոդնաշարավորների նմուշառումը

ԻՍՕ 5667-3-1995	Ջրի որակ. Նմուշառում. Մաս 3. Ցուցումներ նմուշների պահման և դրանց հետ վարման վերաբերյալ
ԵՆ 27828-1994	Ջրի որակ. Կենսաբանական նմուշառման մեթոդներ. Ցուցումներ բենթոսային անոդնաշարավորների որսացանցով նմուշառման մասին
ԵՆ 28265-1994	Ջրի որակ. Կենսաբանական նմուշառման մեթոդներ. Ցուցումներ

	ծանձաղ ջրերում քարքարոտ հատակների վրա բենթոսային մակրոանողնաշարավորների համար քանակական նմուշառման սարքերի նախագծման ու օգտագործման մասին
ԵՆ/ԻՍՕ 9391-1995	Ջրի որակ. Մակրոանողնաշարավորների նմուշառում խորը ջրերում. Ցուցումներ գաղութացման, որակական ու քանակական նմուշառման սարքերի օգտագործման մասին
ԵՆ/ԻՍՕ 8689-1-1999	Գետերի կենսաբանական դասակարգում. ՄԱՍ I. Ցուցումներ հոսող ջրերում բենթոսային մակրոանողնաշարավորների ուսումնասիրությունից ստացված կենսաբանական որակի տվյալների մեկնաբանման մասին
ԵՆ/ԻՍՕ 8689-2-1999	Գետերի կենսաբանական դասակարգում. ՄԱՍ II. Ցուցումներ հոսող ջրերում բենթոսային մակրոանողնաշարավորների ուսումնասիրությունից ստացված կենսաբանական որակի տվյալները ներկայացնելու մասին

Մակրոֆիտների նմուշառումը

Համապատասխան ՍԵԿ/ԻՍՕ ստանդարտներ՝ մշակումից հետո

Ձկների նմուշառումը

Համապատասխան ՍԵԿ/ԻՍՕ ստանդարտներ՝ մշակումից հետո

Դիատոմային ջրիմուռների նմուշառումը

Համապատասխան ՍԵԿ/ԻՍՕ ստանդարտներ՝ մշակումից հետո

Ֆիզիկաքիմիական պարամետրերի ստանդարտները

Ցանկացած համապատասխան ՍԵԿ/ԻՍՕ ստանդարտ

Հիդրոմորֆոլոգիական պարամետրերի ստանդարտները

Ցանկացած համապատասխան ՍԵԿ/ԻՍՕ ստանդարտ

1.4. Էկոլոգիական վիճակի դասակարգումն ու ներկայացումը

1.4.1. Կենսաբանական դիտանցման արդյունքների համեմատելիությունը

i) Անդամ պետությունները հաստատում են դիտանցման համակարգեր՝ մակերևութային ջրերի յուրաքանչյուր խմբի կամ մակերևութային ջրերի խիստ փոփոխված և արհեստական մարմինների համար սահմանված կենսաբանական որակի տարրերի արժեքները գնահատելու նպատակով: Ստորև սահմանված ընթացակարգը խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմինների նկատմամբ կիրառելի էկոլոգիական վիճակին հղումները պետք է մեկնաբանվեն որպես հղումներ էկոլոգիական պոտենցիալին: Այդպիսի համակարգերը կարող են օգտագործել կոնկրետ տեսակներ կամ տեսակների խմբեր, որոնք ընդհանուր առմամբ ներկայացնում են որակի տարրը:

ii) Այդպիսի դիտանցման համակարգերի համեմատելիությունն ապահովելու համար յուրաքանչյուր անդամ պետության կողմից գործարկվող համակարգերի արդյունքներն արտահայտվում են որպես էկոլոգիական որակի գործակիցներ՝ էկոլոգիական վիճակը դասակարգելու նպատակով: Այդ գործակիցները ներկայացնում են տվյալ մակերևութային ջրային մարմնի համար դիտարկված կենսաբանական պարամետրերի արժեքների և տվյալ մարմնի նկատմամբ կիրառելի բնականոն պայմաններում այդ պարամետրերի արժեքների հարաբերությունը: Գործակիցն արտահայտվում է թվային արժեքով՝ զրոյի և մեկի միջակայքում, որտեղ էկոլոգիական գերազանց վիճակի գործակիցն արտահայտվում է մեկին մոտ արժեքներով, իսկ էկոլոգիական վատ վիճակը՝ զրոյին մոտ արժեքներով:

iii) Յուրաքանչյուր անդամ պետություն մակերևութային ջրերի յուրաքանչյուր կատեգորիայի դիտանցման համակարգի համար էկոլոգիական որակի գործակիցների սանդղակը բաժանում է հինգ դասի՝ էկոլոգիական գերազանց վիճակից մինչև վատ վիճակ, ինչպես սահմանված է 1.2 բաժնում, և դասերի սահմանազատման յուրաքանչյուր սահմանագիծ արտահայտում որևէ թվային արժեքով: Գերազանց ու լավ վիճակի դասերը սահմանազատող սահմանագծի արժեքը, ինչպես նաև լավ ու բավարար վիճակը սահմանազատող սահմանագծի

արժեքը սահմանվում են ստորև նկարագրված մեթոդների ունիֆիկացման արդյունքների միջոցով:

iv) Հանձնաժողովն օժանդակում է այդ մեթոդների ունիֆիկացման իրականացմանը՝ ապահովելու համար, որ այդ դասային սահմանագծերը հաստատվեն 1.2 բաժնի նորմատիվ սահմանումներին համապատասխան և համեմատելի լինեն անդամ պետություններում:

v) Ունիֆիկացման գործողությունների ընթացքում Հանձնաժողովը նպաստում է անդամ պետությունների միջև տեղեկությունների փոխանակմանը, որի արդյունքում Համայնքի յուրաքանչյուր էկոտարածքում բացահայտվում են մի շարք տեղանքներ. այդ տեղանքները կկազմեն ունիֆիկացման ցանց: Ցանցը պետք է կազմվի յուրաքանչյուր էկոտարածքում գոյություն ունեցող մակերևութային ջրային մարմինների տեսակներից ընտրված տեղանքներից: Մակերևութային ջրային մարմնի ընտրված տեսակի համար ցանցը կազմվում է առնվազն երկու տեղանքից, որոնք համապատասխանում են գերազանց ու լավ վիճակի մասին նորմատիվ սահմանումների միջև ընկած սահմանագծին, և առնվազն երկու տեղանքից, որոնք համապատասխանում են լավ ու բավարար վիճակի նորմատիվ սահմանումների միջև ընկած սահմանագծին: Տեղանքների ընտրությունը կատարվում է համատեղ ստուգումների և առկա բոլոր այլ տեղեկությունների հիման վրա կայացված փորձագիտական եզրակացությամբ:

vi) Յուրաքանչյուր անդամ պետության կողմից գործարկվող դիտանցման համակարգը կիրառվում է ունիֆիկացման ցանցում ներառված այն տեղանքների նկատմամբ, որոնք գտնվում են էկոտարածքում և ներկայացնում են մակերևութային ջրային մարմնի այնպիսի տիպ, որի նկատմամբ համակարգը կկիրառվի սույն Հրահանգի պահանջներին համապատասխան: Այդ կիրառման արդյունքներն օգտագործվում են յուրաքանչյուր անդամ պետության կողմից գործարկվող դիտանցման համակարգի համապատասխան դասային սահմանագծերի համար թվային արժեքներ սահմանելու նպատակով:

vii) Ունիֆիկացման ցանց կազմելու համար Հանձնաժողովը կազմում է տեղանքների նախնական ցանկ: Տեղանքների վերջնական ցանկը հաստատվում է 21(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

viii) Հանձնաժողովը և անդամ պետություններն ունիֆիկացման աշխատանքներն ավարտում են վերջնական ցանկի հրապարակման ամսաթվին հաջորդող 18 ամիսների ընթացքում:

▼M2

ix) Ունիֆիկացման աշխատանքների արդյունքները և անդամ պետությունների կողմից գործարկվող դիտանցման համակարգի դասակարգումների համար (i)–(viii) կետերին համապատասխան սահմանված արժեքները, որոնք նաև նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը լրացումների միջոցով փոփոխելու համար, ընդունվում են 21(3) հոդվածում մանրամասնորեն նշված և ունիֆիկացման աշխատանքների ավարտից հետո վեց ամսվա ընթացքում հրապարակված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

1.4.2. Դիտանցման արդյունքների ներկայացումը և էկոլոգիական վիճակի ու էկոլոգիական պոտենցիալի դասակարգումը

i)

Էկոլոգիական վիճակի դասակարգում	Գունային ծածկագիր
Գերազանց	Կապույտ
Լավ	Կանաչ
Բավարար	Դեղին
Անբավարար	Նարնջագույն

Վատ	Կարմիր
-----	--------

ii)

Էկոլոգիական պոտենցիալի դասակարգում	Գունային ծածկագիր	
	Արհեստական ջրային մարմիններ	Խիստ փոփոխված
Լավ և ավելի բարձր	Կանաչ ու բաց մոխրագույն հավասար շերտեր	Կանաչ ու մուգ մոխրագույն հավասար շերտեր
Բավարար	Դեղին ու բաց մոխրագույն հավասար շերտեր	Դեղին ու մուգ մոխրագույն հավասար շերտեր
Անբավարար	Նարնջագույն ու բաց մոխրագույն հավասար շերտեր	Նարնջագույն ու մուգ մոխրագույն հավասար շերտեր
Վատ	Կարմիր ու բաց մոխրագույն հավասար շերտեր	Կարմիր ու մուգ մոխրագույն հավասար շերտեր

iii) Անդամ պետությունները քարտեզի վրա սև կետով նշում են այն ջրային մարմինները, որոնցում լավ վիճակ կամ էկոլոգիական լավ պոտենցիալ չապահովելու փաստը պայմանավորված է շրջակա միջավայրի որակի մեկ կամ մի քանի այնպիսի ստանդարտների հետ անհամապատասխանությամբ, որոնք տվյալ ջրային մարմնի նկատմամբ սահմանվել են կոնկրետ սինթետիկ և ոչ սինթետիկ աղտոտիչների

առնչությամբ (համաձայն անդամ պետության կողմից հաստատված համապատասխանության ռեժիմի):

1.4.3. Դիտանցման արդյունքների ներկայացումը և քիմիական վիճակի դասակարգումը

Եթե ջրային մարմինը կարողանում է համապատասխանել IX հավելվածի 16-րդ հոդվածով, ինչպես նաև շրջակա միջավայրի որակի ստանդարտներ սահմանող Համայնքի՝ համապատասխան այլ օրենսդրության համաձայն սահմանված շրջակա միջավայրի որակի բոլոր ստանդարտներին, ապա այն արձանագրվում է որպես քիմիական լավ վիճակ ապահովող ջրային մարմին: Հակառակ դեպքում, ջրային մարմինն արձանագրվում է որպես քիմիական լավ վիճակ չապահովող մարմին:

Քիմիական վիճակի դասակարգում	Գունային ծածկագիր
Լավ	Կապույտ
Լավ վիճակ չապահովող	Կարմիր

2. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԸ

2.1. Ստորերկրյա ջրերի քանակական վիճակը

2.1.1. Քանակական վիճակի դասակարգմանը ներկայացվող պարամետրերը

Ստորերկրյա ջրերի մակարդակի ռեժիմը

2.1.2. Քանակական վիճակի սահմանումը

Տարրեր	Լավ վիճակ
Ստորերկրյա ջրերի մակարդակ	<p>Ստորերկրյա ջրային մարմնում ստորերկրյա ջրերի մակարդակն այնպիսին է, որ ստորերկրյա ջրերի առկա ռեսուրսը չի գերազանցում երկարաժամկետ կտրվածքով ջրառի տարեկան միջին ծավալը:</p> <p>Համապատասխանաբար, ստորերկրյա ջրերի մակարդակը չի ենթարկվում այնպիսի անտրոպոգեն փոփոխությունների, որոնք կարող են հանգեցնել</p>

	<p>հետևյալին՝</p> <ul style="list-style-type: none"> — 4-րդ հոդվածով հարակից մակերևութային ջրերի համար սահմանված բնապահպանական նպատակների չիրականացում. — այդպիսի ջրերի վիճակի վատթարացում զգալի չափով. — ուղղակիորեն ստորերկրյա ջրային մարմնի կողմից զգալի վնասի պատճառում ցամաքային էկոհամակարգերին. <p>ջրի մակարդակի փոփոխությունների հետևանքով սահմանափակ տարածություններում կարող են տեղի ունենալ հոսքի ուղղության՝ ժամանակավոր կամ մշտական բնույթ կրող փոփոխություններ, սակայն դրանք չեն առաջացնում աղի ջրերի կամ այլնի ներհոսք և ցույց չեն տալիս հոսքի ուղղության՝ կայուն և հստակ բացահայտված անտրոպոգեն միտում, որի հետևանքով կարող են տեղի ունենալ այդպիսի ներհոսքի երևույթներ:</p>
--	---

2.2. Ստորերկրյա ջրերի քանակական վիճակի դիտանցումը

2.2.1. Ստորերկրյա ջրերի մակարդակի դիտանցման ցանցը

Ստորերկրյա ջրերի դիտանցման ցանցը ստեղծվում է 7-րդ և 8-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Դիտանցման ցանցը կազմվում է այնպես, որ այն ապահովի բոլոր ստորերկրյա ջրային մարմինների կամ մարմինների խմբերի քանակական վիճակի վստահելի գնահատում, ինչպես նաև՝ ստորերկրյա ջրերի առկա ռեսուրսի գնահատում: Անդամ պետությունները գետավազանային կառավարման պլանում ներկայացնում են ստորերկրյա ջրերի դիտանցման ցանցի քարտեզը կամ քարտեզները:

2.2.2. Դիտանցման տեղանքների խտությունը

Ցանցը ներառում է բավարար թվով առկա դիտանցման կետեր՝ յուրաքանչյուր ստորերկրյա ջրային մարմնում կամ մարմինների խմբում ստորերկրյա ջրերի մակարդակը որոշելու

համար՝ հաշվի առնելով վերականգնման կարճաժամկետ և երկարաժամկետ բնույթ կրող տատանումները և մասնավորապես՝

— 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական նպատակների չիրականացման առումով ռիսկային համարվող ստորերկրյա ջրային մարմինների համար ապահովել դիտանցման կետերի բավարար խտություն՝ ստորերկրյա ջրերի մակարդակի վրա ջրառի ու արտանետումների ազդեցությունը գնահատելու համար.

— այն ստորերկրյա ջրային մարմինների համար, որոնցում ստորերկրյա ջրերը հոսում են՝ հատելով որևէ անդամ պետության սահման, ապահովել բավարար թվով դիտանցման կետեր՝ անդամ պետության սահմանով հոսող ստորերկրյա ջրերի ուղղությունն ու ծավալը որոշելու համար:

2.2.3. Դիտանցման հաճախականությունը

Հետազոտությունները կատարվում են այնպիսի հաճախականությամբ, որ հնարավոր լինի իրականացնել յուրաքանչյուր ստորերկրյա ջրային մարմնի կամ մարմինների քանակական վիճակի գնահատում՝ հաշվի առնելով վերականգնման կարճաժամկետ և երկարաժամկետ բնույթ կրող տատանումները: Մասնավորապես՝ ^{<0>}

— 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական նպատակների չիրականացման առումով ռիսկային համարվող ստորերկրյա ջրային մարմինների համար ապահովել չափումների բավարար հաճախականություն՝ ստորերկրյա ջրերի մակարդակի վրա ջրառի ու արտանետումների ազդեցությունը գնահատելու համար.

— այն ստորերկրյա ջրային մարմինների համար, որոնցում ստորերկրյա ջրերը հոսում են՝ հատելով որևէ անդամ պետության սահման, ապահովել չափումների բավարար հաճախականություն՝ անդամ պետության սահմանով հոսող ստորերկրյա ջրերի ուղղությունն ու ծավալը որոշելու համար:

2.2.4. Ստորերկրյա ջրերի քանակական վիճակի մեկնաբանումն ու ներկայացումը

Ստորերկրյա ջրային մարմնի կամ մարմինների խմբի մասով դիտանցման ցանցից ստացված արդյունքներն օգտագործվում են տվյալ մարմնի կամ մարմինների քանակական վիճակը գնահատելու համար: Համաձայն 2.5 կետի՝ անդամ պետությունները ներկայացնում

են ստորերկրյա ջրերի քանակական վիճակի գնահատման քարտեզը, որը պետք է կողավորված լինի հետևյալ գունային ծածկագրերով՝

Լավ վիճակ՝ կանաչ

Անբավարար վիճակ՝ կարմիր

2.3. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակը

2.3.1. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի որոշմանը ներկայացվող պարամետրերը

Հաղորդականությունը

Աղտոտիչների կոնցենտրացիաները

2.3.2. Ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակի սահմանումը

Տարրեր	Լավ վիճակ
Ընդհանուր դրույթներ	<p>Ստորերկրյա ջրային մարմնի քիմիական բաղադրությունն այնպիսին է, որ աղտոտիչների կոնցենտրացիաները՝</p> <ul style="list-style-type: none">— ինչպես սահմանված է ներքևում, ցույց չեն տալիս աղային կամ այլ ներհոսքի ազդեցություններ.— չեն գերազանցում Համայնքի՝ համապատասխան այլ օրենսդրության համաձայն կիրառելի որակի ստանդարտները՝ 17-րդ հոդվածին համապատասխան.— չեն հանգեցնում 4-րդ հոդվածով՝ հարակից մակերևութային ջրերի համար սահմանված բնապահպանական նպատակների չիրականացման, կամ այդ մարմինների էկոլոգիական կամ քիմիական որակի զգալի չափով վատթարացման, կամ ցամաքային էկոհամակարգերին ուղղակիորեն ստորերկրյա ջրային մարմնի կողմից զգալի վնասի պատճառման:
Հաղորդականություն	Հաղորդականության փոփոխությունները չեն վկայում դեպի

2.4. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի դիտանցումը

2.4.1. Ստորերկրյա ջրերի դիտանցման ցանցը

Ստորերկրյա ջրերի դիտանցման ցանցը ստեղծվում է 7-րդ և 8-րդ հողվածների պահանջներին համապատասխան:

Դիտանցման ցանցը նախագծվում է այնպես, որ յուրաքանչյուր գետի ավազանի համար այն ներկայացնի ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի համալիր ու համապարփակ նկարագիրը և բացահայտի աղտոտիչների մեջ նկատվող այն աճող և երկարաճամկետ բնույթ կրող միտումները, որոնք անտրոպոգեն ծագում ունեն:

5-րդ հողվածին և II հավելվածին համապատասխան իրականացվող բնութագրման և ազդեցությունների գնահատման հիման վրա անդամ պետությունները գետավազանային կառավարման պլանի կիրառման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կազմում են վերահսկողական դիտանցման ծրագիր: Այդ ծրագրի արդյունքներն օգտագործվում են գործառնական դիտանցման ծրագիր կազմելու համար, որը պետք է կիրառվի պլանի իրականացման մնացած ժամանակահատվածում:

Պլանում ներկայացվում է դիտանցման ծրագրերի կողմից տրամադրված արդյունքների հուսալիության և ճշգրտության մակարդակի գնահատականը:

2.4.2. Վերահսկողական դիտանցումը

Նպատակը

Վերահսկողական դիտանցումն իրականացվում է հետևյալ նպատակներով՝

- ազդեցությունների գնահատման ընթացակարգի լրացում ու հաստատում.
- բնական պայմաններում տեղի ունեցող փոփոխությունների և անտրոպոգեն գործունեության հետևանքով երկարաժամկետ բնույթ կրող միտումների գնահատում իրականացնելու համար տեղեկությունների տրամադրում:

Դիտանցման տեղանքների ընտրությունը

Ստորև նշված յուրաքանչյուր ջրային մարմնի համար ընտրվում են բավարար թվով դիտանցման տեղանքներ՝

— II հավելվածին համապատասխան ձեռնարկված բնութագրման հետևանքով դիտանցման տեղանքները

— անդամ պետության սահմանը հատող ջրային մարմիններ:

Պարամետրերի ընտրությունը

Բոլոր ընտրված ստորերկրյա ջրային մարմիններում դիտանցվում է հիմնական պարամետրերի հետևյալ շարքը՝

— թթվածնի պարունակությունը

— pH արժեքը

— հաղորդականությունը

— նիտրատները

— ամոնիումը

II հավելվածին համապատասխան՝ լավ վիճակ չապահովելու առումով էական դիտանցման տեղանքները ջրային մարմիններ համարվող մարմինները նույնպես ենթարկվում են այդ ճնշումների գնահատման համար հատկանշական պարամետրերի հետ կապված դիտանցման:

Անդրսահմանային ջրային մարմինները նույնպես դիտանցվում են այն պարամետրերի մասով, որոնք առնչվում են ստորերկրյա ջրերի հոսքի բոլոր օգտագործումների պաշտպանությանը:

2.4.3. Գործառնական դիտանցումը

Նպատակը

Գործառնական դիտանցումն իրականացվում է վերահսկողական դիտանցման ծրագրերի միջև ընկած ժամանակահատվածներում հետևյալ նպատակներով՝

— ռիսկային համարվող բոլոր ստորերկրյա ջրային մարմինների կամ դրանց խմբերի քիմիական վիճակի որոշում.

— որևէ աղտոտիչի կոնցենտրացիայում՝ աճող և երկարաժամկետ բնույթ կրող անտրոպոգեն ծագման միտումների առկայության որոշում:

Դիտանցման տեղանքների ընտրությունը

Գործառնական դիտանցում իրականացվում է այն բոլոր ստորերկրյա ջրային մարմիններում, որոնք, ՈՍ հավելվածին համապատասխան իրականացված ազդեցության գնահատման և վերահսկողական դիտանցման հիման վրա, 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական նպատակները չիրականացնելու առումով համարվում են ռիսկային մարմիններ:

Դիտանցման տեղանքների ընտրությունը պետք է գնահատական տա, թե այդ տեղանքից ստացված դիտանցման տիպային տվյալները որքանով են համապատասխանում տվյալ ստորերկրյա ջրային մարմնի կամ մարմինների որակին:

Դիտանցման հաճախականությունը

Գործառնական դիտանցումն իրականացվում է վերահսկողական դիտանցման ծրագրերի միջև ընկած ժամանակահատվածներում և համապատասխան ճնշումների ազդեցությունները բացահայտելու համար բավարար հաճախականությամբ, սակայն առնվազն տարին մեկ անգամ:

2.4.4. Աղտոտիչներում նկատվող միտումների բացահայտումը

Անդամ պետությունները վերահսկողական ու գործառնական դիտանցման տվյալներն օգտագործում են աղտոտիչների կոնցենտրացիայում՝ աճող և երկարաժամկետ բնույթ կրող անտրոպոգեն ծագման միտումները բացահայտելու և դրանց հակադարձելու համար: Սահմանվում է այն բազային տարին կամ ժամանակահատվածը, որից սկսած պետք է հաշվարկվի միտման բացահայտումը: Միտումների հաշվարկումը ձեռնարկվում է մեկ ստորերկրյա ջրային մարմնի, իսկ անհրաժեշտության դեպքում, դրանց խմբերի մասով: Միտման հակադարձումը ցույց է տրվում վիճակագրական տվյալներով և նշված բացահայտման վստահության մակարդակով:

2.4.5. Ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի մեկնաբանումն ու ներկայացումը

Վիճակի գնահատում իրականացնելիս ստորերկրյա ջրային մարմնում առանձին դիտանցման կետերից ստացված արդյունքները տվյալ ջրային մարմնի համար ներկայացվում են որպես մեկ ամբողջություն: Չհակասելով համապատասխան հրահանգներին՝ ստորերկրյա ջրային մարմնի լավ վիճակ ապահովելու համար և Համայնքի օրենսդրությամբ սահմանված շրջակա միջավայրի որակի ստանդարտներին համապատասխան քիմիական պարամետրեր ձեռք բերելու առումով՝

— հաշվարկվում է ստորերկրյա ջրային մարմնում կամ այդպիսի մարմինների խմբում յուրաքանչյուր կետի դիտանցման արդյունքների միջին արժեքը.

— 17-րդ հոդվածին համապատասխան՝ այդ միջին արժեքներն օգտագործվում են ստորերկրյա ջրերի քիմիական լավ վիճակին համապատասխանություն ցույց տալու համար:

Համաձայն 2.5 կետի՝ անդամ պետությունները ներկայացնում են ստորերկրյա ջրերի քիմիական վիճակի քարտեզը, որը պետք է կողավորված լինի հետևյալ գունային ծածկագրերով՝

Լավ վիճակ՝ կանաչ

Անբավարար վիճակ՝ կարմիր

Անդամ պետությունները քարտեզի վրա սև կետով նշում են այն ստորերկրյա ջրային մարմինները, որոնք ենթակա են մարդկային գործունեության ազդեցության հետևանքով որևէ աղտոտիչի կոնցենտրացիայում՝ աճող ու կայուն էական միտումների: Հակառակ միտումը քարտեզի վրա նշվում է կապույտ կետով:

Նշված քարտեզները ներառվում են գետավազանային կառավարման պլանում:

2.5. Ստորերկրյա ջրերի վիճակի ներկայացումը

Անդամ պետությունները գետավազանային կառավարման պլանում ներկայացնում են 2.2.4 և 2.4.5 կետերի պահանջներին համապատասխան գունային կողավորմամբ քարտեզ, որում յուրաքանչյուր ստորերկրյա ջրային մարմնի կամ այդպիսի մարմինների խմբերի մասով ցույց է տրվում տվյալ մարմնի կամ խմբի քանակական ու քիմիական վիճակը:

Անդամ պետությունները կարող են չներկայացնել 2.2.4 և 2.4.5 կետերով պահանջվող առանձին քարտեզները, սակայն այդ դեպքում, 2.4.5 կետի պահանջներին համապատասխան, սույն կետով պահանջվող քարտեզի վրա նշում են այն մարմինները, որոնք ենթակա են որևէ ադտոտիչի կոնցենտրացիայում՝ աճող ու կայուն էական միտման կամ այդպիսի միտման մեջ որևէ փոփոխության:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

ՄԱՍ Ա

Հետևյալ հրահանգներով պահանջվող միջոցառումները՝

- i) «Լողալու ջրի մասին» հրահանգ (76/160/ԵՏՀ),
- ii) «Թռչունների մասին» հրահանգ (79/409/ԵՏՀ) (37),
- iii) «Խմելու ջրի մասին» հրահանգ (80/778/ԵՏՀ)՝ փոփոխված 98/83/ԵՀ հրահանգով,
- iv) «Խոշոր վթարների մասին (Սեվետո)» հրահանգ (96/82/ԵՀ) (38),
- v) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» հրահանգ (85/337/ԵՏՀ) (39),
- vi) «Կոյուղաջրերի տիղմի մասին» հրահանգ (86/278/ԵՏՀ) (40),
- vii) «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» հրահանգ (91/271/ԵՏՀ),
- viii) «Բույսերի պաշտպանության միջոցների մասին» հրահանգ (91/414/ԵՏՀ),
- ix) «Նիտրատների մասին» հրահանգ (91/676/ԵՏՀ),
- x) «Բնական միջավայրերի մասին» հրահանգ (92/43/ԵՏՀ) (41),
- xi) «Աղտոտման համատեղ կանխարգելման և վերահսկման մասին» հրահանգ (96/61/ԵՀ):

ՄԱՍ Բ

Ստորև ներկայացված է այն լրացուցիչ միջոցառումների ոչ ամբողջական ցանկը, որոնք անդամ պետությունները կարող են ընտրել յուրաքանչյուր գետավազանային տարածքում իրականացնելու համար՝ որպես 11(4) հոդվածով պահանջվող միջոցառումների ծրագրի մաս՝

- i) օրենսդրական փաստաթղթեր.
- ii) վարչական փաստաթղթեր.
- iii) տնտեսական կամ հարկաբյուջետային փաստաթղթեր

iv) բանակցությունների արդյունքում ընդունված բնապահպանական համաձայնագրեր

v) արտահոսքի նկատմամբ վերահսկողություն.

vi) պատշաճ գործելակերպի կանոններ.

vii) գերխոնավ տարածքների մելիորացիա և վերականգնում.

viii) ջրառի նկատմամբ վերահսկողություն.

ix) պահանջարկի կառավարման միջոցառումներ՝ այդ թվում հարմարեցված գյուղատնտեսական արտադրության խթանում, ինչպես օրինակ՝ երաշտից տուժած տարածքներում այնպիսի մշակաբույսերի աճեցումը, որոնք քիչ քանակությամբ ջուր են պահանջում.

x) արդյունավետություն և կրկնակի օգտագործում ապահովող միջոցառումներ, այդ թվում՝ արդյունաբերության մեջ ջրի արդյունավետ օգտագործում ապահովող տեխնոլոգիաների և ջուր խնայող ոռոգման համակարգերի խթանում.

xi) շինարարական նախագծեր.

xii) աղազերծման գործարաններ.

xiii) վերականգնման ծրագրեր.

xiv) ջրատար հորիզոնների արհեստական վերականգնում.

xv) կրթական ծրագրեր.

xvi) գիտահետազոտական, փորձարարական և ցուցադրական ծրագրեր

xvii) այլ համապատասխան միջոցներ:

ԳԵՏԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ

Ա. Գետավազանային կառավարման պլանները պետք է ներառեն հետևյալ տարրերը՝

1. գետավազանային տարածքի բնութագրման ընդհանուր նկարագիր՝ համաձայն 5-րդ հոդվածի և II հավելվածի պահանջների: Այն պետք է ներառի՝

1.1. մակերևութային ջրերի համար՝

— ջրային մարմինների տեղանքի և սահմանների քարտեզագրում.

— գետավազանային տարածքում էկոտարածաշրջանների և մակերևութային ջրային մարմնի տեսակների քարտեզագրում.

— մակերևութային ջրային մարմինների տեսակների բնականոն պայմանների նույնականացում.

1.2. ստորերկրյա ջրերի համար՝

— ստորերկրյա ջրային մարմինների տեղանքի և սահմանների քարտեզագրում.

2. մակերևութային և ստորերկրյա ջրերի վիճակի վրա մարդկային գործունեության էական ճնշումների և ազդեցությունների ամփոփում, այդ թվում՝

— կետային աղտոտման աղբյուրների գնահատում.

— ցրված աղտոտման աղբյուրների գնահատում՝ ներառյալ հողօգտագործման ամփոփումը.

— ջրի քանակական վիճակի վրա ճնշումների գնահատում՝ ներառյալ ջրառը.

— ջրի վիճակի վրա մարդկային գործունեության այլ ազդեցությունների վերլուծություն.

3. պահպանվող տարածքների նույնականացում և քարտեզագրում, ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածով և IV հավելվածով.

4. դիտանցման ցանցերի քարտեզ, որը կազմվել է 8-րդ հոդվածի և V հավելվածի նպատակներով, ինչպես նաև դիտանցման ծրագրերի արդյունքների ներկայացում

քարտեզի տեսքով, ինչն իրականացվում է հետևյալի վիճակի վերաբերյալ դրույթների համաձայն՝

4.1. մակերևութային ջրեր (էկոլոգիական և քիմիական).

4.2. ստորերկրյա ջրեր (քիմիական և քանակական).

4.3. պահպանվող տարածքներ.

5. մակերևութային ջրերի, ստորերկրյա ջրերի և պահպանվող տարածքների համար 4-րդ հոդվածով սահմանված բնապահպանական նպատակների ցանկը՝ ներառյալ, մասնավորապես, 4(4), (5), (6) և (7) հոդվածի կիրառության և այդ հոդվածով պահանջվող հարակից տեղեկությունների օգտագործման դեպքերի նույնականացումը.

6. 5-րդ հոդվածով և III հավելվածով պահանջվող՝ ջրօգտագործման տնտեսական վերլուծության ամփոփում.

7. 11-րդ հոդվածի համաձայն ընդունված միջոցառումների ծրագրի կամ ծրագրերի ամփոփում՝ ներառյալ այն ուղիները, որոնց միջոցով իրականացվում են 4-րդ հոդվածով սահմանված նպատակները.

7.1. Ջրերի պաշտպանության մասին Համայնքի օրենսդրության կիրարկման համար պահանջվող միջոցառումների ամփոփում.

7.2. 9-րդ հոդվածին համապատասխան ջրօգտագործման ծախսերը ծածկելու սկզբունքի կիրառման ուղղությամբ ձեռնարկված գործնական քայլերի և միջոցառումների մասին հաշվետվություն.

7.3. 7-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար ձեռնարկված միջոցառումների ամփոփում.

7.4. ջրառի ու ջրերի ամբարման նկատմամբ վերահսկողության ամփոփում, այդ թվում՝ հղում այնպիսի դեպքերի ցանկերին ու բացահայտումներին, որոնց նկատմամբ բացառություններ են կիրառվել՝ համաձայն 11(3)(ե) հոդվածի.

7.5. ջրի վիճակի վրա ազդեցություն գործող արտանետումների կետային աղբյուրների և այլ գործողությունների մասով՝ 11(3)(է) և 11(3)(թ) հոդվածի դրույթներին համապատասխան ձեռնարկված ստուգումների ամփոփում.

7.6. այնպիսի դեպքերի բացահայտում, երբ դեպի ստորերկրյա ջրեր ուղղակի արտանետումները թույլատրվել են 11(3)(ժ) հոդվածի դրույթներին համապատասխան.

7.7. խիստ վտանգավոր նյութերի նկատմամբ՝ 16-րդ հոդվածին համապատասխան ձեռնարկված միջոցառումների ամփոփում.

7.8. վթարային աղտոտման դեպքերի ազդեցությունը կանխելուն կամ նվազեցնելուն ուղղված միջոցառումների ամփոփում.

7.9. 11(5) հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցառումների ամփոփում այնպիսի ջրային մարմինների համար, որոնք, ամենայն հավանականությամբ, 4-րդ հոդվածով սահմանված նպատակները չեն իրականացնում.

7.10. սահմանված բնապահպանական նպատակների իրականացման համար անհրաժեշտ համարվող լրացուցիչ միջոցառումների մանրամասները.

7.11. 11(6) հոդվածին համապատասխան՝ ծովային ջրերի աղտոտման աճից խուսափելու համար ձեռնարկված միջոցառումների մանրամասները.

8. կոնկրետ ենթաավազաններին, ոլորտներին, հարցերին կամ ջրային տիպերին առնչվող առավել մանրամասն ծրագրեր ու գետավազանային տարածքի կառավարման պլաններ, ինչպես նաև դրանց բովանդակության ամփոփում.

9. հանրային տեղեկատվության ու խորհրդատվության համար ձեռնարկված միջոցառումների ամփոփում, դրանց արդյունքները և որպես հետևանք՝ պլանում կատարված փոփոխությունները.

10. իրավասու մարմինների ցանկը՝ I հավելվածին համապատասխան.

11. 14(1) հոդվածում նշված հիմնական փաստաթղթերի ու տեղեկությունների ձեռքբերման համար համակարգողներն ու ընթացակարգերը, մասնավորապես 11(3)(է) և 11(3)(թ) հոդվածներին համապատասխան ընդունված հսկողության միջոցների ու 8-րդ

հողվածին և V հավելվածին համապատասխան հավաքված դիտանցման փաստացի տվյալների մանրամասները:

Բ. Գետավազանային կառավարման պլանի առաջին թարմացված տարբերակն ու թարմացված հաջորդ տարբերակները ներառում են հետևյալը՝

1. գետավազանային կառավարման պլանի նախորդ տարբերակի հրապարակումից հետո կատարված բոլոր փոփոխությունների կամ թարմացումների, այդ թվում՝ 4(4), (5), (6) և (7) հոդվածին համապատասխան իրականացված վերանայումների ամփոփում.

2. բնապահպանական նպատակների իրականացման առումով արձանագրված առաջընթացի գնահատում, այդ թվում՝ նախորդ պլանի իրականացման ժամանակահատվածի դիտանցման արդյունքների ներկայացում քարտեզի տեսքով և բացատրություն՝ ցանկացած չիրականացված բնապահպանական նպատակի համար.

3. գետավազանային կառավարման պլանի նախորդ տարբերակում իրականացվելու համար նախատեսված, սակայն չձեռնարկված ցանկացած միջոցառման ամփոփում և բացատրություն.

4. գետավազանային կառավարման պլանի նախորդ տարբերակի հրապարակումից հետո 11(5) հոդվածի համաձայն ընդունված բոլոր լրացուցիչ միջանկյալ միջոցառումների ամփոփում:

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՏՈՏԻՉՆԵՐԻ ՄՈՏԱՎՈՐ ՑԱՆԿԸ

1. Օրգանահալոգեն միացություններ և նյութեր, որոնք ջրային միջավայրում կարող են կազմել նման միացություններ:
2. Օրգանաֆոսֆորային միացություններ:
3. Օրգանաարճային միացություններ:
4. Նյութերը և պատրաստուկները կամ դրանց մնացորդները, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկությունների կամ այնպիսի հատկությունների առկայությունը, որոնք ջրային միջավայրում կամ դրա միջոցով կարող են ազդել ստերոիդածին/ստերոիդ հորմոններ արտազատող, վահանագեղձի, վերարտադրողական կամ ներզատիչ (էնդոկրին) համակարգի այլ ֆունկցիաների վրա:
5. Կայուն ածխաջրածիններ և կայուն ու կենսակուտակման հատկանիշով օժտված օրգանական թունավոր նյութեր:
6. Յիանիդներ:
7. Մետաղներ և դրանց միացությունները:
8. Մկնդեղ և դրա միացությունները:
9. Բիոցիդներ և բույսերի պաշտպանության միջոցներ:
10. Սուսպենզիայի տեսքով նյութեր:
11. Նյութեր, որոնք նպաստում են ճահճացմանը (մասնավորապես՝ նիտրատներ և ֆոսֆատներ):
12. Նյութեր, որոնք անբարենպաստ ազդեցություն ունեն թթվածնային բալանսի վրա (և կարող են չափվել այնպիսի պարամետրերով, ինչպիսիք են ԹԿՊ-ն (թթվածնի կենսաքիմիական պահանջը), ԹՔՊ-ն (թթվածնի քիմիական պահանջը) և այլն):

ՀԱՎԵԼՎԱԾ IX

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՐԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

Սույն Հրահանգի նպատակներով՝ 76/464/ԵՏՀ հրահանգի ածանցյալ հրահանգներով սահմանված «սահմանային թույլատրելի չափանիշներ» և «որակի նպատակային ցուցանիշներ» եզրույթները պետք է համապատասխանաբար ընկալվեն որպես սահմանային թույլատրելի արտահոսքի չափանիշներ և շրջակա միջավայրի որակի ստանդարտներ: Դրանք սահմանված են հետևյալ հրահանգներում՝

- i) «Սնդիկի արտանետումների մասին» հրահանգ (82/176/ԵՏՀ) (42),
- ii) «Կադմիումի արտանետումների մասին» հրահանգ (83/513/ԵՏՀ) (43),
- iii) «Սնդիկի մասին» հրահանգ (84/156/ԵՏՀ) (44),
- iv) «Հեքսաքլորոցիկլոհեքսանի արտանետումների մասին» հրահանգ (84/491/ԵՏՀ) (45)
և
- v) «Վտանգավոր նյութերի արտանետումների մասին» հրահանգ (86/280/ԵՏՀ) (46):

▼M3

ՀԱՎԵԼՎԱԾ X

ՋՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԽԻՍՏ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

Թիվը	ՔՆՀԾ համարը (1)	ԵՄ համարը (2)	Խիստ վտանգավոր նյութերի անունը (3)	Ճանաչված է որպես խիստ վտանգավոր նյութ
(1)	15972-60-8	240-110-8	Ալաքլոր	
(2)	120-12-7	204-371-1	Անտրացեն	X
(3)	1912-24-9	217-617-8	Ատրազին	
(4)	71-43-2	200-753-7	Բենզոլ	
(5)	չի կիրառվում	չի կիրառվում	Բրոմացված դիֆենիլեթեր (4)	X (5)
	32534-81-9	չի կիրառվում	Պենտաբրոմոդիֆենիլեթեր (միևնույն դասին պատկանող նյութերի համարները 28, 47, 99, 100, 153 և 154)	
(6)	7440-43-9	231-152-8	Կադմիում և դրա միացությունները	X
(7)	85535-84-8	287-476-5	Քլորալկաններ C ₁₀₋₁₃ (4)	X
(8)	470-90-6	207-432-0	Քլորֆենվինֆոս	
(9)	2921-88-2	220-864-4	Քլորպիրիֆոս (Քլորպիրիֆոս-էթիլ)	
(10)	107-06-2	203-458-1	1,2-դիքլորէթան	
(11)	75-09-2	200-838-9	Դիքլորմեթան	
(12)	117-81-7	204-211-0	Դի (2-էթիլհեքսիլ) ֆտալատ (DEHP)	

(13)	330-54-1	206-354-4	Դիուրոն	
(14)	115-29-7	204-079-4	Էնդոսուլֆան	X
(15)	206-44-0	205-912-4	Ֆլուորանտեն (6)	
(16)	118-74-1	204-273-9	Հեքսաքլորոբենզին	X
(17)	87-68-3	201-765-5	Հեքսաքլորոբութադին	X
(18)	608-73-1	210-158-9	Հեքսաքլորոցիկլոհեքսան	X
(19)	34123-59-6	251-835-4	Իզոպրոտուրոն	
(20)	7439-92-1	231-100-4	Կապար և դրա միացությունները	
(21)	7439-97-6	231-106-7	Սնդիկ և դրա միացությունները	X
(22)	91-20-3	202-049-5	Նավթալին	
(23)	7440-02-0	231-111-14	Նիկել և դրա միացությունները	
(24)	25154-52-3	246-672-0	Նոնիլֆենոլ	X
	104-40-5	203-199-4	(4-նոնիլֆենոլ)	X
(25)	1806-26-4	217-302-5	Օկտիլֆենոլ	
	140-66-9	չի կիրառվում	(4-(1,1',3,3'-տետրամեթիլբութիլ)-ֆենոլ)	
(26)	608-93-5	210-172-5	Պենտաքլորոբենզոլ	X
(27)	87-86-5	231-152-8	Պենտաքլորոֆենոլ	
(28)	չի կիրառվում	չի կիրառվում	Բազմացիկլային արոմատիկ ածխաջրածիններ	X

	50-32-8	200-028-5	(Բենզո(ա)պիրեն)	X
	205-99-2	205-911-9	(Բենզո(b)ֆլուորանտեն)	X
	191-24-2	205-883-8	(Բենզո(g,h,i)պերիլեն)	X
	207-08-9	205-916-6	(Բենզո(k)ֆլուորանտեն)	X
	193-39-5	205-893-2	(Իդենո (1,2,3-cd)պիրեն)	X
(29)	122-34-9	204-535-2	Սիմազին	
(30)	չի կիրառվում	չի կիրառվում	Տրիբուֆիլտինի միացություններ	X
	36643-28-4	չի կիրառվում	(Տրիբուֆիլտին–կատիոն)	X
(31)	12002-48-1	234-413-4	Տրիքլորոբենզոլ	
(32)	67-66-3	200-663-8	Տրիքլորոմեթան (քլորոֆորմ)	
(33)	1582-09-8	216-428-8	Տրիֆլուրալին	

1) (ՔՆՀՆԾ)՝ Քիմիական նյութերի հակիրճ նկարագրության ծառայություն:

2) ԵՄ համարը՝ Գոյություն ունեցող առևտրային քիմիական նյութերի եվրոպական ցանկ (Einecs) կամ Գրանցված քիմիական նյութերի եվրոպական ցանկ (Elincs):

3) Եթե նյութերի խմբերն ընտրվել են, ապա բնորոշ առանձին ներկայացուցիչները նշվում են որպես հատկանշական պարամետրեր (փակագծերում և առանց համարի): Նյութերի այդ խմբերի համար հատկանշական պարամետրերը որոշվում են վերլուծական մեթոդով:

4) Նյութերի այդ խմբերը սովորաբար զգալի թվով ինքնուրույն բաղադրիչներ են պարունակում: Ներկայումս հատկանշական պատշաճ պարամետրեր տալն անհնար է:

5) Միայն Պենտաբրոմոբիֆենիլեթեր (ՔՆՀՆԾ համարը՝32534-81-9):


6) Ֆլուորանտենը ցանկում նշված է որպես ավելի վտանգավոր բազմացիկլային արոմատիկ ածխաջրածինների ցուցիչ:

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ XI

Քարտեզ Ա

Համակարգ Ա. Գետերի և լճերի էկոտարածաշրջանները





1. Իբերական–Մակարոնեզյան շրջան
2. Պիրենեյներ
3. Իտալիա, Կորսիկա և Մալթա
4. Ալպեր
5. Դինարական Արևմտյան Բալկաններ

6. Հելլենական Արևմտյան Բալկաններ
7. Արևելյան Բալկաններ
8. Արևմտյան բարձրադիր գոտիներ
9. Կենտրոնական բարձրադիր գոտիներ
10. Կարպատներ
11. Հունգարական ցածրադիր գոտիներ
12. Պոնտական տարածաշրջան
13. Արևմտյան հարթավայրեր
14. Կենտրոնական հարթավայրեր
15. Բալթյան տարածաշրջան
16. Արևելյան հարթավայրեր
17. Իռլանդիա և Հյուսիսային Իռլանդիա
18. Մեծ Բրիտանիա
19. Իսլանդիա
20. Հյուսիսային բարձրադիր գոտիներ
21. Տունդրա
22. Ֆիննասկանդինավյան շրջան
23. Տայգա
24. Կովկաս
25. Մերձկասպյան ցածրավայր

Քարտեզ Բ

Համակարգ Ա. Տարանցիկ ջրերի և առափնյա ջրերի էկոտարածաշրջանները



1. Ատլանտյան օվկիանոս
2. Նորվեգական ծով
3. Բարենցի ծով
4. Հյուսիսային ծով

5. Բալթիկ ծով

6. Միջերկրական ծով

(1) ՊՏ C 184, 17.06.1997թ., էջ 20: ՊՏ C 16, 20.01.1998թ., էջ 14 և ՊՏ C 108, 7.04.1998թ., էջ 94:

(2) ՊՏ C 355, 21.11.1997թ., էջ 83:

(3) ՊՏ C 180, 11.06.1998թ., էջ 38:

(4) 1999 թվականի սեպտեմբերի 16-ին հաստատված՝ Եվրոպական պառլամենտի 1999 թվականի փետրվարի 11-ի եզրակացություն (ՊՏ C 150, 28.05.1999թ., էջ 419) և Խորհրդի 1999 թվականի հոկտեմբերի 22-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 343, 30.11.1999թ., էջ 1): Եվրոպական պառլամենտի 2000 թվականի սեպտեմբերի 7-ի որոշում և Խորհրդի 2000 թվականի սեպտեմբերի 14-ի որոշում:

(5) ՊՏ C 209, 9.08.1988թ., էջ 3:

(6) ՊՏ C 59, 6.03.1992թ., էջ 2:

(7) ՊՏ C 49, 28.02.1995թ., էջ 1:

(8) ՊՏ L 20, 26.01.1980թ., էջ 43: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):

(9) ՊՏ C 355, 25.11.1996թ., էջ 1:

(10) ՊՏ C 281, 26.09.1996թ., էջ 3:

(11) ՊՏ L 73, 16.03.1994թ., էջ 19:

(12) ՊՏ L 104, 3.04.1998թ., էջ 1:

(13) ՊՏ L 240, 19.09.1977թ., էջ 1:

(14) ՊՏ L 67, 12.03.1983թ., էջ 1:

(15) ՊՏ L 186, 5.08.1995թ., էջ 42:

(16) ՊՏ L 229, 30.08.1980թ., էջ 11: 98/83/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 330, 5.12.1998թ. էջ 32):

(17) ՊՏ C 184, 17.07.1999թ., էջ 23:

(18) ՊՏ L 129, 18.05.1976թ., էջ 23: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):

(19) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26:

(20) ՊՏ L 135, 30.05.1991թ., էջ 40: Հանձնաժողովի 98/15/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 67, 7.03.1998թ., էջ 29):

(21) ՊՏ L 375, 31.12.1991թ., էջ 1:

(22) ՊՏ L 140, 5.06.2009թ., էջ 114:

(23) ՊՏ L 84, 5.04.1993թ., էջ 1:

- (24) ՊՏ L 230, 19.08.1991թ., էջ 1: 98/47/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 191, 7.07.1998թ. էջ 50):
- (25) ՊՏ L 123, 24.04.1998թ., էջ 1:
- (26) ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 26: 91/692/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- (27) ՊՏ L 334, 24.12.1977թ., էջ 29: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- (28) ՊՏ L 271, 29.10.1979թ., էջ 44: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- (29) ՊՏ L 222, 14.08.1978թ., էջ 1: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- (30) ՊՏ L 281, 10.11.1979թ., էջ 47: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ:
- (31) ՊՏ L 135, 30.05.1991թ., էջ 40: 98/15/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 67, 7.03.1998թ. էջ 29):
- (32) ՊՏ L 31, 5.02.1976թ., էջ 1: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
- (33) ՊՏ L 281, 10.11.1979թ., էջ 47: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):
- (34) ՊՏ L 375, 31.12.1991թ., էջ 1:
- (35) ՊՏ L 206, 22.07.1992թ., էջ 7: 97/62/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 305, 8.11.1997թ., էջ 42):
- (36) ՊՏ L 103, 25.04.1979թ., էջ 1: 97/49/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 223, 13.08.1997թ. էջ 9):
- (37) ՊՏ L 103, 25.04.1979թ., էջ 1:
- (38) ՊՏ L 10, 14.01.1997թ., էջ 13:
- (39) ՊՏ L 175, 5.07.1985թ., էջ 40: 97/11/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 73, 14.03.1997թ., էջ 5):
- (40) ՊՏ L 181, 8.07.1986թ., էջ 6:
- (41) ՊՏ L 206, 22.07.1992թ., էջ 7:
- (42) ՊՏ L 81, 27.03.1982թ., էջ 29:
- (43) ՊՏ L 291, 24.10.1983թ., էջ 1:
- (44) ՊՏ L 74, 17.03.1984թ., էջ 49:
- (45) ՊՏ L 274, 17.10.1984թ., էջ 11:
- (46) ՊՏ L 181, 4.07.1986թ., էջ 16: